


Puqari

8
1978



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱՍՏԵՂ	Նամակ՝ Կ. Մասունիի
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Շարական այլակերպութեան
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Կորուսած փամփոշալը
Վ. ԹԵՔԵԱՆ	Զրոյց Ա. Տէր Յարութիւնեանի հետ
Ա. ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Ինձի կը պատմեն
» » »	Մեծ-հայր
» » »	Ուրնօրեայ մահացում (Թարգմ. Վ. Թեքեան)
* * *	«Զարեցի ձեռագրերի աշխարհում» և աշխարհէն հեռու
Ա. ԶԱՐԵՆՅ	Զարեցի ձեռագրերի աշխարհում
Ն. ԶԱՐԵՆՈՒՏԵԱՆ	Կինը՝ գրականութեան սատանան եւ հրեշտակը
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Մաղրէպեան գրականութեան հոլովոյթը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Բ. Փափագեանի «Թատերադրութեան արտեսալը»
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Հ. Էդոյեանի «Անդրադարձումներ»ը
Հ. ԷՂՈՅԵԱՆ	Յերեկային խօսքեր
* * *	Նշմարներ
* * *	Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՅԵՐՈ, ՔԻՒ Տ

ՕՒՈՍՏՈՍ

1978

ԳԼՅԲՈՒԹ

Անցեալ տարի, այս ամսոյն 11ին մեռաւ «Բազմ»-ի հիմնադիրներէն եւ շարք տասնամեակ մը անոր վարիչ խմբագրի պաշտօնը վարած Կարօ Սասունի:

Ի յուշ իր գործին ու անձին, ստորեւ կը ներկայացնենք իրեն ուղղուած Համատեղի անտիպ երկու նամակներէն մէկը, երկրորդը վերապահեղով յաջորդ քիւիւն:

ՍԻՐԵԼԻ ԿԱՐՕ,

Կը յուսամ ստացար օգային փոստով կանուխ դրկածս գրախօսականը՝ «Գուհարներ դրակահուժեան» առիթով: Ես աւելի կանուխ ուզեցի դրկել ենթադրելով, որ պիտի ուզէիր Պէյրութի մեր քերթերուն տալ՝ հրատարակելու համար: Գիտեմ, որ «Աղօս»ը ուրիշ անգամներ արտատպումներ ըրած է իմ գրուածներէն: Գիրքդ ստիք էր, որ ինծի համար իսկապէս բացուէր շատ հետաքրքիր դաշտ մը: Եթէ տոնն ունենամ, պիտի ուզեմ ընդարձակել այդ ուսումնասիրութիւնը: Շատ բաներ կան ըսելիք եւ մա'նաւանդ պրպտելիք: Գիտեմ, որ շատ հետաքրքիր է նաեւ ճեզ համար, որ հետզհետէ ընդարձակես ու լայնցնես այդ դաշտերը: Ստացեր եմ նաեւ «Գրական պատմութիւն»ը: Իսկապէս կը հիանամ աշխատանակութեանդ եւ արդէն իրարու ետեւէ աշխատանքներդ կը հրատարակես: Ուրեմն միջալայրը; պայմանները ճեզի կը թելադրեն այդ աշխատանքներդ: Կարօ, շատ գործեր կան ընելիք: Ի՞նչ լաւ պիտի ըլլայ ճեզի համար, եթէ պրպտես, հուսաքես եւ առանձնապէս ուսումնասիրես ազգային, քաղաքական, հասարակագիտական եւ հոգեբանական պայմանները մեր արեւմտահայ գրականութեան եւ մէջտեղ քերես գրական պատմութիւնը, այլ խօսելով՝ Մ. Արեղեանի ոման գործ մը, որ ես շատ կը հաւնիմ: Իսկապէս ի՞նչ լաւ գործ տուած է, որ ո՛չ Ն. Դուրեանը կրցաւ տալ եւ ոչ ալ Աղբալեանը: Այդ տեսակէն ընելիք աշխատանք կայ: Քու արդէն հրատարակածդ աշխատանքը պակաս մըն է, որ կը լրացնէ: Եւ դուն պիտի կարենաս ընել այդ մեծ աշխատանքը,



Բանի որ արդէն այդ ուղղութեամբ կ'աշխատիս եւ հնարաւորութիւն-
 ներ ունիս: Մեր արեւմտահայ գրականութիւնը իսկապէս հանգա-
 մախօրէն ուսումնասիրուած չէ, առանձին-առանձին ներկայացուած
 է միայն: Կարօ, Ֆանս, կը ծերանանք, հէ', այս օտարութեան մէջ:
 Դուն չափով մը բախտաւոր ես, որովհետեւ Լիբանանը եւ կամ Սու-
 րիան մեր կուտ եւ ապագայ ունեցող զաղութն է, հայերէն կը շնչէ՛ք
 ու հայերէն կը մտածէ՛ք: Ամերիկան եւ բանուորութիւնը փնացուց
 շատ բան: Շատ բարեւոյններ ընկերներուն եւ Լօյալին:

Բարեւոյններ մեր տնեցիներէն:

Կարօսով

ՀԱՄԱՍՏԵՂ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Ծ Ա Ր Ա Կ Ա Ն Ա Յ Լ Ա Կ Ե Ր Պ Մ Ա Ն

Անայցելուն՝ յաւերժական բացահայտ արեգակի մարած շուրթին
եւ բոլոր ժամանակներու մտաւիտապատ բայց մշտագոյն ներկայութիւն:

Այս է շարժումն առաջին
եւ առաջին կաւ շարժումին քարացումը նախավերջին:

Գերիբական քար լուսինն անհասնում՝
անգոյն կեանքին ծովերուն:

Անասրտաին շնչառութեան մութ տեւողութիւնը կիսող կունծած գետա-
հունին մէջ՝ անշարժ ապագայ խոացող: Միօրինակ հայեացքներու կշռոյթ-
ներով ուղղածիք ան կը գննէ մահացումը շարժումին: Բանաստեղծին այն-
պէս կը բուխ, որ իր ալիւներ հայեացքները կ'այլափոխուին կենսաչափի էա-
կան, եւ իր տարագիր էութիւնը կը հոսի հարցական նախադասութիւններ
յայտնանօճող կարմիր գիշերներուն քաշափրփուր գետահունին հետ, գե-
տահունին քայլերով..... *ԻՆ* ————— *Պ Ե Գ Ի ...*

Այ ալիին կը ճշմարէ էգը: Էգը հակած է իր գիշերներուն փոսին վրայ:
Կանաչաբայր հովերը ծովեր կը խաղան հրաշէկ վարսերուն հետ, որոնք կը
սկսին հիւստիլ ու կազմել շրջադարձում թոյն մը, որ կը ծածկէ էգին
զլուխն ու փորը:

Լուսինը կը սղոցէ տեւողութիւնը:

Քրմուհիին պարտէն կը ծլին արծաթեայ ոստեր: Ոստերը կանաչաւիշ
շարժումներով կը սղոցեն լուսինի կակոնացող լոյսերու: Ոստերը կը դառ-
նան գարուն սիրոյ զգացումներով, իսկ կարօտի կեդրոնախոյս նետերը
կ'ըլլան վիուկ դարերու նկուղներէն խոյացող քմբոսութիւն արարիչ
եւ

կը սուգուին
կը սուգուին՝ նման ճշայլի,
կը սուգուին՝ նման կարօտի,

կը սուգուին՝ ինչպէս սերմ հողի խորագոյն ընդերքներուն մոռացեալ,
սերտելու լինելութեան աղստանդահանքին ու փոքորիկներն անպատասխան:

Լուսփիւնը կը սողցէ տարածութիւնը
 Եւ տարածութիւնը կը տարտղնէ տեւողութիւնը :

Վիհ անմեկնելի՛ բայց ճայմաւոր :

Բանաստեղծը կը մօտենայ էգիւն : Աղօս լոյս մը կու գայ անդնդախոր
 վիհէն : Կը կառչի տեւողութեան քարթիչներուն ու երազը կը փշրուի :

Կ'ըմպես լոյսը նման կոյրիւն, որ ծիածանին գոյները կ'ըմբռնէ իրենց
 բիւրեղագոյն վիճակներով : Աւելի յաղթ լուսալիւք մը կը բարձրանայ շաման-
 դադին ծոցէն եւ ակնքարթի մը մէջ կը նշմարես կեդրոնը վիհին : Լոյսը կը
 ծաղկի վիհին կեդրոնը գտնուող դիւստուածին ակնափռներէն : Լոյսը կ'ա-
 նի առաւել : Գանկը աչքի մը կերպարանքը ունի : Բիրն է աչքին ընդհան-
 րական :

Կամուրջն է մութին եւ մութին միջեւ :
 Խարխախն է մութին, մութն է խարխախն :

Մութ վիհ ծովեր անեղծուածի,
 միս տարագիր երկունքի տեսիլներու վաւերական :

Հէ՛յ, մանուկներ իմ բանտարկեալ
 եւ դարերու խօլ տեսիլներ արնագիր,
 միս-հնացներու քաւ գիշերներուն խանձարուրներէն
 արթնցէ՛ք արդար, արթնցէ՛ք դժուար
 եւ արթնցուցէ՛ք մանկութիւնը մեր :

II

Չայներ գիշեր կը դասնան : Շնատամ խաւար : Կը գնես ինքզինեդ :
 Քեզի այնպէս կը բուի, որ գաղտնի բիւրեր կը լրտեսեն շարժումները քու :
 Կը սարսափիս : Դուն՝ դուն չես կարծեր : Կը կարծես մերկ ես, առանձին,
 լքուած անջրպետին մէջ, հակառակ անոր, որ մերկ չես, ո՛չ առանձին, եւ
 ոչ ալ լքուած անջրպետի քմահանոյճին : Դուն՝ որ անջրպետն ես, անոնս բա-
 գուկներու կողմէ կը շարտուիս անջրպետին գիշերն ի վեր ու խաւարին կա-
 քողիկէն կը դառնաս : Այգպէս կը կարծես : Ատողերը մանուկներդ են, որոնք
 կ'օրօրեն մահիւնները արշալոյսին : Կը զգաս միայն :

Հովիւը կը յամենայ եւ արշալոյսը կը թմբի :

ձիչ մը կը սպոցէ խաւարը :

Խաւարը կը սպոցէ կաթովիկէն — կը գարմանաւ — կը խօսի աղամանդ-
ներու շողեր — կը հիանաւ — կը հագնի ծիծեռնակներու քեւեր ու կը գազ-
քէ հիւսիսային բեւեռին գիշերներուն ուղղութեամբ :

Կը քայքայէ խաւարը եւ կը կառուցէ ցերեկը : Կը սպաննէ ցերեկը
եւ կը ծնի խաւարը : Կը յօշոտէ խաւարն արիւնիդ եւ կ'աշխարհախախտ
սի յազքական :

Ողջո՛ւն արիւնին ,

ողջո՛ւն լոյսին , եւ քիւր ողջոյն ախարական մանուկին , որուն երազ-
ները իրենց լուսակերտն առագաստները կը պատուեն ու ալեկոծ գիշերնե-
րուդ սառած գետին օժանդակութեամբ կը նաւեն , կը նաւեն դէպի կորիզը
արեան անպարագիծ :

Գիսաստղն անհունին — քու յիշողութեան երկուորեակը ցով — կ'եր-
գէ լուսկեաց քար միջոցներուն՝ արինգներովն օգոստոսեան արիիին .

— Արիւնը էութեան խունկն ու սաղմուն է ,

միջոցն անառիկ ,

նշոյլը կեանքին ,

պայծառ , մշտագոյն մատեանն անհունին ,

տեսիլն սկիզբի ոսկի տեսիլին . . .

*«Վերապահ : Եւ անոր ներկան՝ բացայայտ . սլամութիւնը նկատել
անհնարին . պիտի ծնի մերժող բառը տարադիր . . .»՝*

Նման տարագիր անդրանիկ տառին ,

նման տարագիր անդրանիկ սերմին ,

նման տարագիր անդրանիկ լոյսին , անդրանիկ մութին՝

պիտի ծնի շլացումներ փայլակի վաւերական շարժումին ,

«Վայել՝ ծովի հեղուկ վանկին առաջին . . .» :

III

Քրմուհին կ'աշրի արգանդի հրդեհներով եւ դուն կը մխաւ մայր ջիզիդ
առանձնութեամբ : Տեղերը կը լեռնանան : Կը հասունանան իրենց լաւաներու
ջերմէն եւ կ'որոտան ամառներն արիւնին , իսկ դուն կը նաքոտիս արարիչ
ամառներուդ բացակայութեան երաշտէն :

Ջուրը նեղ է երաշտին հասողութեան, մինչ դուն կարօտ ես այն նեղ
բայց մանրմիկ անօթին, ուր ջիղիդ պարունակութիւնը պիտի խօսի: Ունիս
հագար, սասնեակ հագար լեզուներ, բայց ո՛չ մէկ բառ քուկդ է ալ: Մննդա-
բէր մահացումի անհաշուելի եղանակներ դուն ունիս եւ գերեզման մը շար-
ժուն, որ մարմինդ է խրտուխլակ:

Կը գրես օղին փետուրով .

— Մարմին-գերեզմանը յառաջարանն է ծնունդին,
ծնունդը՝ ցանկութիւն, ցանկութիւնը՝ հարցում, հարցումը՝ իմաստ
եւ նաւ խելագար միջեւ ծովափ ցանկութեան
ու պատասխան էութեան:

Շողեր կու գան յանկարծակի արեանդ անմար ափսոսներէն
եւ ճամբաներ՝ օճապտոյտ գետի նման՝
կը խոշտանգեն մարմինն իրենց, կ'ընդլայնուին,
ու կը մեկնին հրդեհներու համասարած...

Չայներ փափուկ, գոյներ փրփուր երակներուդ մէջ կը խայտան
ցաւագնօթէն, գեղեցիօթէն...

Ու ձայներուն մէջ բազմաձայն դուն կ'ըլլաս բոքր պատգամաձայն .
— Ես՝ որ եղիլին եմ ասողերուն, կ'ըսեմ ձեզի,
առանց մահի ծնունդ չկայ, չկայ ծնունդ,
մահն է միակ արարչագործ ուժը կեանքին
եւ ես յանուն հօօր մահուան կը շեփարեմ՝
պէտք է մեռնի սերմը սերմին մէջ մերժումի,
պէտք է մեռնի սերմը սերմին մէջ պայքարի
եւ արիւնիդ սուրհանդակը պէտք է ցնդի այլ սերմի մէջ,
որպէսզի մութն ապրելէ ետք, անայցելու մանուկը ծառ
աշխարհ բերէ լոյսը մութին՝
լուսալոյսին:

Իւրաքանչիւր ստուերէ ետք ստուեր մը կայ,
իւրաքանչիւր սահմանէ ետք սահման մը կայ,
իւրաքանչիւր հորիզոնի հորիզոնէն ետք միմիայն
գոյ է հաստատ եւ անսահման հորիզոնը բնդհանրական...

IV

Նկուզներուն մէջ լուսութեան նզնաւոր,
ուր իրերը աղօտ գիծեր են կակուղ,
բայլերն՝ արձագանգ,

արեւն՝ այլուքին,
ես՝ մեղապարտ ու քայքայուած գիտակցութիւն արեւի,
կը մտածեմ ինչ մասիդ :

Կը մտածեմ ինչ մասիդ, —
թէ դուն ծովն ես տենչանքներուն այն գաղտնի,
որ կը ծնի մեծութեան կղզիներու արցանդէն;
Երբ նայեքը հրեղէն բոցերու մէջ կը վիժիմ :

Կը մտածեմ ինչ մասիդ, —
թէ դուն ծովն ես տենչանքներուն այն յայտնի,
որ կը ծնի մեծութեան կղզիներու ձայներէն,
Երբ նայեքը հրեղէն բոցերէն դուրս կը քաշին :

Կը մտածեմ սակաւին,
թէ ձեռքերն իմ հորիզոնին մագնիսոց ծովն ես գիտով,
որուն կանաչ մատներու քաղմահանցոյց ստուերին,
Երբ աւագեայ, քաղմարեկոյ մատները իմ կը հասնին՝
ալիքները կեդրոնէն ես կը կանչուին յանկարծակի,
մինչ ես անխուս,
Կրակ դարձած քար ցանկութիւն,
օ՛, կ'ունկնդրեմ ուղիւսէն ետքը կարմիր աւազներուն,
աւազներուն մէջ քաղուած հոգիներուն սիրահար
տնկոցը ծանր, կապարահունչ, շուարուն...

Տարածքներուն՝ այլութեան բոց ուղեշներ՝
Իբրեւ անտես սերովքէ, անայցելու ներկայութեան ընդառաջ :

Այս է շարժումն առաջին
Եւ առաջին կաւ շարժումին լուսացումը նախառաջին :

— Մեր սպասումն գոյներով պատրաստուած ո՛վ ծիածան,
հագած ո՞րքովը հզուութեան ու սնդուսներն անմար մութին,
կախա՞րդն ես դուն առաջին, թէ ոչ անոր ողնասխւնէն երգուած
գերահզօր փախստական ամպն էութեան, որ երգեց՝

«Ես եմ լոյսը,
Ես եմ անվերջ պողպատ լոյսը, եթեր լոյսը
Եւ չունիմ ձեւ,
որովհետեւ՝
Ես եմ բոլոր ձեւերը կոյս,
ձեզի ծանօթ ու անծանօթ ձեւերն անքիւ...
անջնջելի, աներեւոյթ, անմարմին» :

Բառերը կը նամբորդեն երջանիկ էութեան անշօշափելի կորիզին, ու

շրթներուդ հրաբայր կոկոններէն տարաշխարհիկ ձայներ, գոյներ, եղանակներ կը ծորին, որոնք իրենց շրջանակները կ'անցնին :

Կը փափասս դուն ճեզի .

— Մարմին-գերեզմանը յառաջարանն է ծնունդին,

ոչոյն մարմնի բնդհանրական հորիզոնին,

ու. տակաւին՝ ընդհանրական հորիզոնի հրահեղուկ կորիզին

հագա՛ր ոչոյն,

հագա՛ր համբոյր կարօտահար . . .

Իգամառը կը խօսի տենդի պղպջակներ : Հրավառուած կայաններէն կը ժամանեն արարչահիւք արշաղոյսներ, որոնք կ'ըսեն քանաստեղծին . «Ե՛ս եմ լոյսը բազմակերպար եւ ես մահինն եմ լոյսին, եւ ես ակունքն եմ հողին . խաւարին մէջ անդադար վառող-մարող, մարող-վառող իմ կանթեղ, ամէ՛ն, ամէ՛ն ասեմ ճեզ, ջնջէ հորիզոնները գիշերուան ու ցերեկին միջեւ, միջոցներն ամէն նուիրէ հուրին, այրէ կիրճով Ադամի քանապարհն ալ ան-վսխման, գոր կը կոչենք սէր, եկո՛ւր յիմար, եկո՛ւր մերկ, հանգչէ ծունկիս ու քող հողն իմ քու լուսալոյսըդ ըմպէ . . . » :

«Ներկայ վայրերու կարծր բնակիչ : Ահա, ստուած, կորնթարթ աչքըդ հմուտ՝ անջրպետին պատմական : Ժամանակէն անպարտ, անպա՛րտ ժամանակէն, դուն միտերու մեծադպրոց եւ երակներու զաղանի բաժանուած :

«Նւ դուն՝ զգայարանք, միակ պարզեւ ներկայի . . . » :

V

Բանաստեղծն ես ազատ : Պարգեւ ապառնի : Կը տեսնես, թէ լոյսը ինչ-պէ՛ս կը դառնայ մարմինը կարօտին . . .

Պատասխաններու հանինն ընթերցող սիրահարն ես դուն, որուն արեւելք հարցումներուն դէմ կը պահան յաղթամարմին պատասխաններն արեւմուտք, ինչպէս աստղերը բիւրեղացող մութին, թափանցիկ զօղանջներ, երկններանգ մարմին կորիզամերժ, որ կը վկայէ աշխարհակալ լոյսին յարատեւ սխրագործութիւններուն մասին :

Կը կանգնիս սահմաններու ծայրամասին,

եւ անայլայլ ու ամօք-խած կ'ըսես էգին .

— Ես՝ որ հովիւն եմ աստղերուն,

պիտի խօսիմ ճեզի հետ նեղ մարմինիդ սուր անճոցով :

Իջիր անձրեւ ու ծածկէ բոյսերը լեզուին :

Իջիր, իջի՛ր, իջի՛ր անձրեւ բարբարոս ու յօշոտէ կրանիթեայ կամ ծովախոտ բոյսերը նոր անդամալոյժ հին լեզուին, խորտակէ սիւները բազմաշարքար յիշադութեան ու նախադասութիւնները քու քող հողին անցեալը կարդան անծայրածիր, հիւր լեզուով, որ յաջողիս մարեկ հրդեհն արգանդիս

եւ քիւերով, անուններով ու յուշելով խնդրուած մարմինը խեղճ, իմ մարմինը բարեյան պարսելիէ ետք յիշողութեան տիպերէն, գայն շնորհեա մարմինի մը անհունն, կամ այլ խօսեով՝ զգայնութեանց մեծ մեծեանին անհանդարտ, որ տիպէն ու կոսմոսներէն ձերբազատուած՝ հոսի, թռչի, սաւառնի քիւերեանի կամ կայծակի քեւերով...

Եղի՛ր մարմին յարուցեալ, եղի՛ր մարմինը սիրոյ, գերեզակի, անպարզիժ, անկապապար, լուսակերպար, սրովհետեւ արարչանիւթ վտակներս ակտրեալ գիշեր-ցերեկ կը զնգզնգան։ «Սէրը զգեստ է, սէրը զգեստն է լոյսին, ամպին ու հողին, զգեստ է ոսկի։ Մեզ մահուան տանող ցամաքարին է կարն, ցամաքարին անյողք, ուր միշտ ինք կ'այրի հագար ձեւերով, հագար ձեւերու հագար խաղերով։ Բազմահուն, անհուն արայմանն է կեանքին, ցամաքն անխորտակ եւ ես՝ քայլն անոր, վկան իր կեանքին...

— ԿԱՊՈՅՏ ԵՐԱԶ ՇԵՐԱՄԻՆ ՄԱՍԻՆ —

Լոյսն է թռչուն անիրական։ Թռչունը կը սկսի մօտեմալ։ Հրեղէն կարասք կու գայ բիրերուդ, կը թեւահարէ եւ լուսարձակ փետուրները ծնունդ կու տան հիփնօսացնող երաժշտութեան մը, որուն զիմաց կը բացուին կուրպ դարպասներն անհունին։ Չես զարմանար։ Բռունցքդ կը բացուի ինքնաբերաբար։ Մատներդ՝ մատներ չեն այլեւս, այլ չոր ոստեր, որոնց ծայրերուն կը զգաս սարօրինակ հեշտանք։

Չայներ կը պարեն ու կը մագլցին էութեանդ փապուղիներէն։ Կը ձգտին անքնին զգայնութիւններու պապուն սարահարթներուն ու կը բուրեն խորհուրդներ աշնանային։ Գինին կ'ըլլայ լեզու, կը համբուրէ միրգերը ծառերուն, կ'այլափոխուի հուրի, կ'այրէ աշխարհն ու սարահարթները բոլոր, մինչ հրանուշները կը հաւաքեն խնկարոյր տերեւներն աշնան։

Կը լիանաս հեշտանքով մը տարօրինակ։ Եղունգներդ կը հալին, կ'ըլլան պասոյզներ, պատրոյզները ցանկութիւններուդ եւ կը ծաղկին թափանցիկ ու արնաբոյր երդեհներ, որոնք կ'ըսեն ծովուն. «Այրէ՛ կոյտերը բառերուն անարտ»։

Ծովը կը պոռկայ վիշապներ, որոնց ոռնգերէն հրվիժող լեզուակները կը լսին կոյտերը բառերուն անկար։ Ծովն ու հողը կը պարեն քամիները լինելութեան ու կը թաղեն մոխիրները բառերու թանգարաններուն։

Բաժնաժամայն, կախարդական նոր լեզուն կը բարձրանայ պատրոյզներու շրթներէն՝ ինչպէս անբան բանաստեղծութիւն։ Բանաստեղծն ես ազատ։ Պարզեւ յարածամանակ։

Կը քայլայես խաւարը եւ կը կառուցես ցերեկը։

Ողջո՛յն լոյսին,

ողջոյն արիւնին, լուսարիւնին եւ բիւր ողջոյն ակտրական մանուկին, որուն երգները ներաշխարհիդ գնտաններուն շղթաները կը թորակեն ու

հսկումի գիշերներուդ հրաժայթ՝ գետին օժանդակութեամբ դուն կը նաւես
դէպի կորիզը առաջին շարժումի արեան անպարագիծ :

Ամպերը կը գոռան եւ սէրը կ'անձրեւէ անապատի էջերուն :

— *Վարագոյր* —

Հոս ես եւ հոս չես : Հոն ես եւ հոն չես : Հոն ու հոս ես միաժամանակ :
Հոպին աւիշները տարբարածող քլումսին հովին նման կը բարձրանայ :
Շունչը բոյր է եւ քամի :

Հողը կ'ապշեցնէ թեզ, կը նուանէ թեզ ու դուն երկիւզած վերացումով՝
կը սկսիս կարգալ ծննդոցը միրգ ու արեւ թերթուածներուն անվերժան :

Գուն թերթուածն ես : Առաջին տառը բանաստեղծութեան : Հրակարա-
պը կ'աստուսէ աստղերուն հետ սիրահար : Տարաշխարհիկ մշուշներ անջըր-
պետը կ'ողողեն : Կ'երգեն գինով հուրին շուրջ թիթեռնիկներն արևնին՝ քու
նոր արեան մշուշներուն կարմիր, կարմիր շքեցեցով :

— Այս է ժամանակը գեղեցիկ մանկութեան,
այս է ժամանակը մամուածածկ բջիջներուդ ուրացման,
այս է ժամանակը բորբոս կապած այգիներուդ մախրացման,
ժամանակն է ժամանակին այս ակնբարբը հօր...

Փակեցէ՛ք ականջները,
կղպեցէ՛ք սրինգները,
ծեփեցէ՛ք արեւուն թիբը
եւ թող խօսի մայր արմատը հրաշուրթ :

«*Էդերը զգեստներ են ձեզի համար, իսկ դուք՝ անոնց*»
կ'երգեն հեշտանք առ հեշտանք մրրիկները արաբական անապատին :

«*Հողին դժբէ՛թն է մարմինին*»
կը փախայ սուրբ կազմին :

— ՏԵՍԻԼ ՄԵՏԱՔՍ ԵՐԱԶԻՆ ՀԱՄԱՐ —

Բաւերը կ'անէտնան : Ուտերդ կ'անշատուին ու կը թռչին արձագանգ-
ներու խաւար կարօտին : Մարմնէդ կը ժայթքեն երկնագոյն երակներ ու կը
վազեն հողին մարգարիտներուն : Գամուած ես իգածառին մօտ : Կը լսես ա-
նոր ստիկներուն տրոփը շիկածայն, որ կը վերածուի շոգիի, կը թանձրա-
նայ, կը կազմէ սպակիէ՛ հսկայ գունտ մը եւ գունտը կը պարփակէ թեզ,
բանաստեղծը, իգածառ-՝ քլումսին եւ մերժումի հեղուկ վանկը տարագիր :

Կը նաթռտին բարձրադազակ առասպելները գետին :

Արթուն ենք մենք՝ — անկնութիւն աշալիք...

Լուսփունը կը խարագանէ լուսփունը...
 Եւ կը խօսի լուսփունը պտոնիկին.
 — Ահա առիկ, բանաստեղծ,
 Ես կը խօսիմ քու մարմինիդ կարօտներով հնադարեան:

Մեր վախն ես դուն,
 մեր հուրն ես դուն,
 մեր բարձունքի ձիւներուն հրդեհն ես դուն
 Եւ մեր ներմակ հրդեհներուն ակունքները լոեցնող
 լեզուն ես դուն անմիջական:

Էգին համար են արեան հովերը,
 Էգին համար են արեան ծովերը,
 Էգին համար են արեան մարգերը,
 Էգին համար են արեան մարգերուն անմար բոցերը,
 Էգին համար են անվերջ, անհատում այս սարսափները
 Եւ մեր ակունքը իրն է...

Էգն է ակունքը,
 Էգն է ակունքը ակունքին,
 Էգն է ակունքը լոյսին, մութին,
 Երջանկութեան, երջանկարաշիտ տառապանքին:

Անջրպետն ես դուն, անջրպետը անջրպետին անծանօթ
 Եւ մենք հլու եւ ընթոստ արբանեակներդ անկայուն:

Բանաստեղծն ես գերի: Կունկնդրես փախուսքները գիշերուան բող-
 բոջներուն, որոնք ճայներդ են յամառ, բայց էգինն են: Ջարդուփշուր կա-
 պիններով կը նկատես, թէ հովը կու գայ դուրս բողբոջներէն եւ կ'օրօրէ մա-
 հինը լոյսի ակունքներուն:

— վարագոյր —

Արշալոյսը կ'ըմպէ կաթն իր եւ դուն սխրութիւնն ու կարօտը կը բաժ-
 նես քրմուհիին հետ՝ իբրեւ նեկտար ու հաշիշ, առաջին գոյգին նման սովա-
 քար՝ հեշտալիտով ցնցումներով ընկլուգիչ:

VI

Թիթեռնիկներ են թեւարեկ սնդիկներն իմ արիւնին,
 այբաժ թեւեր յաւերժի, խոշտանգուած երկինքներ,
 որոնք հիմա հիասարսուռ գինովութեամբ այծածան

վազվազակի լռյսի՛ն, լռյսի՛ն կը մեկնին՝
ինչպէս գետն իր ակունքին...

Այժմեամ մըն է արիւնս հիւսա դաշտերուն մէջ յիշողութեան: Գաշտե-
րուն մէջ յիշողութեան իր արմատին խորհուրդներով կը լիանայ՝ յար եւ նը-
ման աշնան անհաս միրգերու: Կը թփրտայ գալանակին մէջ յաւերժի երգն
անխարդախ ծառերուն, որուն շոգերը իմաստուն թփրտացին յաւերժէն ա-
նայ եւ ողջակիզուեցան...

Ծառերն անա կ'արբնցընեն հուրը իրենց անդամներուն,
հողերն անա կը բզկտեն տենդը իրենց ընդերքներուն,
հողմերն անա կը տարտղեն սերմը իրենց խաւարներուն,
մինչ հոն, հեռուն,
շէկ երկիրներ կը գծեն մեզ ու կը գծեն մենք գիրենք,
ձիւն երկիրներ կը տաշեն մեզ ու կը տաշեն մենք գիրենք,
բոց երկիրներ կ'արձակեն մեզ անապատի վանդակէն
ու պատուած ժամանակի ծեր երկինքէն...
արդ կ'արձակենք մենք գիրենք:

Գետը կ'արբնայ իր արբնութենէն: Ամպերը կը նուագեն միջոցնե-
րու աներեւոյթ ստեղներուն վրայ:

— Ճամբորդութիւնը մտերիմն է առաջին,
մեր առաջին շարժումին առաջին շունչն է մեկին,
իսկ իմ երբք՝ գերբմբոստ ուխտն ալքոյին...

Թող մարգարէն հեղուկակերպ դուրս գայ մարմնէդ՝ տեսիլներով իր
սաղմնային, թող մարգարէն հեգահամբոյր դուրս գայ մարմնէդ՝ անկաշկանդ
ու պողպատաւալ յաղթութեամբ եւ նամբորդէ հայրենիքն իր՝ նուանելով
սիրէնները արեւին:

Ողջո՛յն, ողջոյն հայրենիքիդ, որովհետեւ՝
խաւարը նամբորդեց, սրպէսզի այցելէ լռյսը,
լռյսը նամբորդեց, իր գահը խաւարին փոխանցելու համար,
որպէսզի ծնի մութը, տիրէ լուսւոյնը, երերայ կեանքը, փոքորկի շարժումը
եւ լեռները ննջեն իրենց սիրունի ամպերուն տակ: Ծնին սէրը լուսայեղց,
որուն համար գիշերը եղաւ թափառական արշալոյսի նկուղներուն մէջ ու
գիշերուն մարմինէն արշալոյսը նաւագայթներն ետ քաղեց:

Ազակիէ երկրագունտը կը նաքտի քամիներուն սիրաքանութենէն:
Կ'ըլլայ փռշի: Գինին կը տեղայ ձեր մահիճին վրայ ու սատրապներն անու-
թեան տարտարուէն միգամած կը սերմանեն լուսահունտեր երջանիկ...
մէն ... այբ ... րէ ... մէճ ... ինի ... նու ... սէ ... այբ ... րէ ...
գիւմ ... ինի ... սէ ... եւ եւայլն, եւայլն:

Եօքը օրուն համար կ'ընտրես հասարակաց եօքը տառ եւ երաժիշտ
անջրպետը կ'արարես: Հոդ ու երկինքը կը մերձենան իրարու: Դուն կը ծնիս
վահագնօրէն:

Անջրպետն է արդ ձայնը քու նորածին: Երազը դուրս կու գայ իր մտե-
զէն անօթէն եւ կը լողայ ջուրերուդ հետ արարչագործ:

Գետափն ամբողջ նոյածիլ եղէզներու պատարագ
եւ քաւշաքոյր դօզանջներու շոգարձակում:

Հովիւը կ'այցելէ եւ արշալոյսը կը յարդի բաց տարածաւթիւններում:
Գուն կը սկսիս եւ ճեզի հետ քոնիչք կ'առնէ:
հաշտեցումը իրարամերժ բեւեռներում:

Մառ ու երկինք կը ձայնակցին սէրերուդ
եւ դուն կ'երգես քիւրեղածայն.
— Լետա, Լետա՛, անմի՛տ Լետա,
Լեղա գետին ալիքներուն մէջ քաղուած
չաստուածներուն անծանօթ մոռացութիւնն արքնցուցած,
փետուրներու սակ եռացող տոփակները հոտուրտալէն՝
հարուստ-ազգատ գիշերներու ընծաներով կաւ գամ ճեզի,
եղի՛ր պատրաստ, ով մեկնակէտ իմ առաջին
եւ կայք վերջին, եղի՛ր պատրաստ...

Կը լսես աղօթքը հրակարասին
եւ ինքզինքդ կը նանչնաս:

Կը տեղայ լոյս, լոյս արարիչ:

Ողջո՛յն մարմինին, որ կը ջնջէ հորիզոնները բոլոր, կ'ընդելուզէ բե-
ւեռներն անհաշտ, հեռաւորութիւնները դարաւոր կը գումարէ մարգարէին
սրտին մէջ, որ կը դառնայ պորտը լոյսին, կեդրոն կեանքի իմաստութեան:

Ողջո՛յն լոյսին հրաշագործ...

Լոյսը լինելութեան փաստօտոնին առաջնորդող մայր անհայտին է
տրբագան, իսկ իմին՝ երգը ժայռին ու շարականը գլխատուած լեռներում,
որոնք հիմա կը նամբորդեն ժամանակի ապտամբ սմբակներով...

Այս է շարժումն առաջին,
այս է շարժումն առաջին,
այս է շարժումն առաջին գիւղութեան առաջին...


Անապատի շնչառութեան մեղկ տեւողութիւնները գարնանացնող գե-
տախունին մէջ՝ մշտաւեղով ապագայ արքայական: Բազմերանգ հայեացք-
ներու հազարալիք նախադասութիւններու հեքանոս համանուագներով ան կը
ծնի ծննդոցը շարժումին: Մարդասիրին այնպէս կը քուի, որ իր կեանայորդ
ու ոստոստուն հայեացքները կ'այլափոխուին անջրպետի անսահման, որ կը

մամբորդէ իմաստութեան մայրաքաղաքներու մայրաքաղաքին, իսկ գեուր՝
 մայր ջիղն իր, որուն հոսքին հետ արծուքէւ կը պտոթկան անկաշկանդ մար-
 գարէներու փոքորիկներ, իր բիւրեղեայ էութեան պատգամները յայտնա-
 բերող ակնթարթին ուղեւորութեամբ գտնեցնուած, բանաստեղծին մախա-
 մանկութեան սալմուշին երազները փառաբանող բիթեռնիկներու, ծագիկ-
 ներու, աննուկներու հաւաստացեալ քայլերուն հետ

Էութենէդ ————— ♦ Միջեւ ————— ♦ Դուքս

Մէջ

Շուրջ ————— ♦ Դեպի



ԲԱՑԱՐՁԱԿ ԷՈՒԹԵԱՆԴ՝
 օղին, ջուրին, հուրին, հողին, արևին...
ՆԱԽԱՄԱՆԿՈՒԹԵԱՆԴ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
 իր կորիզի կիզակէտին մամբորդող
 ըմբոստ,
 խոհուն,
 գերերջանիկ,
 ուխտագնաց մարդ-աստուծոյ յանբժական երթին պէս...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

ԿՈՐՍՈՒԱԾ ՓԱՄՓՈՒԾՏ...

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հ. քաղաքէն կը գրէր մայրը.

— «Վախ ու հոգեքս խառցնելով մէկ բառի մէջ՝ կ'ըսեմ — Սկե՛ք: Բայց գիտեմ, որ Անդրանիկին հարցը կայ. ան չի կրնար զալ հոս: Աւրեմն, Սոնա, ազջիկս, ա՛ն ազգակ ազգայ, ելիր-եկուր. մարդկ կը մնայ մեծ աղ- զուն հետ: Պատուիրեր եմ Միհրանին, որ հանդիպի ձեզի եւ լուր մը բերէ. մէկ տարիէ ի վեր կը գրեմ, նամակս տեղ չհասած՝ եւս կու գայ կամ կը կորսուի: Բոյրերդ՝ Գոհարիկն ու Մազկանը մասհարուած են ձեզմով. կ'ը- սեն՝ ի՞նչ է, թխտան հաւու պէս նստեր-մնացեր է հոն: Մեր քաղաքը մէկ ծայրէն միւսը, բերնէ բերան լեցուեր են գժոխքէն փախած-եկածները...: Ընտանիք մը վարձեց մեր մէկ սենեակը. լաւ կը վճարէ. ամէն օր մեզի են. ստակալի բաներ կը պատմեն. կարկուտի պէս փամփուշտ կը տեղայց դիչեր- ցերեկ ձեր դլխուն եզեր...: Կ'ըսեն՝ մարդորս է, զանեաւ է եղեր, կը նստի պատուհանի տաջեւ ու թա՛ք՝ կը կրակէ մէկ-մէկ փաղցեցն անցնողին վրայ. չ'ըսեր՝ աղա՞յ է, ազջի՞կ է, կի՞ն է թէ մարդ — ի՛նչ դիմնամ — զարկածը կը մեռնի կամ չի բաժաւիր բնաւ... Դեռ ինչե՛ր, ինչե՛ր կը պատմեն. իբ- բեւ թէ խաթը՛՛փ կ'ընեն, աշխնքն՝ մարդ կը գոցնան եւ բաժ պանակով... Աստուած իմ, չե՛մ կրնար երեւակայել լսածներս...»:

Երկար նամակ էր, ուր կը գրէր իրեն համար կարեւոր եւ սչ կարե-ւոր բաներու մասին: Աւ կը փակէր դռնն աշտպէս.

— «Ինչպէս թխտան հաւը, վատնոյ տեսած ժամանակ, թեւերուն տակ կ'աննէ ճուտիկները, անանկ ալ մայրդ է, կը փափաքի, որ իր ազջիկները միտակը դան-մանեն իր թեւերուն տակ... Արքա՛ն կ'ուզէի, որ դուն եւ Լէսնին ալ աշտպէս ըլլայիք...»:

Նամակաբեր պարոն Միհրան կը սպասէր բերանուցի պատասխանը: Սոնա նամակը ծայրեց, դրաւ պահարանին մէջ ու պահարանը, անողտք թուզ- թի պէս՝ նետեց մօտիկ սեղանին վրայ: Դէմքը դռն չփոխեց, սչ ալ ջիզ մը շարժեցաւ հոն: Անդրայ, լուրջ ու լուս մնաց, բայց աչքերը իբր չէին, կար- ծէք, նայուածքը թուր-գացելը էր հի՛ն-հի՛ն ժամանակներու որոնումին: Գուցէ կը փնտռէր իր ճուտիկութեան օրերը: Մայրը գինք ծեծով, սպառ- նալիքներով հրմշտկեց մարդու մը գիրկը, ամուսնացուց այս Արմենակին հետ: Չէ՛ր ուզեր, լացաւ, անիծեց իր շար բախտը եւ պատճառ եզոզները. ասանրչարսը հազիս մտած էր — դեռ ճուտիկ մը, որ նոր կը փետրազարդ-ւէր աղուորութեան շնորհներով: Թխտան հա՛ւ եւ ճուտիկները. ի՛նչ լաւ է դրած մայրը, անցուկը-մտացուկ ըլլալէ ե՞տք...: «Ո՛չ, խեղճ իմ մայրիկ. ազջիկդ այլեւս չի՛ յիշեր, թէ ճատի՞կ էր եղած, թէ անխելք հաւու ձագ. թխտան հաւը կը հետեւի բնազդի ձայնին եւ չի հեռացներ ճուտիկը թեւե-րուն ասկէն, այնքան ատեն, որ ճուտիկը չէ հասած աքլորը ընդունելու պէտքին. իսկ դուն անասցիր մայրական գորովին, հետո՛ւ վանեցիր ձագե-րը, ա՛յն վախով, զոր կ'անենան ջայլամները՝ անապատի աւազին մէջ խրե-լով իրենց գլուխը...: Դուն պարզապէս գոհ դացիր ժամանակիդ եւ բոլոր

ժամանակներու աշն յիմար միտքին, թէ լսողուեր էր աղջկանդ բախաւը, լսայց իրականին մէջ գուն խողցար Պիգատտին դերը — ձեռքերդ լուալով, որ մի գուցէ ամբողջ քաղաքին մարդիկ կրնային վաղել աղջկանդ հաեւէն ու պատուհասել զինք... : Փնտեղելք քու պատիւդ փրկել, էրք անզին աղջիկդ Քոնիբի կրակներուն մէջ լնկաւ ու այրեցաւ» : Սոնային միտքը անդադար կարկէնը բանալ կ'ուզէր իր խոսոված սիրտին շարիերը մեծցնելով, մինչ նա- ժակարերը անհամբերութեան նշաններ ցոյց կու տար : Սոնա զգաց այդ ու սունձեց յիշուրթեան թափը .

— Պարոն Միհրան, եթէ տեսնէք մայրս, կ'րոճք իրեն, թէ տուրք նա- մահը լաւ են, կ'րոճք, հանգիստ են, այջ եւ ասոյջ . դալերնին դժուար հարց է, ինչպէ՞ս ձգել կէսը հաս, կէսը հոն...

Նամակարերը խոտացաւ կրկին հանգիւղել, երկրորդ դարուն : Անոր երթարէն ետք, ակին Սոնայի մէջ շարունակուեցաւ մօրք գէմ սույքարը : Մեծ քոյրք՝ Գոհարիկ, հարս գնաց իր ասանքհնդին : Բակին վրայ նայող զրացի Մարտիկենց Գառնիկը հայելիով գերեց զինք : Արեւացուքը հայելիէն կը մեկնէր՝ քոջ աչքերը խոտացնելով . Գոհարիկ կիտեց յօնքերը ու բար- կացաւ առաջին անգամ . յետոյ՝ լակոտ կոչեց տղան, լայց ետքը լեկու ցոյց տալով՝ գնաց հետք շարժանկարի սրահները քով քովի նստելու, ձեռք ձեռ- քի մէջ : Գոհարիկ չբացաւ եւ ոչ ալ բողոքեց... : Ինչո՞ւ բողոքէր : Իրը բո- լորովին տարբեր կարու : Չէր ճանչնար Արմենակ մը, սակայն զպրոցին մէջ Վահան անուսով բանաստեղծ աղայ մը կար . ինք ոտանաւոր լաւ արտասա- նող մքն էր... Նիհար, տաք նայուածքով, թխիկ-լուրջ աղայ էր Վահան, որ զինք կը դարպասէր աչքերով :

— Ոտանաւոր մը ունիմ, տամ՝ կարգա՛, — զպրոցէն արձակուելու պահն էր, անկիւնադարձի մը վրայ հանդիպեցան :

— Լա՞ւ է :

— Քեզի համար զրեցի...

— Ինձի՞ համար . ինչո՞ւ, — Սոնա յիշե՞ց արեւացուքը քոջ աչքե- րուն մէջ :

— Կը կարգաս, կը հասկնաս...

Ու Վահանին աջ ձեռքը յանձնէր էր քառածալ թղթիկը Սոնայի ձախ ափին, մինչ ականջով կը լռէր տղուն գաղտնապահ բառերը — դուն իմ մա- սան ես... : Սոնա զարմանահար մտխով նայեցաւ աղուն .

— Ի՞նչ բոկ է Մուսա :

— Հրեշտա՞կս...

Սոնա փախչելու պէս՝ արագ քայլով հեռացած էր : Ան իր ափին մէջ ունէր Վահանին ստանաւորք եւ սրտին վրայ՝ հրեշտակին առթած ջերմ թըր- թըլուսումը : Ասանձնութեան մէջ, տունը, լացաւ քառածալ թղթիկը . եր- կու տուննոց բանաստեղծութիւն մըն էր . զեղեցկատառ վերնագիրը «Այգե- կուքք» էր : Կը յիշէր Սոնա, թէ բարկացած էր Վահանի դէմ, չէր հասկը- նար, թէ ինչո՞ւ . գուցէ հոն գրուած չէր, — «Սոնա, կը սիրեմ ծագիկը, վարդ ու շուշանը» — բաներ, որոնց ներքեւ աղջիկ մը պիտի գանէր իրեն սուղուած, լայց չըսուած ակնարկութիւն մը : Վճոկեց երթալ յաջորդ օր զպրոց, գտնել Վահանը ու հարց տալ, թէ ի՞նչ կը նշանակէին :

Հնձանկէն ետք արքեպուսիք,
Ծնունդ կ'առնեն վառ երագներ .
Մէջն Այգիին գրկաբացիք՝
Գուն իմ տէրս, ես էեզ՝ սուտեր...

Տոսնըչարամեայ Սոնայի երեւակայութիւնը կանդ կ'առնէր խորհրդաւոր այդ ասղերուն ասջիւ վախճարիկ, գողահար, թէ մի զուցէ տղան ամօթ բաներու խորհուրդ մը հազարացած ըլլար իրեն դեռ անծանօթ բառերուն: Սոնա չէր կրնար սրտակերացնել այդեկութիւն տեսարան մը, ուր հընձանին մէջ մերկ օտքեր պիտի ձգմէին կարծիր խողովի սղիւղները... ու արեան պէս բոսոր՝ պիտի հոսէր դիմին...:

Յաջորդ երկու օրերը արձակուրդ էին. երրորդ օրը Սոնա գնաց... զպրտց, Վահանը չկար: Ընկերուհի մը պիտի յայտնէր անտարբեր, թէ ծընողքը զինք զրկած էին հարաւի ծովեզերեայ քաղաքը առողջական պատճառներով եւ թերեւս չդար այլեւս: Այդ ի՞նչ վհատութիւն էր, զոր զրաց Սոնա, երբ լսեց լարը: Գործու ատն անարամողիր: Մեծ մայրը պիտի բռէր, — «Ազէկ ո՞ր եկար, Սոնա. քոյրդ ամբողջներ է բազմիքը. մտիւր լողչիւր. գիշերը հիւրեր կ'ունենանք», — բազմիքին մէջ, երբ վրայէն կը նետէր մերկութիւնը ծածկող վերջին շորը, Սոնա պարմացաւ՝ կարծքերուն կոնածեւցալաքը նշմարելով հայելիին մէջ: Մինչեւ այդ օրը չէր նկատած մերկ իրանին արձանային գեղեցիկութիւնը: Չննելով մարմինին կորութիւնները, մէկէն ամօթ զրաց. իրեն կը թուէր, թէ օտար մէկու մը աչքերով էր, ուր կը նայէր իր մերկութեան: Իջաւ դուռին ասջիւ ու արտորանքով լուսացուցաւ...:

Նոյն օրուան երեկոյեան եկան Արմենակը եւ ծնողքը, տեսան Սոնան ու հաւանեցան: Սոնա անհամ օշարակով եւ ջրախառն սուրճով պատուեց զինք ասղերու եկողները: Մօրը խիստ ակնարկներէն սչինչ ուղեց հասկնալ: Սըրտովը չէր...:

Հիւրերու երթալէն ետք, մայրն ու մեծ մայրիկը յարձակէին պիտի Սոնային վրայ ու ամէկին, որովհետեւ «չան ազջիկը ամօթով ձգեր էր գիւրենք ապաղայ խնամիներուն առջեւ»: Սոնա ծեծի ասկ ու լայով պոռացեր էր անոնց երեսին.

— Չե՛մ ուղեր, չե՛մ ուղեր... ես մարդու չե՛մ երթար... պիտի կարգամ. չեմ ուղեր...

Յաջորդ օր, Սոնա պարտց շտարաւ քոյրերը: Ամբողջ գիշերը լացած էր. աչքերը կարծրեր էին. Վահանը չկար: Գպրտց ա՛լ չէր ուղեր երթալ: Վրան յուսահատութիւն եկաւ: Ի՞նչ պիտի բլլար վերջը: Կէսօրէ ետք, զնաց Գոհարիկին մօտ: Վահանին մասին խօսեցաւ. ստամուտըր մխախին կարգացին. Գոհար ըմբռներ էր ասղերուն իմաստը: Գառնիկ նմանօրինակ բառեր կը փոփաւր ականջին ասկ, սիրոյ պահերուն.

— Քա՛, Սոնա. այս Վահանը քեզ կը սիրէ...

— Ինչէ՞ն հասկցար, — Սոնա սղբալի արտայայտութիւն ունէր. տչքերը արցունքառեցան: Գոհար կարգաց վերջին երկու ասղերը.

Մէջն այգիին գրկարացիւ,
Դաւն իմ տէրս, ես էեզ՝ ստուեք...

— Կ'ընէ դրկարաց այլիկ մէջ. այսինքն՝ գու՛ն եւ ինք գրկուած պառկիք...: Աներմամաս կ'ընէ՝ «աղայ կ'ուղեմ». ի՛շտէ ատոր կ'ըսեն փառ երազ. հասկցա՞ր... բայց, մէկու մը կարգալ շտառ. ամօթ է...

Սոնա յուսահատ, գրեթէ ճչաց.

— Հիմա ես ի՞նչ րնեմ, Գոհար քոյրիկ: Մէջտեղ երկր է օթոյի վրայ աշխատող մարդ մը. ինձի կ'ուղէ եղեր: Մաման եւ մեծ մայրիկը խօսք տըւին մէկ շաբաթէն լուր տալ...:

— Ե՞րբ. մեզի ինչո՞ւ. չկանչեցին, որ տեսնենք տղան :

— Ձե՛մ գրեակը ինչու չկանչեցին. բայց ես տեսայ մարդը. փքուած հնդկաջլորի տեսք սենէր. սեղմէիր փետուրները՝ թրջուած հաւի պիտի նըմանէր : Քոյրիկ, ես չեմ ուզեր. դիտե՞ս, Գառնիկը հայելիով քեզ կապեց իրեն. ինձի ալ Վահանը իր սառնուաւքով...

— Մէկ շաբաթ կայ. Գառնիկին կ'ըսեմ թող սղապան զրկէ՝ մաման եւ մեծ մնայրիկը համաղելու, որ ես կենան. դեռ ժամանակ կայ : Ինձի տասնըհինգիս ամուսնացուցին. մէկ տարի չանցած՝ ինչո՞ւ ելեր քեզ մարդու կուտան... :

Սոնա ինքնիրմէ երած՝ պոռթկաց .

— Աղջիկները շուտ-շուտ մարդու կուտայ, որ ազատ ըլլայ ուզածը ընելու...

— Աղջի. կը նեղուիմ քեզմէ, հա՛, որ կրկնես անգամն ալ այդ խօսքը. մաման հրեշտակ է, մեր սիրոյն՝ մերժեց հօրեղբայր Հրանդին առաջարկը, լուսցարարուհի դարձաւ, որ մեզի պահէ :

— Ի՞նչ լաւ ալ պահեց. քեզի քչեց տասնըհինգիդ, ինձի ալ տասնըչորսիս կը քէ. իսկ երկու տարի ետք չորս աղջիկներն ալ հարս ըրած-վերջացած կ'ըլլայ... Յետո՞յ :

— Յետոյ՝ որ մը մէկ աղջկան տունը կ'անցրնէ, որ մը՝ միւս աղջկան քով, մինչեւ խրոխրուը չմնայ...

— Եթէ ինձի ստիպէ, ետքն, ո՛ր մըն ալ չեմ ընդունիր տունս. թող ախանջին ո՛ղ ըլլայ, — բարկացած էր մօրմէն, նեղուեցաւ քրոջմէն ու իջաւ իրենց տունը :

Մայրն ու մեծ մաման ժամանակ չունէին եւ ոչ ալ միջոց — Հրանդ հօրեղբայրը դժտուած էր Մարիցայէն թիւրիմացութեան պատճառով եւ ուրացած զինք — որ հետաքրքրուէին փեսացուին մինչեւ եօթը պորտով : Դրացուհիները չարամիտ ու նախանձուտ էին, լաին, թէ «աղջկայ մը առաջին բախտը միշտ լաւ կ'ըլլար. տուէք թող երթայ : Աղայեանները հին արմատ, վարժով-բարժով գերպատան են»... Եւայն : Անոնք պահեցին տունը մնացած չորս քոյրերուն գեւերու հետ դուրս ելլելու, կուտապան ու նենդամիտ ներկայութեան դաղտնիքը : Ուրեմն՝ առանց հարցուփորձի, շաբաթէն առաջ լուր ճամբեցին, թէ «հրամմեր էք, եկէք եւ նշանուաք դէք»... : Ժամանակ չտուին բարեխօսութիւններու՝ Սոնան փրկելու կամ տարիով մը ուշացրնելու նշանուաքը : Մայրը մտիկ չբրաւ աղջկան բողբոջներուն, լացին, չըւանով ինքզինք կախելու սպառնալիքներուն — այդ բոլորը կը նմանէին օրինակներուն, որոս յաճախ մարդիկ կը կրկնէին, թէ մէկ ծաղիկով գարուն չի գար կամ մէկ ձեռքով ծաղի չի տրաւիր — եւ կարծէք, այրի տիկին Մարիցա կ'աճապարէր աղջիկը շուտ հարս բնել, ազատուելու անոր սուր լեզուէն, որ կակաղել էր դիտեր եւ Աստուծմէ իրեն արուած պարգև մըն էր... կարկաչահոս ու գլզլան աղբիւր իրբեւ՝ Փիղիքահան արբըշում ազուարութեան մը հետ :

— Աղջիկ մը շատ չպէտք է նշանուած մնայ. Սոնայիդ աչքերը չորս են, Մարիցա քոյրիկ : Ամիս մը ետք կարդեցէք, թող երթայ տունը շինէնտի... :

Այն ո՞վ էր կամ ովքե՞ր էին այդպէս խորհուրդ տուողները — յայտնի չէր — եւ իրապէս շատ նշանուած չմնաց Սոնա. ամիսէ մը պիտի պտակէր : Իսկ նշանուած մնացած մէկ ամուսնան մէջ, պարոն Արմենակ Աղայեան Սոնան մէկ անգամ շարժապատկերի տարաւ, ընկերակցութեամբ՝ քրոջը եւ քեռայրին : Կը քալէին չորսը մէկ եւ ընութեան անդիր օրէնքի մը համա-

ձայն, թուխ եւ սպիտակ էին զոյգերը: Մարդիկ կը նայէին զոյգերուն եւ կը գարմանային, թէ ինչպէ՞ս սպիտակամարթ, բարձրահասակ Գոռնիկ առած էր թուխ ու մանրակազմ Գոհարիկը կեանքի ընկեր, մինչդեռ երկրորդ զոյգը ճիշդ հակառակն էր առաջինին: Սոնա խարտեաչ ու սլացիկ էր քովը կարճահասակ եւ թխամարմին Արմենակին...: Աւ երեսունական թուականներէն անուն չահած, շրթունքէ շրթունք փոխանցուած մինչեւ օրս ծանօթ երգ մը, մէկէն գուրս կը վազէր խանութէ մը: Այլ երգը «Փարի ժը քեմ»ն էր, զոր առաջին անգամ լսէր էին «Սիրոյ ցուցադրութիւն» (Փարսա տ'ամուր) շարժապատկերին մէջ՝ խորարկութեամբ Մօրիս Շվալիէի եւ Ժանէթ Մակուսնայի: Առաջին դունուոր եւ երգեցիկ խօսուն Փիլմն էր. Շվալիէ Փարիզը ձգելու արամութեամբ դերուած՝ պիտի երգէր, պատշգամէն պիշերային քաղաքին լոյսերուն սպիտակ ակնարկը.

... Իլ ֆօ քը տիրը,
Տ'ալէֆ քոն սուրիրը,
Թիւ մ'ա փրի լ'ամը՝
Էնսի ֆ'իւն ֆամը...

... Լ'իւն տիրէ լ'օթը
Լա պլանս է լա պրիւնը
Մ'օն ֆէ սան ֆրագը,
Բամ իւն էֆրագը...

Սկուառակի վրայ հնչած այդ երգը՝ լա պլանս է լա պրիւնը կը թուէր երկու քոյրերուն, թէ իրենց էր ուղղուած, ընտրուած պահին, ո՛վ զիտէ քանի՞-քանի՞ սիրտերէ փրցուած կարօտի նման...:

— Լաւ են դուած զիրար, նոթաներու պէս վեր ու վար, անոնց պէս սեւ ու սպիտակ...:

Երկրորդ անգամ պարոն Արմենակ, Երեքշարթի մը, կէսօրուան մօտ անակնկալօրէն եկեր-անկուէր էր դրան շեմին, թէ՛

— Մերինները զրկեցին, որ օրիորդ Սոնան տանիմ մեզի, ճաշի, — ինք եկած էր դործի հաղուստով:

— Այդ ի՞նչ տեսակ հրաւէր է, պարոն Արմենակ. լուռ օր է, — զարմացաւ տիկին Մարիցա, որ լուացքի չէր դացած:

— Մեծ քրոջ՝ Ագնիւին տարեկարծն է, ըսին ու զրկեցին...:

— Գոյրգ քանի՞ տարեկանի մէջ կը մտնէ, — Սոնա հասած էր վրայ եւ սուս առաջին աղղունչանը հեցնանքին:

Պարոն Արմենակ անմիջապէս չղատասխանեց. հաշիւին մէջ ալ սխալեցաւ, երբ ըսաւ ետքէն.

— Հազիւ քսանըմէկին մէջ, իմ մեծս է:

Սոնա պիտի տար երկրորդ հարուածը.

— Աւրեմն դուք, պարոն Արմենակ, կ'ըլլաք սանկ տասներինն տարեկան: Մեծ չէք եղեր... Ես ալ կը խորհէի, թէ իմ կրկին տարիքը եթէ չունիք, կ'ունենաք անպայման տաս մը աւելի...:

— Անձնագիրով այդպէս է. մեծցուած եմ այդքանով:

— Անշուշտ խելքն ալ միասին, չէ՞, — Սոնա սուր ակնարկով ուղեր էր փոշիացնել մայրը, որ հմայուած՝ փեսային կը նայէր:

Տիկին Մարիցա կը նայէր փեսային, բայց իր ակնարկը նետուէր էր զէպի ժամանակը, երբ իր Համբարն ալ այդպէս եկեր ու կանգնէր էր դրան

չեմին, թէ՛ «Մայրիկ, կ'արածնէ՞ք Մարիցային հետ երեկոյթի մը երթալը» : Իրիկնամուտ էր եւ Համբար հաղած էր կիրակնօրեայ դպեաս մը... Մայրը առարկեր էր, թէ... Եւ Համբար գլխիկսը վերագարձեր տուն : Մայրը լա՞ւ էր ըրած թէ գէշ, Մարիցա այժմ չէր ուղեր անդրազանտու անոր : Իրենք սփրկելով առին զիրար... Ափտո՞ս, որ երկար շապրեցաւ իր Համբարը...

— Անյարմար է, պարոն Արմենակ : Անոն զարծ ունի տունը :

Անսպասելիօրէն Սոնա միջամտեց մօր տառակաթեան :

— Ե՛ս պատրաստ եմ, պարոն Արմենակ : Արքան որ մաման իրուտենք ունի պատշաճութիւնները յարգելու, աքքան ալ դուք, պարոն Արմենակ, պարտաւոր էք նշանած խոզոցներու օրինաւոր կամ ոչ, ես պիտի ուղեմ ճանչնալ սպագայ շրջագատս լեցեայ անձերը...

— Գ'ըլլա՛ր, աղջիկս : Խօսեցնել պիտի տաս մեր վրայ :

— Դուն, մամա, հաշուէ, թէ տունը չես, եկաւ պարոն Արմենակ եւ զիս տեղ մը տարաւ : զայցի՛ եկար գուն եւ զիս չգտար տունը : Հարցուցիք Ծագիկանին կամ Լէսնիին եւ անոնք ըսին, որ եկաւ նշանածը տարաւ... Ապա՛ եկայ ուչ տանն, ու անքուն, թթուած տեսայ քեզ... Սոսքեր ըրիք, պատասխան ստացար : եղաւ անային մէճ աղջիկ-մօր միջեւ — «Պիտի չերթայիք, պիտի երթայիք»ի : Բան մը կը շահուէ՞ր... : Օրին, ես կ'ըսէի չեմ երթար : Իսկ դուն պնդեցիր, թէ պիտի կրտուէս, երթաւ... Բան մը գուրս եկա՞ւ մէճէն... Ի՞նչ կայ որ, դերերը փոխուեր են... Ըրիք-չըրիք ինձի հինգ տարով մեծցուցիր, յարգելի մամա... Այս անգամ ես եմ ուզողը... :

Արմանք-զարմանք կարեր էին մայրն ու նշանածը : այս ե՞րբ Սոնա լեղրւանի դարձաւ : Պարոն Արմենակ առաջին ներքին վախ մը զգաց այդ պահուն : Ինչ անուն ունէր այդ վախը՝ չհասկցաւ, բայց զիտցաւ, որ քաղաքին ամենպեղեցիկ աղջկան աէր պիտի դառնար... :

Դիմացի մայթին կտած-կանգնած էր Արմենակին կառքը : Սոնա անխօս՝ նստեցաւ եւ նշանածը քեց-տարաւ զինք, քաղաքին շրջանը ընել տալով, անոր հաճոյք պատճառելու համար :

— Հաւնեցա՞ր սրտոյտը, — առաջին խօսքն էր, զոր Արմենակ արտասանեց կէս Ժամուան մէջ :

— Չըսիք, թէ ինչո՞ւ չէք աշխատիր այսօր, — Սոնա կը հետապնդէր գրգապատճառը նշանածին իրենց գոյունն :

— Կ'աշխատէի : տուն հանդիպիմ, ըսի : ես ընդհանրապէս տուն չեմ երթար գիշերուան տաւը չեղած : մասայ-չմտայ տան, Ազնիւ քոյրս ըսաւ՝ դնա՛, նշանածդ բեր... :

— Այդպէս անակնկալօրէն... հտակցուեցաւ : անուան տօնի կամ տարեդարձի հարց չկայ, բայց թէ ի՞նչ կայ՝ յայտնի չէ, — Սոնա սեղմեց ակուաները՝ լինտերը արիւնհիւր չափ ու խածաւ շրթունքը : Քիչ ետք Չղայնատեթիւնը տեղի տուաւ հետաքրքրութեան : Կ'արժէր անակնկալի մը առջեւ դանուիլ : փարձառութիւն մը ձեռք ձգել էր միտքը, երբ Արմենակ զարկաւ դրան ճկիկը : Քիչ մը սպասու՞մը դրան առջեւ՝ տուած եղաւ առաջին լուրջ պատեհուութիւնը նշանածին, որ իր ուղեղով մտածէր : Առտուն, Արմենակին ըսուած էր, թէ լուացք պիտի ընեն եւ կէսօրուան ճաշը պիտի ըլլար ոսպով ձաւարի փիլու : Արմենակ ընդունած էր նետուած ձեռնոցը ու յայտնած, թէ ճաշը գուրսը պիտի ընէր, ուրեմն...

Դուռը բացողը եղաւ նոյնինքն Ազնիւ, որ չէր յուսար, թէ ինամին կրնար թոյլտարիւ աղջկան՝ նշանածին հետ գուրս ելլելու... լուս օրուան մը մէջ :

— Օհօ՛. քարի բլրայ երևիլը մեր տան մէջ, հարս ջոն. հրամէ՛, մը-
տիր ներս, — բառ, քաղեց երկու քայլ եւ մէկէն անյայտացաւ:

Ընդունարանը հին ձեւի խոշոր սրահ մըն էր, կահաւորուած ժամա-
նակին չյարմարող եւ նորոյթին կանակ յարձուցած կահ-կորստիով: Մէկ
քանի օթոցներ՝ դոյնը թոսած երեսով, Բիւստէյնի ու բարձրիկներ պատերուն
կռթնած, պաշտօնը անյայտ դարան մը՝ անկրկնի երկու պատերուն ջիթ տը-
ւած: Գեանին փուռած գորգը կը թուէր տեղէն բնաւ չկամ ու հող կլլած
հին կապերս մը, որ կ'երթար պատէ պատ: Լուսամուտին առջեւ երկու մարդ
զբազած էին նարդիի խաղով: Արմենակ զգուցնել տալու համար նշանածին
ներկայութիւնը խաղցողներէն մեծին, ձայնը քաշուածի շեշտով բառ.

— Հայրիկ, աես, թէ ո՞վ եմ բերեր:

Արծաթաօրծ, դիտարուել զլստին հետ կոշտ ու կոպիտ գէմք մը, որ
հայրիկին էր, հաւաքեց քիչ մը ժպիտ ու հրամցուց հարսնոցին.

— Հա՞. աս ի՞նչ ազուսը աղջիկ ես եղեր, Սոնա ջան. սիրեցի համար-
ձակութիւնդ, խօսքկապին օրը զիս մարսա բրեր, — գանալով խաղընկեր
երթասարդին, որ ապշահար ու դիշտալի աչքերով կը դիտէր Սոնան, բառ.
խոլմնածայն, — զրե՞ք, սրտոն Գարեգին, մեր հարսնոցն ի՞նչ պատաս-
խանեց, երբ զինք աղելու գացինք մեր Արմենակին համար — ոչ, ես բաց-
ւած վարդ չեմ. կոկոն ալ չեմ. փշոտ տատասկ եմ, որ բոյորիկ լեզուն ու
սիրտը խոցուեմ — անշուշտ բալորս հահապինք այդ խօսքին վրայ...:

Սոնա չկարմրեցաւ. ան անտարբեր էր հայր Աղայեանի հանդէպ, բայց
շուտով սկնալիկ փախցուց երիտասարդի նայուածքէն, որ կը մերկացնէր
զինք, կարծէք, այնքան լպրը չէր աչքաշողը...: Արմենակ տարա քովի
սենեակը, որ իբրև հիւրանոց կը ծառայէր: Հոն ոչ ոք կար: Սոնա նստե-
ցաւ աթոռի մը վրայ, մինչ Արմենակ կը մտնէր երկրորդ դուռնէ մը ներս
ու կը ծածկէր կտին դուռը:

Սոնա մնալով առանձին, իրեն անձանօթ այս տան մէջ, պիտի տպէր
իր փոքրիկ բայց խորունկ ողբերգութիւնը: Դես անձանօթ իրարու, օր մը
մայթէն քալած առնել, կառք մը քուսելով մայթեղրին, դանդաղօրէն քուսեց
իրեն հետ եւ վարիչը գլուխը գուրս հանած՝ կանչեց.

— Օրիորդ իշխանուհի՛, ելէք կտոքիս մէջ, տանիմ ո՛ւր որ կը փա-
փաքիք...:

Սոնա ունէր երկնազոյն աչքեր, զորս յտուց մարդուն վրայ, բայց
չկրցաւ ստատել, այլ շտտագունեցաւ. դէմքը կրակ առածի պէս էր.

— Գացէ՛ք ձեր ճամբան եւ առջեւնի՛ր նայեցէք...:

— Քու այդ երկնազոյն աչքերուն համար գժոխք երթալու աչքս առած
եմ, ո՛ւր մնաց մէկը կոխկռտելով՝ բանա նստիլը...:

— Գացէք ըսի. ստտիկան կը կանչեմ:

— Կ'երթա՞մ, կ'երթամ, մի ջլախնանար. բայց, վստահ եղիք, որ օր
մը օթոյիս մէջ պիտի տանեմ-տանիմ քեզ՝ մեր տունը:

— Սրիկա՞յ...:

Սոնա աչքով այդ մարդուն օթոյով կեցած էր անոնց տունը եւ տան-
ձին էր հիւրանոցին մէջ...: Ոտքի ելաւ, զլծաց, որ մօր խօսքը մտիկ չէր
բրած. հետաքրքրութիւնը, սակայն, կը ստիպէր համբերել դիտնալ, թէ ոչ՝
հիմա կրնար քայել դէպի գուրս, մթնոլորտէ մը, որ կը ճնշէր վրան այս
տան մէջ:

Քովի դուռը ճրտաց ծխնիլն վրայ եւ կնոջական դէմք մը մէջտեղ
եկաւ, ետքէն իրեն հետեւող երկրորդի մը դէմքը: Երբոր դուռը դոցուեցաւ,
չորս նոյնանման դէմքեր, թուխ, աղեղ, կեղծաւոր՝ մարմին ստացան ու

դարձան ապագայ իրենն սույլ ըլլալիքները: Չորսը մէկ նայեցան իրենց հար-
սընցուին, ժպտեցան եւ ամէն մէկը տուաւ ակնու մը: Ինչ առաջ վիճած էին
Արմենակին հետ:

— Գնա՛, նշանածդ տա եկուր, ըսիք եւ զինք դիմաւորող մը չեղաւ.
Ի՞նչ կը նշանակէ, — բարկացած էր եղբայրը եւ քայլերը ուս բարձրացու-
ցեր էին, թէ իրենք մտա տխուր չհասուրացային իր գալէն: Քայրերէն մէկը,
ան՝ որ գերձակուհի էր, ըտու կծու.

— Ի՞նչ է, թագուհի՞ մը եկաւ, թող սպասէ քիչ մը. եղած-չեղածը
լուացարարուհիի մը ազջիկն է. շատ որ գեղեցիկ է, կ'ըսեն, ինծի ի՞նչ...

— Քա ի՞նչ կ'ըսես, բերածը պող-խլան է, հի՛, հի՛, հի՛...:

Մէկը փակած էր Արմենակին բերանը, որ ձայնը չանցնի սրտը ու
գանէ հարսնցուն:

— Լա՛ւ, աղբորս. ազջիկներ, մտնենք իշխանուհիին քով, կաթնա-
հոտ մատները համբուրենք. ապագայ մեր գլխուն թագուհի պիտի դառնայ,
յարգենք լուացարարուհի կնոջ աղջիկը:

— Բարի եկար, հարս ջան, — եւ ամէն մէկը ելաւ ակնուին, մօտե-
ցաւ Սոնային, պառաւ անոր ճակտալը ու ետ տեղը նստեցաւ, նայն մաղթեր-
դէն թոյն մը պահած լեզուին տակը:

Մեծը, ան՝ որ կը կոչուէր Ազնիւ եւ երեսունին հասունութիւնը կը
կրէր զէմքին վրայ, եղաւ պատգամարբի նման լուրջ. իր մութ կաշին կը
ճառագայթէր պատուհանէն խուժած լոյսին մէջ:

— Բարբախտաբար կարգով ու կանոնով նստած ենք եւ մեզ ներկա-
յայնելու դժուարութիւնը պիտի չբաշեմ: Սկսինք աջէն՝ առաջինը Չարուկն
է. երեք տարի գերձակուհիի մը քով բան սորվեցաւ եւ բանով մը մեր վրայ
քաշել կու տայ ահա մեր հագածը. տան մէջ գերձակուհի է անվարձ. իր
չահը զուրսեցիներէն է: Անոր քովինը մեր բուրբիս օժիտներուն մէջ դրուե-
լիք ձեռագործը իրը պիտի ըլլայ, այսինքն՝ իր ձեռքէն ելածը: Վաղը քեզի
համար ալ սեզանի ծածկոցներ գարդարելու հոգը ճիտին պարտքն է, եթէ...
ինչ որ է: Եղբայրն է՞ քոք, բացակայ մը արձանագրենք. ներկայ չէ. իր ներ-
կայութիւնը զսրտցին մէջն է յարգելի եւ հրկանը տան մէջ: Ամուսնացած է.
անունը՝ Արեւափայլ. ստանուար կը դրէ, տակը կը դնէ Լուսին: Մենք
զինք ստիպուած ենք կոչել Արեւափայլ Լուսին: Իմ քովինս Խաթունն է եւ
խաթունի պէս ուժեղ թիւեր ունի, որ տան լուացքին դիմանան. լերան չափ
լուացք կ'ունենայ շաքաթը հեղ մը. կը ճմռթիկէ, կը ճերմկցնէ ամէն ինչ,
որ սեւերես չմնայ մեր առջեւ: Իսկ ես, համեստս, տան խոհարարուհին եմ,
եթէ մաման հիւանդ չէ. համեղ կերակուրներ պատրաստելուս համար, անե-
ցիներուն քիմքը անուշցած՝ զիս կ'անուանեն Ազնիւ քոյրիկ. ես դժգոհ չեմ
անունէս, քայց սա ալ ըսեմ, որ աղնուութենէն ոչ ոք չահ մը ապահոված է
ցարդ: Կը խնդրեմ, չժպտիլ վրաս. իմ ճարտար լեզուս ստացեր եմ դպրո-
ցէն, ուր միշտ տասը-խաչ կ'առնէի:

Սոնա անակնկալի եկաւ՝ հինգ տալով տուն մը հարս դալու փաստին
առջեւ դանկրով ինքզինք: Նշանաւոր սեղմ շրջանակի մէջ տեղի ունեցած
էր. մարդիկ խորամանկութիւն բանեցուցեր էին, ամուսնացածը միայն բե-
րելով երեկոյթին... Սոնա կրկին լեզուն խածնելու պէտքը դգաց:

— Ուրախ եմ հինգ տալ ունենալուս համար, — կեղծեց:

Սոնային սիրտը մէկէն կծիկ-կծիկ եղաւ ինքն իր վրայ: Այս ի՞նչ սոս-
կալի շրջանակ մըն էր, որ զինք պիտի առնէր իր մէջ: Ինք՝ խարտեաչ մա-
ղերով, սակերանդ այտերով, հրեշտականման իր պատկերին շուրջ պիտի
տեսնէր ամէն ժամ եւ ամէն օր, տարիներ շարունակ վեր ու վար, աջ ու ձախ

չարժող սեւաղէմ, դժնի դէմքերով սառանայակերպ հինգ վհուկներ, որոնց բախար չէր ժպտած — դոնէ չորսին — Սոնային թուեցաւ, թէ ինք ամիս մը ողջ չէր մնար չարողիներու այս ամբոխին մէջ: Ունէին սուր եւ օձային աչքեր, սկրթած երես, վհուկի մեր քաշուած քիթ, պատրաստ՝ ամէն բանի մէջ դայն խրելու, փորփրելով եօթ պորալ... Ու զարմանալի էր հաստատեալ, որ հինգ քոյրերուն մէջ մէկ հատիկ տղան ոչ մէկ դիժսով նման չէր քոյրերուն: Ան տուած էր թուէր ըլլալ ինչ որ բարեմասնութիւն կրնար կաշուի սերունդին հաշուին եւ բարգաճ իր վտայլչութեան, թողելով միայն դէշը իբրեւ ժառանգութիւն քոյրերուն: Արտաքին այդ գեղէն օգտուած Արմենակի, մոռցած էր սակայն հաւաքիլ նաեւ քիչ մը խելք, մտային ժիրութիւն, ունենալու համար իր անձնական դատողութիւնը: Գտարիկ էր գլուխը: Սոնային դժբախտութիւնը հոն էր. պիտի սենեկնար մարդ մը, որ պիտի հեռուէր քոյրերու տուած խորհուրդներուն...:

Ինչպէս մտած էին չորսը Սոնային քով, այնպէս ալ դուրս ելան քովէն, իրենց հետ քարշ տալով Արմենակը, որ ոչ մէկ բառ արտասանած էր: Մնալով առանձին, Սոնա տուաւ դուրսը երկու ավերուն մէջ. պիտի դժուէր, եթէ ինար այս վհուկներուն ճանկը.

— Պայման կը դնեմ առանձին տուն հարս երթալ. մերժեն, լա՛ւ... չմերժելու պարագային... Աստուած թող ըլլայ դատարար...

Սոնա ոտքի ելաւ: Մէկ վայրկեան այլեւս չէր ուզեր հոն մնալ: Քուլեց դէպի դուռը. նոյն պահուն բացուեցաւ կողմնակի դրան փեղկը եւ Արմենակ թթու-թթուած դէմքով ներս եկաւ.

- Պիտի երթա՞ն:
- Ո՛չ. պիտի չմնամ:
- Մայրի՞կը կարօտցար:
- Ո՛չ. ձեզմէ կշտացայ, — Սոնա ձեռքը նեակեց բռնակին. պիտի բարար դուռը: Նշանածը քաշել ուզեց թեւը: Սոնա կարուկ բացաւ դուռը, սուր եւ ոչնչացնող ակնարկ մը նետելով նշանածին.

— Խնդրե՛մ. քոյրերդ քեզի կը սարսեն. ըսելիք դեռ չատ ունին:

Երբ սրահ դուրս եկաւ, հոն գետինը ծալապատիկ նստեր էին չորս-հինգ հողի: Անոնց առջեւ, սիրողին վրայ դրուած էր տաշտաման խոշոր աման մը, լեցուն՝ սոսկախտոն ձաւար-փիրաւով. ուրիշ երեք փոքր-խոքունկ պնակներու մէջ փրփուր առած էր թանը. սոխի չկճեպուած խոշոր գլուխներ, անկարդ թափուած էին սիրողին վրայ՝ հոտ-հոտ. կար ազաման մը. դգալները պատրաստ բոնուած էին, յարձակման սկսելու, երբ հայր Աղայեան վերջացնէր ճաշուց ալօթքը: Գուցէ այդ էր պատճառը, որ ոչ ոք կըլլացաւ բառ մը ըսել Սոնային, երբ այս վերջինը կը կորէր սալոնին երկայնքը, բակ դուրս դալու համար: Արմենակ խեղճ ու անճարակ՝ հետեւեցաւ նշանածին մինչեւ ելքին դուռը. հոս միայն, խեղդուած ձայնով ըսաւ.

- Կ'երթա՞ն ուրեմն:
- Ո՛չ. չեմ ուզեր մնալ եւ տեսնել բաներ, զորս տեսնել պիտի չկամենայի: Ծնորհակալ եմ ճաշէն. արդէն կշտացա՞՞մ եմ...
- Կեցի՛ր որ տանիմ օթոյսդ:
- Օթօ շատ կը դանուի երթալիք տեղս դացող. մնացէք, աղուոր ճաշէն կը զրկուիք... Միայն, հարցում մը՝ ձեզ ո՞վ զրկեց հեռուէս:

— Ո՞վ. քոյրերս...

— Է՛հ, անգամ մըն ալ երբ զրկեն ձեզ մեր տունը, ձաւար-փիրաւը մեզի կը բերէք տաշտով, որ մայրս տեսնէ, թէ ի՞նչ աստիճանի մարդ էք եղեր... ուտած ատեննիդ:

Մայիսին վրայ կանգնած՝ Սոնա ձեռք ըրաւ կառքի մը, որ կանդ առաւ քովը: Ելաւ կառքը եւ կառքին մէջէն ալ ըսաւ.

— Ես'ւա, ետ տուն գացէք. օդը ցրտած է, կրնաք սրալ առնել, — հեղինկ ու կառքը սուրաց. ուրախ էր վարիչը, որովհետեւ նման գեղեցկուհի յաճախորդ բնաւ չէր հոտած իր կառքը...: Սոնա եթէ ետեւ նայէր, պիտի տեսնէր արձանացած կանդնիլը Արմենակին՝ արեւը աչքերուն մէջ, մայիսին վրայ, որ կը սահէր հեռան...:

Սոնա Առաքելեանի յիշողութենէն բնաւ պիտի չջնջուէր այդ օրուան դունկը պատկերին ապաւորութիւնը: Տան վերադարձին մայրը հոն չէր: Կանչուած էր Արուան Պէկեանց կողմէ գիշերային խնձոյքի համար պատրաստուելիք ճաշերու գործով... Իբրեւ օգնական-խոհարարուհի: Այս ալ ուրիշ պատմութիւն էր, որ պիտի գրուէր արիւն Մարիցայի կենսադրութեան մէջ: Մեծ մայրը, կըրք ակնոցները քիթէն կախած՝ ձեռագործի մը վրայ էր. Ծաղկանը եւ Լէոնին, ծաղկանման սիրուն-դունկը՝ նոտեր էին սեղանին առջեւ. դաս կը սերտէին: Սոնա անմիջապէս բազապատութեան եղբ մը փնտաց իր եւ նշանածի քոյրերուն միջեւ. հեռուանքը այն եղաւ, որ ան լեցուէր լալու պէտքով: Ասանց նայելու մեծ մօրը, աչքերուն մէջ քոյրերուն աղուս-բութիւնը գրկած՝ դնաց ներքին սենեակը ու ճամբայ տուաւ խուլ հեկեկոցին...

Ծաղկան ու Լէոնի թողելով իրենց դասը, վաղեցին ներս եւ ակամայ իրենք եւս ընկերացան Սոնայի լացին...

Աւ լացին մէջէն հեկեկոցով Ծաղկան պիտի յայտնէր Սոնա քրոջը, թէ իր մեկնելէն ետք, եկած էր Յասմիկ քեռակինը ու մաման նեղը դրած՝ իրեն համար: Յասմիկ քեռակինը ինքնիրմէ երած տրոպ.

— Որ ամուսինդ մեռած է, պէ՞տք է աղջիկներդ շուտ-շուտ ծախու հանես. ինչ ամօթ բան. ինչո՞ւ չմտածես, թէ լաւ բախտեր կրնան ելլել դիմացինն: Գոհարիկը ծախեցիր տասներկնդին. բսինք, լաւ եւ յարմար տեղ ինկաւ ու լսեցինք...: Հիմա ելեր Սոնան կու տաս մէկու մը, որ Կարապետին եղունկը չարժէ: Կը սպասէինք, որ Սոնան քիչ մը ինքզինք դանկէր, հասուննար եւ դուն, Մարիցա, մեղի հակառակութիւն ընելու համար, չսրս ստքով վաղեր ետ աղջկան բախտին դէմ. այրեր ետ դինք: Ե՛տ ըրէ նշանի մատանին...: Ես Սոնան իմ Կարապետին համար ընարեր էի...:

Սոնա կէս ակնով մտիկ կ'ընէր քրոջ պատմածը եւ սակայն աւելի կը ծանրացնէր լացին շեշտուածութիւնը: Ծաղկան պիտի շարունակէր հեկեկոցին ընդմէջէն.

— Մաման ըսաւ կորուկ, — ետ իմ արիւնէն սերած մէկու մը աղջիկ չեմ տար. մեղք է՝ մէկ. երկրորդ, որ խօսքս ետ առնել անպատուութիւն կը նկատեմ. երրորդ՝ Կարապետը Սոնայիս յարմար չէ...:

— Ինչո՞ւ հանրմ. տղուս ի՞նչ եղեր է. փաշայի պէս է:

— Փաշա է քեզի համար եւ իր առաքելուն դիլուն. հիմա բերանս բանալ մի տար, — ջղայնացաւ մաման եւ քեռակինը սոքի ելաւ.

— Ես իմ խօսքս ըսի. ետ կու տաս մատանին. անոր, որ նշաներ ետ աղջիկդ՝ դեռ իր ախոռին աղբը չէ մաքրած տակէն...:

Սոնային լացը մէկէն կանդ առաւ: Ի՞նչ ըսել ուզեր էր քեռակինը. տակէն աղբը մաքրել. ահա հանելուկ մը, դոր կրնար լուծել մայրը, քանի որ լուծ էր քեռակինին պիտողութեան առջեւ:

Աւելի ուշ, Սոնա՝ դասը հանդարտութիւնը, երկու քոյրերուն հետ ճաշեց հաւի մասջուրով եփուած փիլուքը դատ-դատ գրուած պնակէ, որոնց քով մածուեր, փոսիկ պնակներու մէջ՝ կը կազմէր համեմն ու գարգը փիլա-

ւին: Այն ասան աչքին առջեւ եկաւ տաշտանման խոշոր ամանը Աղայեաններու ոսոյնափրփուին: Մէկէն ախորժակը կանգ առաւ:

— Դուք շարունակեցէք ուտել, ես կշտացայ, — բտաւ ու ելաւ—զնաց Գոհարիկին քով, իր ասած աղաւորութիւններուն մասնակից դարձնելու քոյրը:

— Ըսե՛լ է այդպէս. ճաշի հրաւիրեցին եւ անճաշ քեզ ճամբեցին, — Գոհարիկ ընկճուած դէմք մը ցոյց տուաւ: Կը ցաւէր Սոնային ինկած գէշ բախտին համար, — մասնան է յանցաւորը. ես ընելու է նշանը, քանի ղեռ ուշ չէ...

— Հիմա ալ նոր պատմութիւն. քեռակինը եկեր իր երգը կ'երգէ...

— Ի՞նչ երգ:

— Կարապետին երգը...

Մինչեւ այդ սրահը, Սոնա գլխուն մարդ կապելու չկամութենէն կը տառապէր. իր մերժումները յատկ հիմք չունէին: Վաճանք երազ մը կը թուէր իրեն. ան գնաց եւ անոր կապուած յոյսը թառա—զնաց հետը: Ձէր սիւսեր Արմենակը, բայց կ'առէր ցոփ կեանք վարող այդ Կարապետը, որ հա—կառակ պարագային, կրնար իր զլխուն մեծ պատուհաս մը դառնալ...: Մայրը իր թքածը ետ առնել չէր կրնար. պիտի սնոցէր, ինք պիտի հակա—ճառէր եւ այսպէս պիտի ըլլար...: Ո՛չ սքի, բայց բնա՛ւ Կարապետ ցոփակ—եացին. անուշը ամբողջ քաղաքը կը պարտէր... Յետո՛յ. Արմենակը վայե—լուշ արտաքին մը ունէր. այդ վայելչութիւնը իրբեւ գէնք կրնար ծառայել իրեն սպառնացող մարդաց աչքին... Սակայն կար հոն, Աղայեանենց տունը տեսած պարոն Մանուկը, որ տունին մնայուն հիւրն էր... Ո՛վ ղեռէ Ար—մենակի քոյրերէն ո՞ր մէկուն փակած մակարոյժ մը: Միտքերու այս կէտին, Սոնա ներքին դող մը անցուց: Այդ Մանուկն ալ լարի պտուղ չէր. ինչպէս ալ կը նայէր իրեն... Անհամարժեքին պատրուակելով՝ ելաւ Գոհարին քո—վէն եւ իջաւ իրենց տունը:

Ժամանակը կը դանդաղէր: Երեկոյացաւ. քիչ—քիչ մութը ինկաւ թան—ձրը կուպրի պէս ասն մէջ: Լոյսը վառեցին: Ծագկանն ու Լէոնին յորանջել սկսան: Կուչա էին. ելան—մասն անկողին. Սոնա ծածկեց անոնց կողերը: Մեծ մայրիկը անցած էր դրացիներուն: Սոնա մնաց տաննձին: Միտքը կ'ոստոտէր. կը ցայցնէր կուրծքին վանդակը: Երաւ—կեցու հայելիին առջեւ... Այդ խարտեաչ, գանդրահէր, կապաւառչուի, սիրունատես աղջիկը ի՞նչն էր, որ կը նայէր իրեն քիչ մը անբարձր գէմքով: «Դո՛ւն, Սոնա Առաքելեան, զժբախտ աղջիկ ես, որովհետեւ շատ ես սիրուն. գեռ տատնըչորսը չըրա—ցուցած՝ մայրդ քեզ կու տայ մարդու եւ այդ մարդը կը կոչուի շեօֆէր Ար—մենակ. աղայութենէ հետո մնացած Աղայեան մը, որ դեռակերպ—չարողի, սեւ ստանանայ քոյրեր ունի, իսկ ինք գլուխէն մերկ՝ ղեղեցիկ արձան մը, որ ո՛չ խօսիլ գիտէ եւ ոչ ալ գատնիւ կարողութիւն ունի. հովը ո՞ր կողմէն փչէ՛ հակառակ կողմը կը փախչի: Ի՛հ, աղջի Սոնա, բախտ չունի՞ս. իսկ եթէ խելք ու չունենաս, փրկութիւնդ դանկա պուցէ ջրհորի մը մէջ ինձալ—խեղ—գըւելով...»:

Մէկէն երազը յիշեց. ի՞նչ երազ. բանաստեղծ Վաճանք միտքը ինկաւ եւ իր գրած ոտանաւորը յիշեց. ո՞ր էր պահած: Հեռացաւ հայելիէն ու փնտսեց «Այգեկաւք»ը եւ «Այգեկաւթ»ը իր ծոցին մէջն էր. ձեռքը խո—թեց, կուրծքերուն միջեւ ինկած փոսիկէն դուրս հանեց թղթիկը: Բացաւ ծալքերը. յիշեց արժող դանոնք. հիմա յատկ, պարզ կանգնած գտաւ տա—գերը աչքերուն առջեւ ու միտքը բերաւ Գոհարիկին ըսածը: Կ'ըսէ՛ «գրկա—բաց այգիիդ մէջ». այսինքն՝ դուն եւ ինք գրկուիք—պատկիք մէկ անկողինի

մէջ...»: Սոնա ամօթէն կարմրեցաւ եւ հրդեհ մը յանկարծ լստիլիկ ուղեց ամբողջ մտրմինը, երբ վերստին կարգաց սողերը՝ սեննալով քոռ լուսաբանութիւնը իբրեւ վկայութիւն.

... Մէջն այգիին գրկաբացիդ,
Դուն իմ տէրս, ես քեզ՝ ստուեր...

Չկրցաւ դասել բարկութիւնը, որ մոլեղնութեան մէջ պատաստանել սուաւ թուղթը մանրուած կտորներու: Անամօթ քեզի...: Յետոյ անաւօր քեզին անխոռունակ խոյս պիտի տար եւ տեղը թողուր այրուցք մը, որ, ի վերջոյ, զղջում կը նշանակէր: Նետուած պատասխիներուն ետհաւաքը դարձաւ կիրք ու մեքենական: Փորձեց դանել կտորներուն կարգը. անօգո՛ւտ աշխատանքը զինք բրաւ յուստիար:

— Ափտո՛ս եղաւ, — ըսաւ Սոնա եւ քանի որ յիշողութիւնը թարմ էր, պատուեց դատաստեարէն էջ մը սպիտակ թուղթ եւ իր ձեռագիրով դրեց մաքուր, պարզ, խնամքով «Այգիկութեան» ամբողջութեամբ, դոց ըրածի պէս: Եւ երբ հասաւ մերջին սողին, ձեռագիրը շեղագիր դարձաւ, օ՛յն միտքէն, թէ ինքն էր այս անգամ, որ ազուն գրած կ'ըլլար.

... Մէջն այգիին գրկաբացիդ,
Դուն իմ տէրս, ես քեզ՝ ստուեր...

— Ո՛ւր ես, Վահան. ո՛ւր...: Չդա՞ս ազատես քու այգիդ ուրիշներու տակոխան ըլլալէն...: Ո՛ւր ես, անպիտան տղայ... Վահան, Վահան, Վահան... «Այգիկ՝ն մէջ գրկաբացիդ»...:

Սոնա ինկաւ կրկին անկողինին վրայ ու լացաւ երկար-երկար ու քունը մնաց անկիւնը կկզած, մինչեւ որ մայրը եկաւ զինք դատու անկողինին վրայ կծկտած վիճակի մէջ.

— Ինչո՞ւ արթուն ես մնացեր, աղջիկս...

— Կը սպասէի գալուդ:

— Չըսի՞ն թէ կ'ուշանամ, — այս ըսելով ան ուղղակի զնաց խոհանոց: Ձեռքէն կախ ունէր խոշոր ծրար մը, զոր սկսաւ բանալ, — «Յի՛ւր Սոնա. բան մը դիր բերանդ. լաւ-լաւ բաներ բերեր եմ ձեզի... Հողիս երաւձոնի խրախճանք էր. ես սխալուստ տալի. ըսին՝ առտար ասոնք, թող աղջիկներդ համտես ըլլան... Յանկարծ միտքը ինկաւ. կողովը, — ամա՛ն, մոռցեր եմ կառքին մէջ:

Յուսաբեկուած, որ աղջկան լաւ բան մը հրամցուելիքը մնացեր էր կողովին մէջ, վերագարձաւ Սոնային քով. նստեցաւ զիմացը: Երկուորեակ վիշտէ տառապածի գէժք ունէր հիմա մայրը — աղջկան սիրտը կտորելուն եւ բանով մը դայն չկարենալ գոհացնելուն խառն զգացում մը.

— Սպասեցի՛ր, որ յոգնած վիճակիս վրայ աղ ու սրցեղ ցանես, գիտեմ. իսկ դուն դիտե՛ս իմ քաշածներս... Փոքր էիք եւ ես անօգնական էի. դեռատի այրիի մը քաշածը Աստուած չցուցնէ ուրիշին: Դեռատի, աղուոր, այրի կինը հազար ու մէկ հոգիի աչքը կ'ունենայ վրան. պիտի պահեպաշտպանես պատիւդ եւ պատիւը աղջիկներուդ, որոնք տուած են մօրը աղւորութիւնը վրանին... Է՛հ, Սոնա՛, ես պատուով տարի ծանր բեռս եւ ուղեցի պատուովս պաշտպանել աղջիկներուս պատիւը, մա՛նաւանդ քուկդ...: Մէկ աղուոր աղջիկ իր ետեւէն կը տանի հազար ու մէկ պատուհաս...: Աճապարեցի թերեւս. բայց, խօսք է, կ'ըսեն, տառջին բախտը խիղճը չի տան-

ջեր... : Հայրդ չկայ, ծանօթ-ազգական՝ իրենք շուն ու գազան... Չեն մը-տածեր լաւը, այլ կը ցանկանն խել ինչ որ մեզք է կամ ապօրինի իրենց հա-մար... Արմենակ մը կրնայ շատ աւելի լաւ ըլլալ, քան սա քեռիիդ Կարա-պետը, որ հօրը վրայ բեռ է եւ քաղաքին մէջ քաղաքի չձգած անուղղայ... :

Սոնա լուռ էր ու մէկ տկանջով կը լսէր մայրը. յանկարծ յիշեց քե-ռակինին խօսքը .

— Ի՞նչ կը նշանակէ՝ դեռ ախտովն աղբը չէ մաքրած տակէն... :

— Նշանածիդ հայրը տխուսարան է եղեր. դադթականութեան՝ ախտ-ուն մէջն է պատկեր, — ըսաւ մայրը դժգոհ :

— Հիմա ալ կը մնայ այդպէս, — խայթեց Սոնա :

— Ի՞նչ հրամայուցին, — մայրը շրջել ուզեց խօսքին տեղը. արդէն կը փնտռէր առիթը : Սոնա տկամայ տուած կ'ըլլար առիթը :

— Ուրքե՞ր :

— Որո՞ւ խօսքը կ'ընէինք :

— Դեռ աղբը տակէն չմաքրողին :

— Լուրջ խօսէ. նշանածենքդ ի՞նչ հրամայուցին :

— Բան մը ունի՞ն, որ հրամայեն. կուշտ դացի եւ անօթի դարձայ... :

Անոր քոյրերը ուզեր էին հարսնցուն կարել-ձեւել. անխելքը եկաւ-տարաւ, որ դիւ հառուրտան. եղաւ. հոտուրտացին եւ համբոցին... :

— Անօթի՞ ես :

— Ոչ. խոհարարական ձերքէդ օգտուեցայ ես ալ քոյրերուս հետ... :

Անտացի խօսքիդ եւ դացի խոսքին հետեւը. բարեւոյ չեղաւ. փեսացուդ ալ կնիկ դարձաւ քոյրերուն լեզուին տակ... : Դրան ետեւէն լսեցի. իրարու բեր-նէն խօսք կը խլէին, որ դիւ սեւցնեն, որքան կրնան... : Ինծի պէս աղջիկ-ներուն աչքը դուրսը կ'ըլլայ եղեր, առաւերը տուն կը բերէ եղեր... : Փօր չ'ունենար եղեր... : Ի՞նչ ըսել է փոք ունենալ... :

— Պարսպ խօսքեր են բոյորը, աղջիկս. տկանջ մի տար. վաղը երբ ամուսնանաս, էրիկդ անոնց բերանը կը դօցէ :

Սոնա չէր յուսար նշանածէն նման արարք մը. կամազուրի, միամիտ, դիւրահաւատ մէկին էր. այդ բանը իրեն ձեռնառ. էր նոյնքան, որքան քոյ-րերուն. կը մնար հականը. պայման էր իրեն համար, որ տղան առանձին տուն բանար :

— Սկիզբները չէի ուզեր. հիմա, յո՛ւ, մամա. առանձին տուն կը բռնէ՛ ըս. չի բռներ՝ մատանին կը նետես երեսին, — ըսաւ Սոնա շատ լուրջ, փճապան, այնպէս, որ մայրը առարկութիւն չընէր. բայց մայրը կրցաւ հասցնել անմիջապէս .

— Նայիս կարողութիւնը կը ներէ՞... :

— Ի վիճակի կամ ոչ, ա՛յս է պայմանս. ես ախտ մտնելու միտքէն փախուք ունեցայ. ախտ, ուր կատրուած են կատրած, նենգամիտ հինգ տալ-ջորիներ, որոնք աքացի տարով եւ միտերս բզկտելով՝ օր մը դիւ ողջ պիտի չձգեն հոն... : Տեսնէիր, թէ ինչպէ՞ս ոտպափխլաւ մէկ մուրէ կ'ուտէին, դեռինը նստած... :

— Ոտպափխլաւի համար կանչած էին քեզ. վա՛խ, վա՛խ, աղջի՛կս. անօթի ես մնացեր. էլիք անուշ բան մը դիւ բերանդ, — տիկին Մարիցա կ'անդիտանա՞ր, թէ անուշ բաները կտրովին մէջն էին եւ կողովը ահա կը դարնէր դրան գանդը : Անշուշտ որ կտրովը չէր, այլ՝ կառքին վարիչը ետ եկողը : Տիկին Մարիցա հազար անգամ դուցէ չնորհակալութիւն յայտնէր մարդուն. ան իր տունը տարած եւ ետ կը բերէր կողովը, որովհետեւ մա-

սամ Մարկոսն շատ պիտի մտահոգուէր, եթէ վաղը բերելու ըլլար ուրեմըն, շունչը կրկին հոս կ'առնէր ահա :

— Հարա՛ր, հարա՛ր շնորհակալ եմ քեզի, Ապու Չաքարիա :

Մինչեւ պատկուիրը, Սոնա սաք չզրաւ Աղայեաննոց շեմէն ներս : Անոնք ընդունած էին, առանց առարկութեան, աղջկան կողմէ պայծամը : Նոյն փողոցին վրայ նայող երկու սենեակնոց տուն մը վարձեցին. կահաւորեցին թեթեւօրէն, համապետով Սոնան, թէ ետքէն պիտի ճոխացուէր կամայ-կամայ . . . :

Ու պատկը տեղի ունեցաւ սովորական, բնորոշուած կարողով : Ամէն ինչ լաւ կ'երթար : Մէկ եպիսկոպոսով, երկու քահանայով պատկազրութիւնը վերջ դասաւ : Հարս ու փեսայ, մօտիկ ազգականներ կարգի մտան եկեղեցիին զաւրթին մէջ, շնորհաւորական մաղթանքներ ընդունելու համար : Հոս էր ահա, որ վրվուկը փրթաւ : Հարսին երեսը համբուրած ատեն դրացուհի թաղուկը փափաց Սոնայի տկանջին .

— Սոնա, երթալիք տունդ պարպեցին, կարասիները փոխազրեցին իրենց բնակարանը . . .

Սոնա նախ ապուշ նայուածք մը նետեց կնոջ երեսին, ապա սուրբ պէս այդ նայուածքը ինկաւ քովը կանդնած Արմենակի դէմքին, բթացաւ-եղաւ կոր դիւ . . . : Եւ չզիտցան մարդիկ, թէ ինչո՞ւ հարսը մէկէն մարելով ինկաւ առջեւը կարգի մտած կնոջ մը գիրկը . . .

Փոյսովուրդին մէջ լեզուները երկարեցան .

— Հարսը մարեցա՛ւ :

— Ինչո՞ւ մարեցաւ :

Աղայեան քոյրերը .

— Դե՛ւ կայ մէջը. լուսնոտ աղջիկ տուին ազգարկիին . . . :

Գոհարիկ կը ճչար .

— Տուներնի՛ց քանդուի, ստախօտ-խարեբանե՛ր, քրոջս զլուխը կե-րա՛ք, քոյրս սպաննեցի՛ք . . .

Ու հարց ծաղեցաւ մէկէն, թէ հարսը ծնողքին կը պատկանէր . . . Հրանդ եւ Գասնիկ բռունցք ցոյց տուին. անոնք կ'ուզէին Սոնային ուշադնաց մարմինը տանիլ մօրանց : Աղայեան քոյրերը, բարձրազայակ կը պոռային ճաթած ձայնով .

— Տարէ՛ք, ասրէ՛ք, խէրը տեսէ՛ք ձեր ինկնաւոր աղջկան :

Արմենակ եւ Գարեգին զրկած էին Սոնան եւ խլխլուքի մէջ էին Հրանդի եւ Գասնիկի հետ :

— Թողէ՛ք, բժիշկի տանինք . . .

— Աղջիկը կը մեռնի, բժիշկ կանչեցէք :

Ու պատկապիր եպիսկոպոսին վճիռն էր .

— Հարսը ասրէք փեսայենց տունը :

— Այո՞, այո՞ . . . հիւանդատարը շրկեցէք, հարսը եկեղեցիին մէջ ին-կաւ, մարեցաւ . . . Այո՞, այո՞ . . .

Ծաղկանն ու Լէոնին տաք-տաք կու լային. անոնց համար իրենց քոյրը մեռած կը թուէր, որովհետեւ կը զգային, թէ ան այլեւս օտարին տան բան-տարիկալը պիտի մնար ընդմիջաւ . . .

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շարունակելի — 2)


ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ա Ր Թ Օ

Տ Է Ր

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

Հ Ե Տ



Քեզիզիկըն Զըրչ Սքրիթի աչ կողմը Լոնտոնի նշանաւոր հաշարաններէն մէկը կը գտնուի՝ Armenian Restaurant: Աստիճաններէն վար՝ մուգ ապակիներու եւ հայեղիներու հաշարահէն առաջ կայ պառ մը, որուն պատերը «օծուած» են Հայաստանի փարտէսներով, հայկական բոլոր փարտէսներով, հին դարերէն մինչեւ մեր օրերը: «Օտարներուն մեր պատմութիւնը ծանօթացնելու լաւագոյն ձեւերէն մէկն է», կ'ըսէ Արթօ Տէր Յարութիւնեան, 38 տարեկան, քիկնեղ, քուխ: Լիբանանահայ արուեստագէտներուն հաւանաբար ծանօթ է այս անունը, 1974ին Կալքրի Քոնքէմփորէնի մէջ ցուցադրած է իր պատատները, որոնց քեման հայկական ջարդն էր, եւ ընդհանուր խորագիր կը կրէր «Մոռցուած հախաՀայերս»: Իսկ անգլիացի հասարակութեան առաւելաբար ծանօթ է իբրեւ կերագէտ (gastronome): Լոնտոնի եւ Մանչեսթըրի մէջ ունի հայկական հաշարաններու ցանց մը: Արթօ Տէր Յարութիւնեան կը բաժնէ հետաքրքրութիւնները առուստրի եւ իր ստեղծագործութիւններուն միջեւ — երաժշտութիւն, նկարչութիւն, բանաստեղծութիւն: Անցառ բաժանմունքի մը մէջ իր նկարչական աշխատանոցն է — պատատներուն վրայ պայպանձած մարդանկարներ եւ գոյներ: Դուրսը անգլիական գարուն էր, դառնէն ներս չմտնող երկչոտ ազգկայ պէս: Ներսը՝ հայ բարեկամներ, աշխարհի եօթը կողմերէն, վրացի իշխան մը, որ ի վերջոյ դադրեցաւ խօսելէ եւ լեպապլի հոտը, որ երբեք չզապրեցաւ: Ճաշարանին անկիւնը՝ կոյր սեղան մը, ուր տեղի կ'ունենայ հարցազրոյցը, իր բանաստեղծութիւնները կարդալէս ամիս մը ետ: Խօսակցութիւնը հեզասահ է, հանդարտ, համոզուած կարծես, որ աշխարհի բոլոր հարցերը արուեստի բնագաւառին մէջ քրտնելով է, որ պիտի լուծուին:

Վ. Թ. Թերեւս կը գրազիւք հաշարա-
նով, որովհետեւ խոհանոցն ալ բանաս-
տեղծութեան պէս՝ անվերջանալի է եւ
կենսական:

Ա. Տ. Սկսինք Ալում-Եւայէն. մարդ
հազուստ հազուեկէ առաջ բան մը պէտք
է սուէր: Աւտելլը առաջին արուեստն էր.
ինձորը քաղելու ձեւ մը կար: Իսկ ճա-
շարանը թէ՛ արուեստ է, թէ՛ դիտու-
թիւն: Շատ հետաքրքրական թեքնիք է.
կ'աննեւ հում նիւթը, կը պատրաստեն
եւ կը մատակարարեն: Մենք կը ծախենք
մարդոց, սրնոք արդէն իրենց տուներուն
մէջ կրնան ուտել, ուրեմն իրենց տունէն
պիտի քաշենք եւ հոս բերենք: Ամէն
մարդ կը ծախէ իր դործերը՝ մըցելով
մեծամասնութեան դէմ: Ես անդլիացիին
հայկական ճաշ կու տամ. ան արդէն իր
հարկւարուոր ճաշերը ունի. պիտի քաշեմ,
ինձի բերեմ: Ուրեմն շատ լաւ եւ մա-
նուոր բան մը պէտք է ներկայացնեմ:
Պէտք է միշտ տարբեր ըլլալ ուրիշներէն:
Հոս միջանկեալ բսեմ, որ հայ գրողնե-
րուն գործերն ալ եթէ իսկապէս տարբեր
ըլլային, շատ աւելի թիւով մարդիկ պի-
տի հետաքրքրուէին: Բայց դժբախտու-
թիւնը այն է, որ կը մնան նախկին ձե-
ւերուն մէջ. չեն մըցիր մեծամասնու-
թեան դէմ:

Վ. Թ. Նաեւ լեզուի հարցը խնջըն-
դատ է. հայերէնով գրուած բանաստեղ-
ծութիւն մը չի կրնար հետաքրքրութեան
մղել օտար մը:

Ա. Տ. Թարգմանարար կ'ըլլայ:
Բայց գործն է կարեւորը. լեզուին է հիմ-
նականը: Ըսելիք եթէ կայ՝ հետաքրքր-
բութիւնը չ'ուշանար:

Վ. Թ. Այս հարցադրոյցը մէկ փաս-
տըն է ասար: Կը գրե՛ք անգլերէն լեզ-
ւով: Բայց ոգին, ինչպէս կ'ըսեն, կամ՝
սիրտապետոյ նիւթերը արդէն իսկ մեր
աւանդութեան, պատմութեան հետ ա-
նրկչաւքիւն ունին. միեւնոյն ժամանակ՝
ժամանակակից կեանքի, քաներորդ դա-
րու մտադրու մասնութենք են:

Ա. Տ. Ճիշդ է, այս: Բայց ինչո՞ւ
գրել: Ես կը գրեմ եւ ինձի համար գրա-
հանութիւնը երկրորդական հետաքրքրու-
թիւն մը չէ. բայց բնաւ ինքզինքս գրող
չեմ նկատեր: Շատ լաւը կը մտնեմ
նկարազիրոս է սրեւէ բանի փրօթէշընը
մտնեցումը: Կը գրեմ անդլերէն լեզուով,
որովհետեւ դժբախտարար հայերէն չեմ
կրնար գրել. չեմ կրնար հայերէնով ար-
տայայտուիլ այնպէս՝ ինչպէս կ'ուզէի:
Բայց միշտ ըսած եմ, որ օր մը պիտի
հայերէն գրեմ. առայժմ դժուար է: Ես կը
գրեմ իմ մասին, դիտե՞ք, ես իմ մասին
կը գրեմ: Ես ս'մ կեմ. հայու ծագումով
անդլիացի մըն եմ: Իրականութիւնը այդ
է. Անդլիա մեծցած, անդլիացի դարձած,
անդլիական ուսում ստացած: Մէկ խօս-
քով՝ արեւելացիի ծագումով եւրոպացի
մըն եմ. արդէն նկարագիրս այս երկու-
քին խառնուրդն է: Ձէի ուղեր ս'չ եւրո-
պացի ըլլալ, ս'չ արեւելացի. ուրեմն այս
երկուքը միախառնուեցան, եւ եղայ ես:

Վ. Թ. Ձեի ուղեր, քէ ոչ՝ հնա-
բաւոր չեր. որովհետեւ արիւստահայ ե-
րիտասարդութեան համար կայ երկուու-
թիւնը, որեւէ երկրի չկարենալ լիովին
պատկանելու տազմապը, որ հետզհետէ
անոյ մտատանջութիւն կը դառնայ:

Ա. Տ. Նախ եւ առաջ ամէն հայ առ-
կոտով հայ է: Իմ կարծիքով՝ այն հայը,
որ Հայաստանէն դուրս կ'ապրի՝ արդէն
հայ չէ, մեծ սաստով հայ չէ: Այն հայը,
որ Վրաստան կ'ապրի, ընդամէնը՝ սահ-
մանէն հինգ մղոն անդին, վրացի հայ է.
Իր մէջ ասար առ հարիւր կամ եօթանա-
սուն առ հարիւր — այդ ալ անձէն կա-
խում ունի — վրացի կայ: Իսկ մենք, որ
հազար տարի Հայաստանէն դուրս ապ-
րած ենք, թուրքերու մէջ ապրած ենք.
Թրքահայաստան կ'ըսենք, բայց թուրքիա
էր, իրականութիւնը այդ է. մեր հայրերը
թրքերէն կը խօսէին, կերպով մը քրիս-
տոնեայ թուրքեր դարձեր էին: Անշուշտ
կային դուռ հայկական գաւառները, բայց
թրքական աղբեցութիւնը որոշ ձեւերու
մէջ մնացած է մեր մեծ հայրերուն եւ
հայրերուն քով: Մենք ուրեմն չենք կրնար
բսել, որ մենք հայ ենք. իմ զգացումս

իրը մարդ է. նախ եւ առաջ մարդ եմ. բայց իմ մէջս կայ տակոս մը, որ զուտ հայ է: Այդ կու գայ նախ իմ ազգանունէս, եւ յետոյ — հաւատաք կամ ոչ — եկեղեցիէն, եկեղեցին է իմ ծագումս: Ընտանիքս եւ եկեղեցին է, որ զիս հայ կը պահէ: Իմ մնացած շրջանակս հարիւրէն ութսունը օտար են. ուրեմն ես անգլիացիին վրայ տուաւ լաթին ունիմ. անգլիացին հարիւր տակոսով անգլիացի է, եւ հարիւր տակոս անգլիացութեան վրայ ունիմ նաեւ քսան տակոս կամ աւելի՝ հայութիւն:

Վ. Թ. Հայութիւն ունենալը ինձի համար կոտորակներու վերածուող բան մը չէ, սրովիետեւ յստակ չափանիշ մը չունիմ եւ չեմ կրնար հաւատալ, որ միայն Հայաստանի մէջ ապրող հայն է «հարիւր տակոսնոց»: Այս մասին աւելի ուշ կը խօսիմք: Հիմա՝ ինչ որ կ'արտայայտուի ձեր բանաստեղծութիւններուն մէջ ընթերցումի ընթացքին՝ *նախալճիս* մը, *հայերէնով՝ հայրենաբազումութիւն* մը կայ ձեր ծննդավայրին — Հալէպի. կան այնտեղէն դրուագներ, անձեր, որոնք հոս հասած են եւ հիմա բան մը կ'ըսեն ձեզի: Հարցումս սա է՝ Հալէպը ձեզի համար յո՞ւշ էր, մանկութիւն էր, թէ ոչ հայութեան կապող բան մը. որովիետեւ ձեր մանկութեան շրջանին Հալէպը հայկական եռուն գաղութ մը եղած է:

Ա. Տ. Հալէպը ինձի համար մանկութեանս առաջին ու թ առերիներու կեանքն է միայն: Արդէն ամէն բան հարիւրէն հարիւր հայկական էր: Ես *կեանքիս ընթացքին աւելի շատ արար տեսած եմ Լոնտոնի մէջ, քան թէ Հալէպի: Աւելի արարերէն լսած եմ հոս, քան այլուր: Որովհետեւ Հալէպը, որ ես կը յիշեմ, եւ նախալճիսն հոն է — ամէն մարդ որքան ասորիքը ամէն, մազերը ճերմկին, աւելի կը սկսի իր մանկութիւնը յիշել — սլարօզայէս Հալէպը առանց հայերու չեմ կըրնար երեւտակայել: Թէ՛ կ'ուզեմ այցելել Հալէպ, թէ՛ չեմ ուզեր, որովհետեւ կը լսեմ, որ բոլորովին ասորեր է, սլոմի*

չուզէի ինքզինքս յուսահատութեան նետել: Ուրեմն Հալէպը իմ ծագումս է. ես Հայաստան չեմ ծնած, ես ծներ եմ Հալէպ. ա՛յս է կարեւորը: Հայութիւնս ըսկրած է Հալէպի մէջ: Այդտեղ հայեր էին — ինչ որ էին — թիթեղեայ տուներ, սովամահ էին, չքաւոր. այդ է, որ ճանչցայ եւ կեանքս ստեղծուեցաւ այդ Հայաստանէն: Ուրիշ Հայաստան է Պէյրութիւնը, Ֆրանսայիներ: Իւրաքանչիւրս տարրեր հայաստաններ ունինք. կախում ունի թէ ուրկէ՛ կու գանք:

Վ. Թ. Իսկ ամէնէն Էսկանը՝ Հայաստանը, ի՞նչ դեր եւ կշիռ ունի ձեր մշտնապահութեան մէջ:

Ա. Տ. Հայաստանը ինձի համար կը նշանակէ իմ արիւնիս տեղը: Կրնաք երեւտակայել ձմերուկ մը, որ Ազանիս կը բուսնի, բայց իր խկական տեղը Վանն է: Եթէ այդ ձմերուկին հարցնենք՝ *կ'ըսէ որ օֆէյ, շատ յու տեղ կ'ապրիմ, հոս մեծցեր եմ, սպանացիներուն հետ է գործրս, բայց իմ տունս, սկիզբս հոն է, եւ հոն չեմ եղած հազար տարիներէ ի վեր:* (Ձմերուկի պատմութեան մէջ չորս հարիւր տարի է): Իմ պարագաս նոյնն է. ես Հայաստան մինչեւ այսօր չեմ գացած, Հայաստանի մասին կը կարգամ. միաքիս մէջ Հայաստան մը ունիմ, որքան ալ իրապաշտ ըլլայ մարդ՝ զիտէ, որ իրականութիւնը այդ չէ: Բայց ինչ ալ ըլլայ՝ այդ միտի վայրն է, զոր կրնամ կոչել տուն:

Վ. Թ. Ձեր մասնագիտութիւնը նախապահութիւն է. եւ ձեր գլխաւոր ըզբաղումը՝ երաժշտութիւն. յօրինող մըն էք: Ուրեմն այս երկուքին Էսկան յատկանիշները հասած են ձեր բանաստեղծութիւններուն: Այսինքն՝ բանաստեղծութեան մէջ քայլ առ քայլ կ'ընթանաք միշտ ալ պատումը հիմէն կը սկսի եւ մինչեւ վերջ կը հասցնէք: Ասիկա նախապահութեան ըրածն է: Յետոյ՝ երաժշտականութիւն մը կայ, հեգաստիտութիւն մը: Կ'ուզէի, որ խօսիք այդ երկու

արուեստներուն, երբորդ արուեստի մը՝ լեզուի աշխատանքի ընթացքին միախառնումի մասին:

Ա. Տ. Քրոսիկըս ասկէ 2000 տարի առաջ բաժն է շատ պարզ բան մը՝ ճարտարապետութիւնը արուեստներու հայրն է: Կը հաւատամ, որ այն անձը, որ ճարտարապետութիւն կ'ուսանի, արդէն կըրնայ նկարել, գծել, գրել — գործանայի՞ր է: Պատմութեան մէջ կը տեսնենք, որ ամենամեծ նկարիչները եւ բանաստեղծները եղած են ճարտարապետներ: Եւ երբ 20րդ դարը կ'ապրինք, որ փրօֆէշընրը մի գար է, եւ ամէն մարդ մասնագէտ է. թերեւ մարդիկ կը մասնագիտանան, որովհետեւ արիւշ բան չեն կրնար ընել: Սակայն կան մարդիկ, ընդհանրապէս արուեստներու մարդէն ներս, որ չորս-հինգ բան կ'ընեն: Պարզ է, արուեստը արդէն հնարել ըսել է եւ լեզուն սորվիլ: Կրնաս հայերէն սորվիլ, հայերէն խօսիլ, կրնաս գրել հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն. եթէ ըսելիք ունիս՝ հարց չէ լեզուն: Կրնամ գծելով ըսել, երգով ըսել, կրնամ նկարել, արձան սլաքաստել, շէնքի մը ճարտարապետութեամբ ըսել, քարով ըսել, երգով ըսել. ըսելիք ունենայն է կարեւորը: Անշուշտ շատ մարդիկ կան այսօր, որ կը գծեն, կ'երգեն, կը նուագեն եւ ըսելիք չունին, արիւշներս քան բաժնիքը ձիւթի պէս կը ծամծամեն: Ի՞նչ ըսելիքը՝ իմ կարծիքովս, ներսէք կու գայ:

Վ. Թ. Միայն ըսելիքը չէ կարեւորը, նաեւ ինչպէ՛ս ըսելն է:

Ա. Տ. Թեքնիք է: Երկու տարուան մէջ Գոյէճի մէջ կը սորվեցնեն: Այսօր Ամերիկայի մէջ կարճ պատմութեամբ գրելու դասընթացներ կան:

Վ. Թ. Բայց թեքնիքը փորձառութեամբ կ'ըլլայ: Անդադար աշխատելով այդ տարածութեան մէջ:

Ա. Տ. Ճիշդ: Հարկը նկար կը գրծես, հարկում է կերտողն է, որ քեզ կ'ար-

տայայտէ: Շատ օփիւսներ կ'ունենան, բայց կը տեսնես, որ քանկերով օփիւսն է քու իսկական օփիւսը: Բայց դժբախտաբար մենք թեքնիքի հետէ կը վաղենք եւ կը մոռնանք թեքիքը:

Վ. Թ. Արդեօ՛ք ամո՞ք համար, որ ինչպէս Պեքէք բաժն է, պէտք է որ գրենք, տեւաբար արտայայտուիմ ըսելու համար, որ ըսելիք չունիմ: Իսկ ձեր արտայայտութիւնները ո՞ր թերթերուն մէջ հրատարակուած են:

Ա. Տ. Նախ համարարանի արուեստի թերթին, յետոյ՝ այլապէս անգլիական թերթերու մէջ, կան Poetry workshop-ի մէջ, Events-ի, London Magazine-ի, Finnick-ի եւ Դրագարկի, բայց մեծամասնութիւնը դեռ կը քննայ, ուր որ պէտք է միշտ մնայ, որովհետեւ բանաստեղծութիւնը շատ անձնական բան է: Առաջին ստանաւորս աստ տարեկանին գրած եմ: Քսան տարեկանն է ի վեր անդ լեզուով արտայայտուած եմ: Իսկ նկարչութիւնը սկսած եմ քսանը հինգ տարեկանին. կը յիշեմ նոյնիսկ օրը՝ պարզապէս ձանձրոյթէս սկսած եմ գծել:

Վ. Թ. Իսկ գրե՞լը:

Ա. Տ. Պատահականօրէն: Հայէպ. Կիլիկեան գլոբոսի թերթին համար:

Վ. Թ. Եւ վստահաբար հայրենասիրական նիւթ մըն էր:

Ա. Տ. Ոչ, բացառաբար: Մշակին դավքն էր: Բայց հետագրքսկանը այն է, թէ մարդ ինչո՞ւ կը գրէ: Ես հիմա կըրնեմ ձեզի: Երբ Անգլիա եկայ, անգլերէն չէի գիտեր. հայ բարեկամներ չկային եւ անգլիացի չէի ճանչնար: Ամէնէն գծուար բանը աշխարհի մէջ՝ առանձին գրայն է: Առանձին զգացի՞ մինչեւ որ կարողացայ «խօսիլ» եւ «բարեկամ» դառնել: Նոյն հարցը այսօր շատ հայ երիտասարդներ կ'ունենան, մանուկներ՝ որ կը պոկուին Լի-

բանանէն եւ Գանտաս կ'երթան, իրենց շրջանակէն կը հանուին: Մեծ թախով սկոտյ բոլոր հայ դասականները կարգաւ: Մինակ էի:

Վ. Թ. Ատիկա ոեւէ արուեստագէտ պատանիի խառնուածք է արդէն:

Ա. Տ. Իմ նկարագիրս այդպէս չէ. ես չսա մարդամօտ եղած եմ: Բայց կը սիրէի առանձին ըլլալ. մանկութեանս՝ կը սիրէի ինծի պատկանող բաները, խաղալիքները շուրջս դաւել եւ ջանալ ստեղծել իմ սեփական եւ բացարձակ աշխարհս:

Վ. Թ. Այդ մանկութեան շարունակութիւնը չէ՞ հիմա: Կատր մը քաղթ կամ պատուա մը՝ սեմեակի փոխան, եւ «խաղ»ը գոյներով, գիծերով, խագերով, բաներով:

Ա. Տ. Ճիշդ է: Ուրեմն կը գրեմ բանաստեղծութիւն, որովհետեւ որոշ պահուրու կը պահամ, թէ բան մը կու գայ կը տեղաւորուի ներսս, հիանդութիւն մը. անդէրէն կ'ըսեն՝ աղբս դուքս կը հաւնեմ: Կը քաշուիմ տեղ մը եւ ընդհանրապէս մարդոց մէջ կը գրեմ: Սրճարան կամ ճաշարան անկիւն մը կ'երթամ կը նստիմ, սուրճ կը խմեմ, կը ծխեմ, մարդիկ կը գիտեմ եւ կը գրեմ: Շուրջս գիտամ ժամանակս արդէն պատմութիւնը կը սկսի: Առանձին ըլլամ՝ չեմ կրնար գրել, կը վախնամ. ամբողջ երեւակայութիւնը լարուած կը պահէ. ես շարժառիթ կ'ուզեմ: Կը յիշեմ զբաթիւններէս մէջը թուրք տղու մը մտտին. այդ տղան գիմացս էր, ինծի կը նայէր, բարեւ կուտար, չէր գիտեր, թէ իր մտտին կը գրեմ: Բայց նկարչութիւնը սարբեր է, մարդ չեմ ուզեր: Երաժշտութիւնը կը զնեմ, դուռը կը գոցեմ եւ ուրիշ աշխարհի մը մէջ եմ: Ահագին քրտինքի մէջ, մօր պէս զուակ կը բերեմ: Իսկ գրելը՝ կը շարագրեմ, գաղափարներ կը միացնեմ, մաքիս մէջ կը յտակացնեմ՝ յետոյ կը գրեմ: Ժամանակի խաղը մէկուսն մէջ կայ, միւսին մէջ չկայ, ինծի համար:

Վ. Թ. Բայց միշտ ալ ձեզի համար background մը կայ, թէ՛ նկարներուն եւ թէ՛ բանաստեղծութիւններուն մէջ. անպայման բան մը կայ, ուրկէ կը բխի, տեղէ մը կը սկսի բանաստեղծութիւնը, եւ ոչ թէ հոգեվիճակ մը, որ ինք իր մէջ կ'արտայայտուի: Եւ քերես կրնանք ըսել, որ երկու յետումս կայ. սառչիւնը այն է, որ կը ներկայացնենք՝ առարկան մուտք չգործած, երկրորդը՝ դուք էք, որովհետեւ դուքս կը մնաք ձեր բանաստեղծութիւններէն, ուրիշին, ուրիշ մարդոց տառապանքի գոյներն են, որ կուտաք:

Ա. Տ. Իմ բանաստեղծութիւններս, հիմա կը մտածեմ, կը նմանին զժողովրդութիւններուս. ես բնաւ ինքզինքս չեմ գրծեր. ինքնանկար չեմ ըրած: Ինքզինքս հետաքրքրական չեմ գտներ. ես մէկ, աշխարհը՝ շորս հագար մ'ըլլան: Զիս մարդկութիւնը կը հետաքրքրէ: Ես լմ մէջէս, բռնեք, մարդ կը հնարեմ: Մէկ խօսքով՝ Աստուծոյ հետ մըցում կ'ընեմ: Մարդոց համար կը ստեղծեմ բանաստեղծութիւն:

Վ. Թ. Եւ ի՞նչ կը կարծեք, որ կ'ընեք բանաստեղծութեամբ:

Ա. Տ. Բանաստեղծութեամբ պարզապէս իմ ներքին աշխարհս կը խօսի, ենթապիտակցութիւնս: Այդ աշխարհը եւ չեմ կրնար հասկնալ, այդ աշխարհը բալորովին սարբեր, օտար մարդիկ պէտք է հասկնան: Անհրաժեշտ է, որ գրեմ, եւ կը գրեմ, բայց ի՞նչ բռել կ'ուզեմ՝ միայն ժամանակի ընթացքին է, որ ես պիտի հասկնամ:

Վ. Թ. Ուրեմն ընդհանուր առմամբ երբագիտակցութեմէ՞ն հասնող արարք մըն է:

Ա. Տ. Իմ բանաստեղծութիւնս հարբիւր սակասով ենթապիտակցական է եւ ես կը քաջայերեմ զայն, կը թողում, որ ընթանայ այդպէս: Օրուան 24 ժամուան 16րդ պահած եմ. հարբիւրս որ մարդերու հետ գործ կ'ընեմ: Բայց ատ...

կեանք, որ կ'ուզեմ կեդրոնանալու, բուն մը կը սկսի խորտել, վերջը ինչ որ դուրս կ'ելլէ իրը Արթուրի ձայն՝ այդ իմ ձայնս է, մեր ժամանակի ձայնն է, որ իմ բերանէս դուրս կու գայ՝ միւս միլիոննուսը ներսու կողքին:

Վ. Թ. Իսկ երբ վերջանայ՝ աւարտած կը համարէք:

Ա. Տ. Ոչ:

Վ. Թ. Անո՞ր համար է, որ նորէն կը գծէք, նորէն կը գրէք, եւ նոյն քեմա-ներուն շարք:

Ա. Տ. Գիտէ՞ք ինչ. ես միշտ մա-կարզակի հետ ինչոր ունիմ: Ինչ որ կը գծեմ մինչեւ վերջին ստորագրութիւնը կը նկատեմ իմ ամէնէն լաւ գործս, բայց երբ նկարը չորնալ սկսի, ես պարպուած պտտտառ մը կը տեսնեմ կրկին: Ուրեմն կը պահանջեմ ինձմէ աւելի խորացում: Իմ մակարդակս ես կը նպատակադրեմ: Թերեւս յաւակնոտութիւն տեսնուի այս խօսքիս մէջ, բայց ես կ'ուզեմ գրել Շէյք-քրտիբի պէս բանաստեղծութիւն, եթէ կարելի է. կ'ուզեմ գծել Փիքատոյի պէս նկար, եթէ կարելի է. Շոսթաքովիչի պէս մեծ երաժշտութիւն հնարել: Երկրորդա-կանը՝ քաղքենիութիւն է: Ամէնէն հետա-քրքրական բանը կեանքի մէջ, դուն քեզ հասկնալ է. հասկնալ՝ թէ մինչեւ ո՛ւր կ'ընաս ելլել: Ոչ թէ որովհետեւ օտար-ներու ծափահարութեան պէտք ունիմ կամ նիւթական վարձատրութեան: Բայց անձ-նական Արարատի դողաթը ելլելն է հար-ցը: Կարելի՞ է սեփական Արարատին կա-տարը հասնիլ. իսկ եթէ հասանք՝ Հիմա-լայան կայ դեռ, վերջ չկայ:

Վ. Թ. Իսկ հայ բանաստեղծութեան մէջ Հիմալայա ունի՞ք:

Ա. Տ. Իսկական մեծ բանաստեղծ-ներ ունինք, որոնք որեւէ լեզուի մէջ ալ մեծ պիտի ըլլային: Քսենոքորդ դարուն մեր ամէնէն մեծը Չարենցն է. գլուխ-դործոց բանաստեղծութիւններ ունի, ուրոնց քով նաեւ սալուշութիւններ ունի:

Վերջը, ան որ շատ մ'եսու, Պարոյր Սե-ւակը, սիրելի աւելի՛ կը դնահատեմ: Բայց իրականութիւնը այն է, որ հայե-րան մէջ շատ բանաստեղծ չկայ. բանաս-տեղծութիւն գրող շատ կայ, բայց բա-նաստեղծ՝ հազիւ քանի մը հաս: Նորը սելիք չկա՞յ արդեօք:

Վ. Թ. Ինչպէս կրնայ ըլլալ, որ բանաստեղծ մը նոր ըսելիք չունենայ Սփիւռքի մէջ: Իսկ ձեր այդ տողին ակ-նարկելով՝ անոր նման ուրիշ բաներ ալ կ'ըսեն, որ բանաստեղծներ կան, բայց բանաստեղծութիւն չկայ, կարծես թէ բանաստեղծութիւնը կաղապար է:

Ա. Տ. Որովհետեւ ընդհանուր հա-յութիւն չկայ: Ամէն մարդ տոկոսով հայ է, եւ միայն այդ տոկոսին չափն է, որ աւելի հայկական կ'ընէ: Եթէ Պարոյր Սեւակ հարիւր առ հարիւր հայութիւն կը գրէր, վահան Թէքէեան կը գրէր ութ-սուն առ հարիւր հայութիւն:

Վ. Թ. Կարելի՞ է արդեօք այդպէս ըսել: Ինչո՞վ կը չափէք «հայկականու-թեան» բացակայութիւնը: Ըսել կ'ուզէք, որ Պարոյր Սեւակը հողին վրայ ըլլալուն՝ հարիւր տոկոսով հայ է, իսկ միւսը հո-ղէն հեռու ըլլալուն...

Ա. Տ. Այո, անշուշտ:

Վ. Թ. Բայց ատիկա ի՞նչ հայու-թիւնն է, ի՞նչ տագնապը, ի՞նչ «Հայաս-տան»ն է, ինչպէս որ կ'ըսէիք քիչ առաջ:

Ա. Տ. Անգլիական գրականութիւն կը նշանակէ անգլիացի գրող: Տոկոսը թէ՛ դարդացումն է, թէ՛ ընտանեկան, տոհմիկ աւանդութիւնները: Բայց անշուշտ մարդ որքան իր հողէն հեռանայ՝ այդքան ու-րիշ հողի վրայ կ'ապրի, եւ ուրիշ հողի ապրեցութիւնն է, որ կը խօսի իր մէջ:

Վ. Թ. Եւ ատիկա բան չի պակսե-ցրներ մարդէն եւ հայէն:

Ա. Տ. Իրը առանձին գրող՝ այո: Բայց երբ կը խօսինք ազգային գրակա-նութեան մասին, հարցը կը տարբերի:

Վ. Թ. «Ազգ» եւ «ազգային գրական-նութիւն» տարագումները ուրիշ նիւթ են, շատ ընդարձակ: Մեր հարցը «տոկոսացոյց» պահները գտնելն էր:

Ա. Տ. Ֆրանսոսյի մէջ գրող երկ-աստարդը հայ բանաստեղծութիւն չի գը-րեր, հայախօս բանաստեղծութիւն կը գը-րէ, հայկական բանաստեղծութիւն չէ գը-րածը: Ուրիշ հարց՝ թէ կրնայ համաշ-խարհային արժէք ստեղծել: Ուրիշը Սա-րգիսան ամերիկացի գրող է, որ անգլե-զէնով կը գրէ, ամերիկեան վէպ, ամե-րիկեան պատմութիւն, բայց ատազը հայկական է: Ակաթա Բրիտի կը գրէ Նեպոսի մէջ սպանութեան մասին, Իս-թանիստի մասին, Պաղտատի մասին, բայց արարական գրականութիւն չէ պարզապէս անգլիական գրականութիւն է:

Վ. Թ. Հիմնականը՝ լեզուն է, որ կ'որոշէ գրականութեան փոփոխութիւնը: Ուրիշը Սարգիսանը ծագումով հայ, պիթլիսցի մըն է, որ իբրեւ գրող՝ մաս կը կազմէ ժամանակակից ամերիկե-ան գրականութեան:

Ա. Տ. Իմ գրածս Արթուրի գրական-

նութիւն է. Արթուն ի՞նչ է, ամենամեծ հարցս է՝ ես ի՞նչ եմ, հա՞յ եմ, անգլիա-ցի՞, եւրոպացի՞:

Վ. Թ. Թերեւս ամենէն առաջ՝ սփիւռփանայ: Մեր նախորդ սերունդնե-րուն պէս չենք, որոնք գազարը եւ սպանդը շաղկեցին. մենք արդէն Սփիւռփի պատ-մութիւնը ունինք, կը նշանակէ, թէ պէտք է անո՛ր մասին մտածեմք եւ իսկապէս աշ-խատիմք:

Ա. Տ. Երբեմն գործ մը կ'ընենք, ի յատկապէս զիտնարով, որ կորուստ պիտի արձանագրէ:

Վ. Թ. Խորքին մէջ, հաւանաբար, կորուստ-շահի հարց չկայ. այլ՝ գոյա-անուման, մշակութային եւ փոփոխական նպատակադրումի: Չեռնածու չես նստիր, չես առաչեր, մնացեա՞լը — պատմութիւ-նը իր ընթացքը ունի: Մեզի կը մնայ լըր-ջախոն մտածել եւ յետոյ ընել ինչ որ պէտք է. անոր համար ուզեցի հարցնել քեզի՝ ո՞վ ես, եւ ի՞նչ կ'ընես:

Ա. Տ. Ես ալ այդ հարցերը գրած եմ: Թողունք, որ բանաստեղծութիւննե-րը բանն:

ԱՐԹՕ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ

ԻՆՏԻ ԿԸ ՊԱՏՄԵՆ

Կը պատմեն ինձի, թէ երկիր մը կայ ծովերէն անդին
Ձիւնափայլ լեռներով, կիրճերով խորունկ,
Ընդարձակ այգեստաններով եւ ծառերով կեռասի:
Կը պատմեն, թէ փոփոխութիւն կան շէն, լայն, հարուստ
Փոխարկողներով, հաշուիչ մեքենաներով եւ ծխաններով
Մուխի՛ սպականիչներու համար:
Կան ընկերային հարցեր, մանուկներ լճաւած
Եւ հին բարբերու կողքին՝ ձեւեր կան նոր:
Աւազակներ կան, ջոջեր, ընկերային ապահովութիւն
Եւ անխուսափելի իննէն հինգ երգեր:

Կը հարցնեմ՝ ի՞նչ կայ այդքան յատուկ այդ հողին վրայ,
Այդպէս տեսած եմ շատ, եւ սպասեմ՝ որոշ վայրեր:
Կ'ըսեն՝ այդ երկիրդ է, ուր մարդիկ բու լեզուդ կը գործածեն.
Իմ լեզուս,
Ո՛ր մէկը,
Ան որ կը գրե՞մ, ան որ կը խօսի՞մ կամ ան որ յիշատակներուս մէջ է.
Յիշատակներուս մէջ...
Ահ, քերեսս ան լեզուով էր, որ ծեր քահանայն կ'երգէր,
Ծնողները զիս կը համբուրէին, երբ բուն մտած էի
Եւ մեծ-մայրս՝ զիշերները դպրոցէն վերադարձիս, կը փափաքս՝
Յիշէ՛

Յիշէ հորդ եւ իմ լեզուն
Շուտով մարդ պիտի դառնաս, իրենց բայր հնչումներով եւ ձեւերով
Քանի մը լեզուներ պիտի գործածես,
Բայց միայն հախահայերուդ լեզուն է, որ յիշատակներ
կրնայ բերել քեզի
Ի՞նչ է մարդը՝ ստանց յիշատակներու, տղաս:

Կը պատմեն, քէ երկիր մը կայ հեռուոր ծովերէն անդին,
Ուր մարդերը իմ յիշատակներս կը բաժնեկցին:

ՄԵԾ-ՀԱՅՐ

Մեծ-հայր,
Կ'ըսեն, որ օրըստօրէ կ'ալեւարիմ, կը դառնամ քեզի նման:
Աչքերդ ունիմ, եւ ժպիտդ,
Տխուր-եանդ հայումը,
Ծիծաղիդ շեշտը,
Խենթութեանդ մէկ երանգը,

մեծ-հայր:

Դառնացած արշալոյս մը կը ծագէր, երբ անհետացար խաւարին մէջ,
Թերեսս ոսկորներդ ասագներուն վրայ ցրուած են տակաւին,
Վերջին արձակած քառերդ ի՞նչ էին: Մոռցէ՛ք,
Ներքե՛ք այս բարի ստաւօտին, իմ գաւակներս,
Ծնած եւ չծնած գաւակներս բոլո՛ր:
Երբ մանուկ էիր նմա՞ն էիր ինձի, սիրահար ձիերու,
Ծաղիկներու եւ մեր լերկ բլուրներուն:
Համբուրեցի՞ր դրացիին աղջիկը, կամ
Ծխախոտ մը վառեցի՞ր ախոռին ետեւ գաղտագողի անկիւն մը:
Խնդացի՞ր ախորժակով, փափա՞ր դպրոցէն,
Կանչեցի՞ր, սիրեցի՞ր եւ լացի՞ր արդեօք:
Մեծ-հայր,
Կը մտածեմ, քէ աշխարհը ինչպէ՛ս երեսցաւ քեզի.

Աչքերուդ մէջ կայի՞ն երազներու ծափեր,
 Յաջողութեան խոստումը,
 Փառքի փայլը, կամ
 Տան մը նրազի կանդարտութիւն միացող պատրայգը .
 Գիշերները կը կայի՞ն երկինքի աստղերուն, թերեւս ինծի նման
 Դուն ալ քափառեցար միայնակ, հնձուած այգիներու մէջ,
 Հարցնելով ինքզինքիդ՝ ինչո՞ւ: Այստեղ ահա,
 Մոխրազոյն իրողութիւններու անտառին մէջ կ'արձագանգեմ քեզի՝ ինչո՞ւ,
 Ինչո՞ւ, մեծ-հայր:
 Վերջին բաղէնեաց շատ ստաւապեցա՞ր,
 Կապո՞յտ էր երկինքը, թէ սեւ էր այդ սնիրներուն պէս:
 Ազօրեցի՞ր արդեօք, հառաչեցի՞ր թէ լացիր: Մտածեցի՞ր այն
 Վախիկն մտիկն, որ ես, հաւանաբար, երբեք գոյութիւն չունեմ.
 Չտեսնեմ արեւը եւ չիմանամ բու մասիդ:
 Արդէն լիովին առանձին, որբացած մըն եմ,
 Հանիս ըստ, թէ ինչ պիտի ըլլամ տարիներուն եկող,
 Եթէ միայն աչքերէդ փայլ մը կարեմայի բռնել,
 Շոյել պիտի մագերդ եւ մօրուէդ երկար,
 Այս երկարող սպիտակութիւնդ...
 Մեծ-հայր, որ անապատներու մէջ մնացիր, ըստ ինծի,
 Ի՞նչ կը նշանակէ միացած զգալ, երբ մեռած ես արդէն
 Եւ ինչպէ՞ս, ինչպէ՞ս կրնամ առանց նանչնալու քեզ,
 Առանց նանչնալու վա՛խդ,
 Ես ալ դառնալ մեծ-հայր:

•

ՈՒԹՆՕՐԵԱՅ ՄՍՀԱՅՈՒՄ

«ՏՅ տարեկան կիմ մը մեռած գտնուեցաւ իր ննջարանի գետնին վրայ, Ռուփրիէմփրընի 10 յարկանի աշտարակի մը մէջ: Սեռ-
 եակը բացուելէ առաջ դրացիները ըսին, թէ ան «Անկախ ծեր կիմ
 մըն էր»:

«ԿԱՐՏԵՆ»

Մեռաւ առտուան չորսը քառորդ անց, առանձին, երբ գործարանները
 Սկսան երժուկալ եւ երբեմեկը դադրեցաւ յօրանջելէ:
 Իրը պարզ վերջաւորութիւն մըն էր:
 Ժամկէտն էր անդէպ ուղեւորութեան մը, իսկ վարորդը մոռցած էր
 Զինք այդպէս, ուր օրեր, սառն,
 Տասով տասը ոսկեակիկն մէջ երկարած:
 Ռատիոն բաց էր, կը մատուցէր յայտագրի մը ընտրութիւնը,
 Յետոյ կը խոստանար աւելի չաւ վիճակ մը օդի:
 Ան մեռաւ յատուցած տարիքին,

Մեռա արհամարհանքէ, ուժասպառ :

Կեանքը զինք չկոխսնցուց բնաւ, նոյնիսկ չփնտոց :

Տակաւին օր մը, պատանի Հոնի մը զինք պարտէզի փայտանոցին մէջ

Համբուրեց, երբ մայրը դուրս գացած էր գնումի :

Եւ ֆրէտ Ռաքքիկն խոտասցաւ յախտեմական սէր :

Արքիւրին հետ քանի մը ամիս աշխարհը բոցավառ էր քովչանքով

Եւ վազը հաւսմարար կարճ երէկ մը կ'ըլլար :

Ան յանձնեց ինքզինք դաշտերուն մէջ,

Երբ կուարանջարները եւ հարսնածաղիկները կարմրեցան

Եւ հեռուոր սրսփաւր արձագանգեց իր կարֆաքոյր մարմնի քափին :

Կեանքը քարմ հրնուանէ էր : Հիմա՛ մեռած այն սեմեակին մէջ,

Ուր ամբողջ գիշեր մը ամսարտ պարած էր :

Նոյն անկողինին մէջ, ուր երկունքը ունեցած էր հաւատալու

Զինք ստեղծողին՝ գուկին : Հիմա մեռած՝ կողակից մը

Մոխիր դարձած կ'երագէ մինչեւ յախտեմաքիւն :

Փռշտ վարագոյրները կը յայանեն ճշմարտութիւնը

Առաստաղի ներկը կը կեղուրի

ինչպէս ժամերը այս ուժ օրերուն :

Անոր դիակը հուտեցաւ :

Փռչեպատ պատահաններէն դուրս կեանքը ընթացաւ իր ձեռով,

Ճգնելով երբեւեկին մէջ : Երբեւեկին յանձնուած ամբոխներ,

Որակ կը փոխջին դժբախտութենէ, յուսալով

Առողջութիւն, երջանկութիւն եւ երկար տարիներ :

Հարստութիւն չունէր. քանի մը ծանօթներ կային

Եւ ժամանակի ջաղացքարը ոլոր-ոլոր կը դառնար :

Առաւօտ մը ուզեց մեռնիլ, բայց չկրցաւ :

Առաւօտ մը մեռաւ առանց գիտնալու. չորսը քառորդ անցած

Տառով-տասը դագաղի մը մէջ, ուժ յարկանի բարձրութեան վրայ

Եւ ոչ ոք զիտցաւ, քէ կարճագոյն առաստաղի մը ներկը

Սառած ռայաւածքի մը մէջ կը կեղուրուէր :

ՄՐԹՕ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հարցադրոյցը վարեց

Եւ բանաստեղծութիւնները թարգմանեց՝

ՎԵ ՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ



Ի Վայական Պարտու

«ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

ԵՒ ԱՇԽԱՐՀԷՆ ՀԵՌՈՒ...

Երևանի մէջ նոր լոյս տեսաւ Անահիտ Չարենցի մէկ աշխատախրութիւնը՝ «Չարենցի ձեռագրերի աշխարհում», միջին ծաւալով 179 էջ, սպաքանակ՝ 5 հազար:

Վերջին տասնամեակին, Չարենցի այս հարողտուր եղերաբախտ բանաստեղծէն յաճախ անտիպներ ներկայացուց մամուլին, սնանց սղխականին կապուած համապատասխան բացատրութիւններով:

Իսկ 1973ին, «Չարենցեան բնօրհաններ» անունին տակ կազմակերպուած համալսարանի ձեռնարկին՝ այդ նոյն նիւթին մասին կարգաց զեկուցում մը, որ յոյս տեսաւ 1974ին, նոյնանուն շարքի երկրորդ հատորին մէջ, «Չարենցը ձեռագրեալում» խորագրով:

Համարարանի ամպիսնէն կարգացուած աւելի քան 20 սպաղիր էջ լեցնող այդ զեկուցումը Չարենցի աւարտած ու անաւարտ ձգած ձեռագիրներուն անդրադարձող ստաջին լուրջ փորձն էր՝ ե՛ւ անտիպներու յայտնաբերմամբ, ի՛նչ անոնց ճակատագիրը բացայայտելու յանգնութեամբ:

Այսօր, Անահիտ Չարենց ընթերցողին կը ներկայացնէ նոյն նիւթը շօշափող առանձին հատոր մը, տասնապատկուած ծաւալով՝ «Չարենցի ձեռագրերի աշխարհում»:

Պատմական խորքով, անհատական բարդ սպրումներով կամ խոհական բնոյթ կրող երկարուշուռէ, կարճ, տարտած ու անաւարտ շուրջ վաթսուս բանաստեղծութիւններ քննութեան ենթարկուած են «Չարենցի ձեռագրերի աշխարհում», սոմանք ծաւալուն մեկնաբանութիւններով, սոմանք պարզ մէջբերումներով եւ ուրիշներ հարեւանցի յիշատակութեամբ:

Ընթերցողը «Չարենցի ձեռագրերի աշխարհում» կը թափառի յուզումնալից հրճուանքով մը, միշտ Անահիտ Չարենցի ստեղծած կըռոյթով անշուշտ եւ, բնական է, կը սիրէ երկարօրէն կանգ առնել յատկապէս այն էջերուն գիմաց, որ բանաստեղծին դուստրը նուիրումով ու արթնութեամբ, բնազդով ու գիտութեամբ կը վերծանէ ձեռագրերներու հալումաշ թերթիկները, կը կապէ իրարու ու կը վերականգնէ ամբողջութիւնը, կառարուած ուշատանքին մասին հարգելով սըրտացին ու սրտագատառ զեկուցումներ:

Չարենցի կեանքին ու դործին հետաքրքրականութիւնը չէ տնպածան, որ Հետաքրքրական ընծայում է այս հատորը, այլ՝ հեղինակը յաջողած է ի՛նք հետաքրքրական ընծայել զայն, շնորհիւ հասկացողութեան, կառուցողական բնազդին եւ էջերուն փոխանցած անբնագոս ջերմութեան: Սիրելի ու խոստմնալից ձեռագիրի մը տուել յայտնութիւն մը իրադործելու յափշտակութեամբ կեցած անձի մը մարդկային բուրձը ազնիւ մղումները զօրակոչի ենթարկուած են հոս ու իրագործած «Չարենցը ձեռագրերի աշխարհում» հատորը, որ երէկ կը պակտը հայ գրականութեան ու այսօր կ'ընծայուի ամէնուն վայելումին:

Կը մնայ հարցնել, թէ ամբողջակա՞ն է այս դործը:

Դժբախտաբար՝ ոչ:

Մեր կործինքով՝ թոյլ արուած են երկու պահաններ, որոնք կը զրկեն հասարակ մտքով շահանաթեան արտադրութենէն: Աստիճիւր՝ ձեռագիրներու տարակաշիւն պատմութեան միւս երեսին անտեսուծք:

Ինչպէս գիտենք, իր կեանքը վերջին ասրիններուն Չարենցի տահնաւբայ կրած ճակատագրին յար եւ նման ճակատագիր մը ունեցան նոյն շրջանի իր ձեռագիրները, տարազնուեցան հաս ու հոն ու բարբոսի սրբացան բանաստեղծին մտէն ետք: Շտա ուչ, իր յարութենէն ետք միայն պարզուեցաւ, որ բարբոսի սնտէր չեն մնացած սնտնք, ոչլլ գանուած են ագնիւ ու բարեկամ հոգիներ, որոնք մասնաւոր դուրգուերնք մը տածած են իրենց յանձնուած այլ թանկարժէք աւանդներուն նկատմամբ եւ յաջողած են ճակատագրական աղէտէն փրկել շտուրը: Այլ փրկարարներէն միայն մէկը՝ Աւետիք Իսահակեան, իրը ուր յիշատակուած է «Չարենցի ձեռագրերի աշխարհում», մինչդեռ արդար պիտի ըլլար ասանձին գլուխի մը տակ յիշել ամէնքը, մասնաւորաբար Թեղեմա Ղազարեանը, Վարդաշահ Նորենցը, Գեղամ Մարեանը, Մարուդէ Գուրգարեանը եւ ուրիշներ: Յիշուէին ոչ ուսով, մահուան դնով իրենց մօտ Չարենցէն ձեռագիր պահ գրած այս սիրելիները ու հարաւոր մանրամասնութեամբ պատմուէր ընթերցողին, թէ ինչ կրած են իրենց եւ Չարենցի կապերը, ինչ պարագաներու տակ Չարենց ձեռագիր յանձնած է անոնց, գաղտնութեան ինչ հիմքով, ինչ յանձնարարութիւններով, եւայլն, եւայլն:

Մեր գրականութեան պատմութիւնը կարձար սնի նման յիշատակարաններու եւ շատ բան կը շահէր Անահիտ Չարենցի գործը, եթէ անեկտր յիշատակարանային նման բաժին մը:

Երկրորդ խոցելի կէտը՝ շարք մը բանաստեղծութիւններու անտեսումն է: Նոյնիսկ մեզի ծանօթ կտորները եւ անոնց ծննդոցին ու ճակատագրին կապուած գրառուումները, սնգամ Անահիտ Չարենցի մեզի ճանչուցած մանրամասնութիւնները դուրս ձգուած են հասարէն:

Մինչդեռ կը սպասուէր, որ պատմագիր Գրիգոր Խլաթեցիի, Արա Գեղեցիկ ու Շամիրամի, Կոմիտասի ու համաշխարհային հանճարներէն Պուշկինի, Կէօթէի, Աճոնարոս սա Վինչիի, Կապար Արէն Փոյի ու Յրէջյոյի հետ Չարենցի հաստատած արքնութիւնները վերձանման ենթարկող սծը կիրարկուէր նաեւ այլուր, սովորական գէղքերուն ու գէժքերուն հետ, յատկապէս Արտի Բակունցի եւ Աղասի Խանջեանի աւթիներով:

Յուօք, այդպէս չէ վարուած Անահիտ Չարենց, մինչեւ անգամ հակառակը պատահած է իրեն հետ, «Չարենցը ձեռագրերում» գեղուցումին մէջ Չարենցի եւ Բակունցի փոխարարներութիւնը պատկերացնող յանկուցիչ էջը գեղջման ու ուրլակերտան ենթարկուած է հաս, իսկ Խանջեանի նուիրուած մէկուէն էջը հեղինակը նախամեծար համարած է մոտացութեան սալ կրկին, չքացնել բարբոսի, բաւարարուելով յիշատակել «հերոսական շքնագրարկումին» նուիրուած Եօթն շնուշակներէն մէկը միայն, այն ալ՝ ի միջի այլոց, ինչպէս կ'ըսեն՝ խնամքով թաքցընելով բանաստեղծութեան հերոսին անունը...

Երեւի «Չարենցը ձեռագրերում» գեղուցումէն (1973) մինչեւ «Չարենցի ձեռագրերի աշխարհում» հատորին երեւումը լսան մը փոխուած է հոն եւ ստալինեան մասլին ու «Բերիայի հայաստանեան գործակալները» սեւագրելու սղտաւութիւնը ենթարկուած է նոր բռնապատմութեան մը, որուն զահ գոցած է պատմական շրջան մը ուրուագրելու եւ պատմական գէժքերուն արդարութիւն ընելու պարտքը:

Օրինակ մը պիտի բուէր՝ աւելի որոշակի դարձնելու համար Չարենցի մամանակին եւ հոգեկան կացութեան վերապահակերացման համար որդեգրուած այս գորուշուօր սծը ու նաեւ հետեւանք այլ սծին, կենսական բաժնններու գեղքը, սնտեսումը՝ դործին լրացուցիչ գեղեցկութիւններ խոստացող բազում թուղթերու: «Չարենցի ձեռագրերի աշխարհում» հատորին «Նորից պատմութեան փառլիմենտով» գլուխը կ'ուարտի սա սրբերութեամբ:

«Արա Գեղեցիկ» աւանդովէպում ի յայտ են գալիս հայ ժողովրդի եւ նրա պատմութեան բնորոշ յատկանիշները՝ ներտաւրիւն, սնլնկնիլութիւն, հայրենիքի եւ ընտանկան սրբութեան սեր, հոգու գեղեցկութիւն, պայծառութիւն — բարեմասնութիւններ, որոնք հագրամօրէի այնքան պէտք էին այդ շրջանի Չարենցին»:

Ուրիշներու կարգին՝ նա՛նք այս պարբերութիւնը ստեղծած է «Չարեկըր Թե-
 ապրերում» գեղարցումէն: Բայց «Ձեռագրերում» տպուածը այս չէ միայն, «Աշ-
 խաբիում» հիւրընկալութիւնը կրկին է, ուր այդ շրջանի Չարեկըր հոգեւորանու-
 թիւնը անորոշ չէր ձգուած, մեկնաբանուած էր ըստ էութեան: Կարգանք ամբողջ-
 չափիւնը, «Չարեկըրում քննարկումներ» շարքին երկրորդ հատորին մէջ, էջ 200-

«Արա գեղեցիկի աւանդակներում ի յայտ եմ գալիս հայ ժողովրդի եւ Արա
 պատմութեան բնորոշ յատկանիշները՝ հերոսութիւն, անքննելիութիւն, հայրե-
 նիքի եւ ընտանեկան սրբութեան սէր, հոգաւ գեղեցկութիւն, պայծառատեսու-
 քիւն — բարեմասնութիւններ, որոնք այնքան պէտք էին Չարեկըրին, յատկապէս
 իր կեանքի այդ մնայլ տարիներին: Բանաստեղծը մի անտիպ ժառանգութիւն ինքն է
 հիանալիորէն բնորոշում այդ տարիների իր եղբակիցակըր եւ հայ ժողովրդի պատ-
 մութիւնից գանազամ դրոշմներ ու քաղաքի անմահաւորութիւններ ոգեկոչելու սքի-
 րանքը:

Աւ անցեալի մեծ ջանքի հորն եմ վառում ես իմ մէջ,
 Ար շարեալքեմ, եւ ներկայում տեսնեմ ճշայլ գէթ յաւայ...

Հո՛ս կը վերջանայ Չարեկըր «Արա Գեղեցիկ» աւանդակէն ստիճով «Չա-
 րեկըր Թեապրերում» գեղարցումն մէջ Անահիտ Չարեկըրի կատարած մեկնաբանու-
 թիւնը, որուն ամբողջէն հոգեւորանուած էր երաւ եւ բանաստեղծականորէն հոգե-
 թով բաժինին, «յատկապէս» բառին հետեւոյ չորս տողերուն եւ երկուսոց վի-
 յարանական բանաստեղծութեան յապարտմը չի կրնար ստույգ շարժառիթ մը ու-
 նեցած ըլլալ:

Չենք գիտեր, թէ Անահիտ Չարեկըր ինչպէ՛ս թալլ տուած է ինքն իրեն հաշ-
 արելի այս նորոտահարուած համաստեղծութեան հետ, ինք՝ որ նշխար մը ա-
 լելի փրկելու, քառեակ մը աւելի վերծանելու ու խորապէր մը աւելի ուշադրու-
 թեան ընծայելու այնքան մեծ պատասխանատուութեամբ ու յարձակութեամբ
 սովոր է մտանալ Չարեկըրի ձեռագրային սրբութեան:

Յամենայնդէպս, Չարեկըրի եւ հայ դրականութեան ոչ բարեկամ վերաբերում
 է առիկա, վերադարձը հին բարբերու, որոնք շատ բան յօշոտած են «Չարեկըր Թե-
 ապրերում» գեղարցումէն, լսիկելով յատկապէս անոր կէսէն անդին ինկած բա-
 ժինը, ուր բանաստեղծականորէն վարքագրուած էին ողբացեալ դէմքեր, ու սեւա-
 գրուած՝ ողբալի ուրիշներ:

Եթէ անհեթեթորէն յամառոյ զուշուշուրութիւնը ճնշիչ չըլլար, տարակոյտէ
 վեր է, որ «Չարեկըր Թեապրերի աշխարհում» լայն տեղ պիտի տրամադրուէր
 «Իրեկըր գեղարքաւեանի արժէքին գուզընքաց վաւերագրային ճշմանակութիւն» ու-
 նեցող կարճ կամ երկարաշունչ բազմաթիւ քերթումներու եւ անոնց մեկնաբա-
 նութեան, ի մասնաւորի «Ի յիշատակին», «Ներքոյ երգովներին, իմ Ե. Գ.
 Մ-ից վտարիլու առքիւ», «Աղակին, Արմէնին, Մահարուն» ձօնուած «Տխուր կա-
 րուսեցիկ», «Ի՛նչ հանապեղ երկուստարայի», չորս հնչեակ հաշուոյ «Ի խորոց
 արտի խօսք ընդ Աստուծոյ» բանաստեղծութեան զոյգ-զոյգ տարբերակները, որոնք
 յիշատակութեան իսկ արժանացած չեն հոս, հակառակ անոր, որ յետ «Քիլք Թա-
 նապարհի» տաղնապահար Չարեկըրի ստեղծագործութեան ամէնէն յատկանշական
 կտորները կը հանգիտանան:

Չգուած այս բացերուն հետեւանքով՝ «Չարեկըր Թեապրերի աշխարհում»
 աշխատութեան ընթերցողը կ'տեսնէ անաւարտ գործի մը տպուորութիւնը, ափ-
 սո՛ս:

Ինչ կը վերաբերի իրագործուած բաժինին՝ սրտառու է պարզապէս, յայտ-
 նութիւններով հարուստ, վերծանումներով ուշադրաւ, որ գլուխ բերուած է եր-
 կարատու զոհարերութեամբ, շարժարարին ջանքով, սրբութեամբ: Եւ արդէն այս
 հանգամանքներն են, որ գուշակորէն կը գորացնեն անստուած գործերուն ստա-
 ջացուցած ախտասանքը:

Ընդհանուր գաղափար մը ստուլ համար «Չարեկըր Թեապրերի աշխարհում»
 գործին մէջ Անահիտ Չարեկըրի յայտնաբերած մտեցման եղանակին, վերծանելու
 շնորհին եւ արուեստի գործի մը յղացման եւ տրաման կտրակցարար ընդհան-
 րացումներ ընելու ոճին մասին՝ յաջորդող էջերուն կ'արտադրենք անոր դիրքէն
 ինքն իր մէջ ամբողջ կարճ հատուած մը:

Ա Ն Ա Հ Ի Տ Չ Ա Ր Ե Ն Ց

ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Չարենցի ձեռագրերը յաճախ այնքան խառն են, այնքան անաւարտ, որ երբ նրանց մէջ պատահմամբ մի մաքրապիր, աւարտուն բանաստեղծութեան եւ հանգիպում, այնպէս եւ ուրախանում, ինչպէս ցնծացել է երեւի այն ճարտարապետը կամ պատմաբանը, որ պեղումներ կատարելու ժամանակ չվնասուած, անվթար մի խոյակ, անօթ կամ արձանադրութիւն է յայտնաբերել: Ահա նման ուրախութիւն պատճառող գործերից է «ձիշդ այսպիսի անգոյն մի գիշեր» բանաստեղծութիւնը, գրուած 1936ին: Պէտք է ասել, որ թէեւ ամբողջական է այս բառական երկար բանաստեղծութիւնը կամ տաղը, բայց լեզուական, տաղաչափական սրտչ անհարթութիւններ այն տարւորութիւնն են թողնում, որ Չարենցն անպայման գեւ կը վերադառնար նրան ու կը յղկէր:

Բանաստեղծութիւնը, սրպէս անմիջական յղացք եւ հէնք, ունի Լեոնարդո դա Վինչիի այն խոստովանութիւնը, թէ «Նոքրիդարը ընթրիքը» սրմանակարի Յիսուսի համար ներշնչման աղբիւր է ծառայել իր պատանի աշակերտը՝ հետապայում բաւական յայտնի Ջիովանի Բելլարմֆիոն (1467-1516): Չարենցը երեւակայութեամբ վերականգնում ու նկարագրում է բազում դարերի մէջ սուղուած այն «ինքնամփոփ գիշերը», երբ՝

Արթնացել է յանկարծ իր աներազ քնից
Լեոնարդո դա Վինչին, — եւ ճիշդ այսպէս,
Ինչպէս ինքս ահա՝ զարմանալով մի պահ,
Որ հրաշքի նման կրկին իմ դէմ
Բռնկուում է կեանքը, գոյութիւնը կեանքի՝
Չարմանալի հրաշքը, — նայել է լուռ
Իր դիմացի պապին կամ սենեակում դրած
Նոռտանուն ընտել ու հարազատ
Եւ բեւոտել է իր աստուածային հայեացքը
Ահաւասիկ այս սուրբ կիսակնոջ
Այս կանացի դէմքով ու պատանու
Անեզրական, անհուն տխրութեամբ
Եւ երագով օժուած յիսուսային դէմքին...

Երկարօրէն ու լուռ նայել է դա Վինչին իր հրաշակերտ ստեղծագործութեանը, ապա բարձրացել է տեղից, վառել ջահը եւ որթնացնելով ետտանու այն կողմը, մութ անկիւնում քնած մաստապատի աշակերտին, իր հայեացքը սեւեռել է մերթ «պատանու աստուածային գեղով պսակազարդ դէմքին», մերթ նրա պատկերին: Յետոյ իր զոզոջուն ձեռքով բռնել է սիրեցեալ սանի բարակ ու սպիտակ ձեռքը, եւ՝

Անագոբոյն սիրով ու կարօտով՝
Տիեզերքի տրտիք յաւերժօրէն իր մէջ
Անյագօրէն, ընդմիշտ ամփոփելու
Անեզրական սիրով — նայել է աչքերին,
Թափանցելով մինչեւ նրա հոգու յատակը:

Մինչդեռ պատանին, «ամօթխած, գունատ, վար է առել իր նայուածքը» եւ նրա դէմքը ստացել է այն յիսուսային արտայայտութիւնը, որ «հան-

նարի սիրով ու վրձինով անմահացած», հասել է մեզ :

Ըստ էության, բանաստեղծութիւնն այստեղ վերջանում է : Բայց բանաստեղծութիւնը հենց այստեղից է, որ սկսւմ է՝ տարածուելով նմանօրինակ արարչագործ գիշերների վրայ եւ պեղելով գերմարդկային ստեղծագործութիւնների գագանիքը, թէպէտ Չարենցը յաջարկ սողերում հազարում է միայն այն պատմական փաստը, թէ «հարկրդաւար ընթրիքը» սրմանկարի Յիսուսը Լեոնարդո դա Վինչիի աշակերտն է՝

Ձիովաննի Բելլորաֆիոն վեշտամումեայ . . . :

Բանաստեղծութեան աւարտական սողերն սկսւմայ խորհրդածել են սայլիս զիպուածի այն հոնճարային ակնթարթի մասին, որ ծնւում է մեզ շրջապատող շատ յաճախ աննկատ, չափազանց սովորական տաքիւններից ու ֆակներից :

Լեոնարդո դա Վինչիի «տարիներով փնտած ու երայած» Յիսուսը անբնդհատ իր հետ էր, իր աչքերի տառջ, անպամ նոյն սենեակում էր քնում, բայց օրերի, ամիսների, տարիների սպասումն էր պէտք, որ ոււճանար, հասունանար ակնթարթը, որ շրջապատի ստորէական իրերի եւ արարածների էությունն է լուսաստրում, ընդգրկում : Չարենցի այս բանաստեղծութիւնը նախ եւ ստաջ այս ամենագոր ակնթարթի գովքն է, փաստարանումը, որովհետեւ նրա արարչագործութեամբ են պայմանաւորուած բոլոր դարերի բոլոր հրաշակերտները : Չարենցի բանաստեղծութիւնը նաեւ այդ բնույն ակնթարթի ծնունդ հանդիսացող յափշտակութեան, ցնծութեան արձագոյնդն է, երբ արդէն կատարւում է հրաշքը՝ ստեղծագործութիւնը պոկուելով իր արարչից, թղթի, կտուի կամ մարմարի վրայ ապրում է իր կեանքով, ինչպէս հոգին ընկած միւրքը, որ իր ծառը լինելով հանդերձ, աւելի է իր ծառից : Ահա բանաստեղծն այս անկարելի կարելիութեան խորհուրդն է նկարագրում հետեւեալ սողերում, ուր դա Վինչին արդէն գոյն ու ձեւ հագած, արդէն նիւթականացած երազի գիմաց է կանգնած :

Նայել է լուս, երկար — կասկածելով մի պահ

Այդ հրաշքի՝ այդ լուս խորհուրդի

Անգրկելի, անձուկ գոյաթեան

Լինելուքեանն անգամ . . .

Ինչ բնական է նոյնիսկ հանճարեղ դա Վինչիի ինքն իր մասին, իր անգուպական կարողութիւնների մասին տարակուսելու այս սրահը : Բնական է, որովհետեւ գերմարդկային է, անկարելի կարելին է այն, որի տաջեւ հիացողին դարձանքով արձանացել է արուեստողէտը :

«Ճիշդ այսպիսի անգոյն մի գիշեր» բանաստեղծութիւնը ո՛չ միայն Չարենցի վերջին շրջանի, այլև տահասարակ, նրա ամբողջ ստեղծագործութեան ամենախորունկ գործերից մէկն է : «Դիւբ Կանապարի»ի «Տաղեր ու խորհուրդներ» շարքի սճին ու տրամադրութիւններին յարող այս տաղի մէջ լիմաստուքեան դառնապատիր պտուղը՝ ճաշակած բանաստեղծը լուելեայն, սոսանց սւտուցողական շարժուճեւի տալիս է իր արուեստի ըմբանման նոր ու թաքուն «խորհուրդները» : Տալիս է գրանք ոչ սրպէս մերկապարանց իրաւ ու քերթութեան նախաշաւիղ, այլ սրպէս համապարտիակ սպրում ու պատկեր : Լեոնարդո դա Վինչիի «աներող քնից» արթնանայն ու իր նկարին նայելը խորհրդանշում է կեանքի բոլոր երեւոյթների տաջեւ խոկական արուեստագէտի գիտայանքը : Չարենցի այս ստեղծագործութեան զսպանակն էլ զմայրանք է, դիտայանք՝ «հարկրդաւար ընթրիքը» սրմանկարի «անեղրական դեղի տրամութեամբ» շնչող Յիսուսի առջեւ :

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

ԿԻՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ՀՐԵԾՏԱԿԸ

Արարչութեան տիրապետող ասորքը եղած է ժիշտ արուն: Յեղապետ, իշխան, թագաւոր, զօրավար, բնասնիքին զլախը, «մաքղը, — ինչպէս կ'ըսէ Ապտերացի յոյն փելիսոսփայ Պիւթակորաս, — ամէն բանի աստիճանաւնալիս է», եւ իրմէ գուրս ինչ որ զոյգութիւն ունի, նոյնիսկ իր կողէն ծրնած կինը՝ կ'արժեւորուի իր տեսակէտներուն եւ քմահաճոյքին համաձայն:

Այդ արժեւորումը, ընդհանուր ասմամբ, կախում ունեցած է մարդկային ընկերութեան մէջ կնոջ սահմանուած տեղէն: Այդ գիրքը սրտչուած է կրօններու հիմնադիրներու համոզումներէն եւ սրտչումներէն:

Ուստի՝ նկատի առնելով այս իրաւութիւնը, կնոջ գիրքը մարդկային ընկերութեան ներս անցած է երեք հանդրաւաններէ եւ, հակառակ ժամանակաւոր փելիսոսփայներու՝ այդ երեք հանդրաւանները հանդիսացած են վերելքի երեք աստիճաններ:

Առաջին հանդրաւանը կը համապատասխանէ նախապատմութեան եւ մասնաւորաբար հեթանոսական շրջանին: Երկրորդ հանդրաւանը յունական աւանդութեան եւ Հին Կտակարանի շրջանն է, իսկ երրորդ հանդրաւանը կը համապատասխանէ քրիստոնէական շրջանին:

Նախապատմական եւ հեթանոսական շրջանին, որ առկաւին կը շարունակուի Ափրիկէի եւ Ասիայ յետամնոց ցեղախումբերու մէջ, կինը դրաստէն քիչ մը աւելի բարձր գերք ունի, եւ այն ալ՝ մաշքութեան սրբազային: Ան կենդանի առարկայ մըն է, որուն միակ ատաքելութիւնը ծննդաբերութիւնն է: Կինը այդ մարդուն ինչքն է եւ ծառան: Ան կրնայ փաճառուիլ եւ փոխանակուիլ: Տրուած բլբլով, որ այդ շրջանին դիր, գրականութիւն եւ արուեստ գրեթէ զոյգութիւն չունէին, կրնանք փարազայր մը նետել այս շրջանին վրայ եւ անցնիլ երկրորդ հանդրաւանին:

Երկրորդ հանդրաւանը կը համապատասխանէ նախաքրիստոնէական քաղաքակրթութեան: Կինը կամ անուշադն կիներու որոշ գոտակարգ մը ունի այդ մարդուն գրեթէ համահաստար գիրք մը: Կրօնական աւանդութիւններու եւ աստուկներուն մէջ կիները կը խաղան էական եւ ճակատագրական գերք եւ յաճախ աննոց գործունէութիւնը եւ կարեւորութիւնը մոռցնել կուտայ այդ մարդուն գիրքը:

Կը բուէ յիշել քանի մը անուններ, որոնք կը հաստատեն կնոջ կատարեալ իշխանութիւնը՝ Արիթ, Եւա, Տալիթ, Նեֆերթիթի, Կգտապարա, Չեյնոպիա, Շամիրամ, Ամալանները եւ Հոմի հուշակաւոր կայսրուհիները: Կնոջ աղբեղութեան աստղութիւնը չօրհնու համար գլխի գոհանանք յիշելով կէս սրտմական եւ գիցարանական անուններ, որոնք մինչեւ այսօր կը յաճախեն գրողէտներու եւ բանաստեղծներու երեւակայութիւնը, — Հերա, Իդիա, Իշթար, Արտեմիս, Աֆրոսիթէ, Աթարթէ, Միներվա, Սելենէ, Հէյէն, Փենելոպի, Քալիփսօ, Նիոպէ, Անթիկոն, Եոքսոթ, Փերսեֆոն, Եւալին, Եւալին:

Կինը, մասնաւորաբար յարձրաստիճան կինը, հերոսուհի եւ զիցուհի երեւոյթիւն ասի, արգէն դարձած է գրողէտներուն, բանաստեղծներուն եւ ար-

ւեստադէաներուն ներշնչման դիտարար սպբելքը: Ասիկա կը նշանակէ, որ անոր խորհրդաւոր էութիւնը, երկուութիւնը եւ բարդութիւնը արդէն սկսած են նիւթ հայթայթել դրականութեան:

Այր մարդուն համար կիներ եղած է խորհրդաւոր եւ անհասկնալի էակ մը, որուն հետ ան ջանացած է գտնել կենսակցելու հասարակ յայտարար մը: Եւ որովհետեւ փիլիսոփան, գրողն էր եւ արուեստագէտը չեն խորհիր հասարակ մահկանացուին պէս, հասկցած են, որ կնոջ բնութիւնը մարդկային ըլլալով հանդերձ, ունի խորհրդաւոր եւ անթափանցելի երես մը, որուն առջեւ պէտք է խոնարհիլ, ուստի՝ ստեղծած է այդ յատկութիւնները խորհրդանշող դիցաւորներ եւ ստատեմաւորներ, որոնց կը մտաուցանէ իր յարգանքը, կարենալ սպասուէն գնահատելու համար մնացեալը՝ իր կեանքի ընկերուհին:

Այս ուղղութեամբ կրնանք ըսել, որ հին գրողները եւ բանաստեղծները շատ բարձր համարում չունէին կիներու հանդէպ, ինչպէս կը փաստեն հետեւեալ մէջբերումները:

Սողոմոն իմտատուն, որ կ'ապրէր Քրիստոսէ 10 դար առաջ, կը բացագանչէ. «Ո՞վ կրնայ գտնել առաքինի կին մը. ան աւելի արժէքաւոր է, քան ադամանդը»:

Անկէ քանի մը դար ետք, յոյն հռչակաւոր սղբերգակ Եւրիպիտէս կը գանդատի. «Աշխարհի վրայ չկայ աւելի յոռի բան մը, քան գէշ կինը, եւ աւելի լաւ բան մը, քան բարի կինը»: Եւ ուրիշ տեղ մը, լուսաբանելու համար իր կարծիքը՝ կը գրէ. «Երբեք մի հաւատար կնոջ ըսածին, նայնիսկ եթէ ան նշմարուելիւնը ըսած ըլլայ»:

Շատ աւելի յուսահետ է յոյն դիցարանութեան հիմնադիրը՝ Հեզիոտոս, որ կ'ըսէ. «Կիները այնքան չարաղէտ են մարդկութեան համար, որ նայնիսկ պարկեշտները պատճառ կը գտնան իրենց ամուսիններու դժբախտութեան»:

Նոյնն է կարծիքը չինացի, հնգրիկ եւ լատին փիլիսոփաներուն եւ գրողներուն, որոնց համար կիներ հաճոյքի առարկայ մըն է, ս'չ աւելի եւ ոչ ալ պակաս, եւ եթէ ան չընդունի մարդկային ընկերութեան մէջ իրեն վերապահուած դիրքը, որ ընտանիքի մայր ըլլալն է, կը գտնուի հասարակ պերճապիտ:

Հին դարերու դրականութիւնը շատ տեղ չի տար կնոջ: Նախ՝ որովհետեւ վէպ գոյութիւն չունի: Քնարերգական բանաստեղծութիւնը երկրորդական սեռ մըն է: Այս շրջանի մեծադոյն գրողները փիլիսոփաներ, պոետ-մարաններ, դիւցադներգակներ եւ թատերագիրներ են:

Փիլիսոփաները կը գրողին ընդհանրապէս վերացական հարցերով, մարդուն ճակատագրով, հոգիի անմահութեամբ եւ, ընդհանուր առմամբ՝ կ'արհամարհեն կնոջ գոյութիւնը: Հակասակ պորագային՝ անոնք կ'որդեգրեն հեղեական մօտեցում մը: Սոկրատի պարագան բոլոր ծանօթ է: Կինը՝ Քսանթիփ այնքան անտանելի եւ հառուտան էր, որ խեղճ Սոկրատ կը նախընտրէր իր ժամանակին մեծադոյն մասը անցընել տունէն դուրս: Իր աշակերտներուն այն հարցումին, թէ ոչ ոք է ամուսնանալ կամ ոչ, մեկնելով իր փորձառութենէն՝ Սոկրատ կը պատասխանէր. «Պէտք է ամուսնանալ: Եթէ բախտի բերմամբ ընտրած էք լաւ կողակից մը, այն ատեն երջանիկ կ'ըլլաք, իսկ եթէ ընտրէք գէշ կողակից մը, այն ատեն կը դառնաք փիլիսոփայ, եւ ասիկա հայակապ բան մըն է մարդուն համար»:

Քնարերգակ բանաստեղծները հարկաւ կը զարդայնեն սիրոյ թեման. բայց նոյնիսկ Պլատոնէն ետք, կ'անգիտանան պատուական սէրը: Բացի պերճապիտներէն, որոնց տաղարէզը հաճոյք վաճառելն է, կնոջ համար կայ

մէջ իրկութիւն միայն՝ մայրութիւնը: Մայր կամ ոչ, ամէն բանէ առաջ՝ կի-
նը մարմին է, և սէքը՝ դուրսուրում: Ուրկէ՝ այդ օրերու գրականութեան
էստիքը գիմագիծը: Եթերային սէքը, ասպետական սէքը այնպէս՝ ինչպէս
զայն կը հասկնային միջին դարուն, կամ նոր շրջանի մեծ բանաստեղծները,
անձանօթ բան մըն է հիներուն համար:

Սերային բանաստեղծութեան լուսարցն նմայները պէտք է փնտռել
Մայրամբի «Երգ երգոց»-ին մէջ, սրուն էստիքը ներշնչումը անուրանալի է,
թէև մեկնաբանները սրաշաճութեան համար զայն կը նկատեն միսթիք բա-
նաստեղծութիւն:

Ուտերոյ պիսա՞ն գեղեցիկ են ոտնամաններուդ մէջ,
Ով իշխանուհիի ազջիկ:
Կողերուդ կորույթիւնը մանեակի մը պէս է,
Այուստագէտի մը ճեռէրուն գործը.
Պարտք կը ձեռացնէ բաժակ մը,
Ուր գիմին միշտ առատ է,
Փորդ շուշաններով եզերուած ցարեմի կայտ մըն է,
Իսկ երկու ծիծերդ կը նմանին երկու եղևորներու.
Եղևիկի երկուդեակներ,
Վիզդ փզուկընայ աշտարակ մըն է...

Ինչ է կնոջ տեղը դրական միւս երկու սեռերու՝ գիւցազներգութեան
և թատերգութեան մէջ: Եթէ դանց անունը հնդկական, չինական և սեմա-
կան գրականութիւնները, սրունց մէջ, եթէ կինը աստուածուհի չէ, ունի ան-
նշան տեղ մը, յունական, լատին և հին եւրոպական հեթանոս գիւցազներ-
գութիւններու մէջ կնոջ տեղը կը համապատասխանէ մարգկային ընկերու-
թեան մէջ ունեցած իր դիրքին, որ շատ կարեւոր էր: Աւանդական հերոսնե-
րու կողքին՝ կան նաև հերոսուհիներ, որոնց անունը գեռ կը հնչէ մեր ա-
կանջներուն, — Կուարուն, Պրունիհիլաէ, Վիրգիլիսի Տիտոնը կամ էլիսան,
Լաւինեան և, մա՛նաւանդ՝ Հոմերոսի Փենելոպէն, Հելէնը, Նոպիբան,
Անտրոմաքը, Էւայլն, Էւայլն:

Յոյն սղբերգակ բանաստեղծներն ալ կնոջ տուած են տաղնակարգ տեղ
մը և անոնց գլխաւոր սիմնաւորութիւնները յաճախ հերոսուհիներ են, —
Քլիթիմենեսթրա, Քասանտրա, էլիքթրա, Անթիկոնէ, Մետէա, Էւայլն, Էւ-
այլն:

Մտկայն պէտք է ըսել, որ այս կիները թագուհիներ կամ իշխանուհի-
ներ էին, յաճախ աստուածներու կամ աստուածուհիներու ծնունդ և իւրա-
քանչիւրը կը խորհրդանշէր յատկութիւն մը կամ դրացում մը, որ կը համա-
պատասխանէր կնոջական իտէալին՝ տիպար մայր, հնազանդ ազջիկ, անձ-
նադո՛հ քոյր, բայց երբեք իտէալ սիրուհի: Այդ օրերուն կնոջ մեծագոյն ա-
ռաւելութիւնն էր զուտ կրթել և պահպանել այն բոլոր աւանդութիւնները
և սովորութիւնները, որոնք կրնային նպաստել մարգկային ընկերութեան
յարտուելման և բարգաւաճման: Անհատը, մա՛նաւանդ կին անհատը պէտք
չէր ըմբոստանար օրէնքին և աւանդութիւններուն դէմ: Անոր վաստակած
էր ցեղը կամ արդր յանրամայնելու դործը: Հոսմի մէջ սրբազան կրակը ան-
մար պահելու առաքելութիւնը վստահուած էր վերալինելու, որոնք մեծա-
դոյն բնամանիքներու ազջիկներ էին, կուսութեան դատապարտուած մինչև
իրենց մահը:

Ամէն պարագայի՝ այս ամբողջ շրջանին, այսինքն՝ նախապատմութե-

նէն մինչեւ քրիստոնէութեան մուտքը, կինը աստիճանաբար կը նուաճէ աւելի բարձր դերք մտրդկային ընկերութենէն ներս եւ անոր էութիւնը կ'արժանանայ գրադէաներու եւ արուեստագէտներու հետաքրքրութեան: Սակայն այդ հետաքրքրութիւնը շատ քիչ անգամ կինը նկատի կ'առնէ իբր մտրդկային էակ, այլ ասուելաբար կը դնահասէ ընկերութեան մէջ անոր խաղցած գերը, նախ իբր մայր եւ յետոյ իբր իշխանուհի կամ թագուհի, այսինքն՝ իբր այր մարգուն օժանդակը եւ փոխանորդը:

**

Քրիստոնէութիւնը յեղաշրջեց ո՛չ միայն մտրդկային ընկերութեան կառոյցը, արհամարհելով երկրայինը եւ հարուստը, առաջնութիւնը տալով համեստին, խոնարհին եւ աղքատին, այլև կինը դրու այր մարգուն համահաստար պատուանդանին վրայ: Կնոջ ունեցած տեղը ոչ մէկ կրօնքի մէջ այնքան կարեւոր է, որքան քրիստոնէութեան մէջ:

Ո՞ր մէկը յիշել. Եղիսարէ՞ թը, Մարթա՞ն, Մարիամ Մագթաղեանացի՞ն, Պիղատոսի՞ն կինը, անհաւատարի՞մ կինը, Վիւնիկեցի այրի՞ն, Վերանիքա՞ն, որոնք տուն-տեղ ձգած՝ կը հետեւէին Քրիստոսի:

Աւելի՛ն. Քրիստոսի մարդեղութիւնը համեստ կոյսի մը արդանդին մէջ՝ ուրիշ նշանակութիւն չունի, եթէ ոչ մարդ արտրածներու լատպոյնին լուստոյնը, գերադասին գերազասը նկատել կինը՝ Մարիամը, որ իր մէջ կը միաձուլէր կնոջական երկու մեծագոյն առաքինութիւնները, այսինքն՝ կուսութիւնը եւ մայրութիւնը:

Ճիշդ է, որ ընկերային զծով կինը կը մնար միշտ այր մարգուն շուքին տակ, աւելի ճիշդը՝ անոր պաշտպանութեան տակ, առանց նկատուելու անոր ստորագասը: Եւ այսօր քրիստոնէական եկեղեցիներու մէջ յարգուած սրբուհիներուն թիւը նուազ չէ սուրբերու թիւէն:

Այս պայմաններուն մէջ, գրականութեան եւ արուեստի մօտեցումն ալ չէր կրնար տարբեր ըլլալ: Կնոջ ստացած այս գերնական, գերերկրային եւ միաթիք զմայրիժը նոր լար մը պիտի աւելցնէր բանաստեղծներու քնարին, խոչալ, միաթիք, պղատոնական եւ անկարելի սիրոյ լարը:

Այս բանաստեղծութեան թոնը կու տայ «Աստուածային կատակերգութիւն» գործին անմահ հեղինակ Տանթէ Ալիկիէրին, իբր կը բացատրանչէ.

«Ո՛վ կի՛ն, այնքան մեծ ես, այնքան զօրութիւն ունիս... Քու մէջդ է գութը, գուրգուրանքը եւ վեհութիւնը: Քու մէջդ կը խտանան բոլոր արարածներուն առաքինութիւնները...»:

Հարկաւ ընթերցողը հասկցաւ, որ այս խօսքերը ուղղուած են Աստուածամօր: Սակայն աննոցմէ մտա մը կ'երթայ իր սիրահատոր Պէտթրիչէին, որ բանաստեղծը կ'առաջնորդէր եօթը երկինքներու աստղադարգ ուղիներէն մինչեւ սրբութիւն սրբոցը: Եւ Պէտթրիչէին ուղղուած այս նոյն խօսքերէն բաժին մը կայ աշխարհի բոլոր կիններուն, որոնց սրտին մէջ կ'ապրի գութը, գուրգուրանքը եւ վեհութիւնը:

Եւ այսպէսով կինը կը դառնար գրականութեան եւ արուեստի եթէ ոչ միակ, այլ գլխաւոր առանցքը եւ ներշնչման մեծագոյն աղբիւրը:

Կինը կեանքին մեկնակէտն է, առանցքը եւ վախճանը: Սակայն մարդու կեանքին այս անբաժանելի ընկերը, միշտ ալ առեղծուած մը մնացած է նոյն մարգուն համար: Գոյութեան առաջին օրէն իսկ այր մարգը փորձած է թափանցել իր ընկերուհիին ներաշխարհէն ներս, հասկնալու համար անոր էութեան զաղտնիքը, բայց միշտ անճարակ եւ շուարած մնացած է անոր բար-

գութեան, խառնուածքին աշխարհաբանութեան եւ նկարագրին փոփոխականութեան առջեւ:

Այդ հետախուզութիւնը սակաւին վերջ չէ գրած եւ կը շարունակուի: Բարբրախաարար: Ազգա թէ ոչ կեանքը, գրականութիւնը եւ արուեստը կորսնցուցած պիտի բլբլային իրենց այր եւ գոյութեան իրաւունքը:

Ընդհանուր տամոք յոյները եւ Հին Կտակարանի հեղինակները կնոջ մէջ կը տեսնէին թերութիւններ միայն: Կինը իր անեղ երեւոյթին տակ խափահան օձ մըն էր, որ կը խաբէր այր մարդը: Ան պատճառն էր մարդկութեան բոլոր գոյութիւններուն: Կարելով Ազամը՝ Եւս գոյն կը մղէր մեղանչելու: Հետեւանք՝ մահապարտութիւն եւ վատում գրախափէն: Տալլա իր գեղեցկութեամբ կը հմայէր Մամոնը եւ պատճառ կը գտնար անոր գեթութեան եւ մահտան: Կնոջ մեծագոյն թերութիւնը, ստախոսութենէն եւ նենգութենէն աւելի՝ իր հետաքրքրութիւնն էր: Յոյն գեղարանութեան առաջին կինը՝ Փանտորա, իր ամուսնոյն բանալ կու տայ Չեւսի տուած խորհրդաւոր սուփը, որուն մէջէն դուրս կու գան աշխարհի բոլոր շարիքները եւ բարիքները: Մարդը շուտով կը գոցէ սուփը, որպէսզի գտնէ անոր մէջ մնայ Յոյսը:

Ինչպէս տեսանք՝ քրիստոնէութիւնը կը փոխէ այս տեսակէտը, որովհետեւ նախապէս յարգուած մայրութեան կողքին, սն կը ստեղծէ կոյսի եւ սբբուհի տիպարը: Մտկոյն կը շարունակուի յոյներու եւ Հին Կտակարանի ստեղծած կնատեսաց հասանքը: Եւ նոր վարերուն մէջ քիչ չէ թիւր այն հեղինակներուն, որոնք յստի կարծիքներ բանաձեւած են կնոջ նկատմամբ: Ահա քանի մը նմուշներ.

«Կիները կը վագեն խենթերու ետեւէն. ամուսն կը հեռանան իմաստամներէն՝ ինչպէս քուսուտը կեցողանիներէն», — կը գրէ միջին դարու հոլանտացի մեծ փիլիսոփայ՝ Էրասմուս:

«Աղաւէն ի վեր, աշխարհի մէջ չէ գործուած չարիք մը, որուն մէջ կինը իր բաժինը չունենայ», կ'ըսէ անգլիացի խոստատէր Թեքքըէ:

«Կիւր երկար մագերայ եւ կարն մաքով էակ մըն է», կ'ըսէ գերմանացի անուանի փիլիսոփայ Ծոփէնհասուրը:

Այս շարքը կորելի է հասարակ լեցնելու չափ երկարել:

Հիմա անցնինք այն հեղինակներուն, որոնք գովաբանական խօսքեր ուղղած են կնոջ.

«Կինը կազմուեցաւ Ազամի կողէն, բազուկին Էովէն, որպէսզի անոր վրայ ըլլայ մարդուն պաշտպանութիւնը, եւ սրտին մօտէն, որպէսզի սիրուի անկէ», կը գրէ անգլիացի Մաթիու Հենրի:

«Յախտեցական կանացիութիւնը մեզ կը մղէ դէպի բարձունքները», կը գրէ Գերմանիոյ մեծագոյն հանճարը՝ Կէօթէ:

Իսկ մեծն Տանթէի արձագանդելով, ուսու հռչակաւոր վերապահն Աէօ Թուլսոյ կը բացազանչէ. «Ո՛վ կին, աշխարհի փրկութիւնը ձեռքերուդ մէջն է»:

Ինչո՞ւ լուրջ եւ ծանրախոհ գրողներու եւ փիլիսոփաներու այս հակասական եւ բռն կարծիքները կիներու մասին: Կնոջ մասին ունեցած մարդէակին կարծիքները կախում ունին անոնց խոտնուածքէն, համազումներէն եւ, մտնուանք՝ իրենց կեանքի պարագաներէն: Եթէ հեղինակը համոզուած է ստաքինի կնոջ մը, բնական է, որ բոլոր կիները պիտի նմանցնէ անոր եւ պիտի գովէ գանձը: Իսկ եթէ Եւրոպիական պէս ան ապրած է շատուկի մը հետ, այն ասէն ան մազձով խօսած է բոլոր կիներուն մասին:

Կրնայ պատահիլ, որ նոյն անձը, բանաստեղծ կամ արուեստագէտ, կեանքի զանազան շրջաններու մէջ, նպատաւոր կամ աննպատաւորապէս թիւններ ունենայ կիներու մասին: Ասոր ալ պատճառը պարզ է: Այդ արտայայտութիւնները կախում ունեցած են իր սիրած կնոջ նկարագրէն եւ վերաբերումէն:

Երբ Ալֆրէտ ար Վինլի յուստիսար եղաւ Մարի Տորվալէն, որ զինք անսակելով նախընտրած էր աննշան զերտան մը, բանաստեղծը, որ տեղեակ էր Հին Կաակարանի բոյսը մանրամասնութիւններուն, գրեց «Ստաւանի գայրայրը» բանաստեղծութիւնը եւ բաժնեց զերեքը. ինք Սամսոնն էր, իսկ Մարի Տորվալ՝ Տալիան: Ուրիկ իր հեռուեալ տողերը.

Երկրին երեսը, ամէնուրեք եւ ամէն տեղ,
Աստուծոյ ներկայութեան, կը մղուի յաւիտեական պայքար մը
Մարդու բարութեան եւ կնոջ նեկուրութեան միջեւ.
Որովհետեւ ակնի կամ նուագ, կիներ Տալիա մըն է միշտ:
... Մեծ է բարութիւնը մարդու. ամոր վեհանգնութիւնը
Միշտ կը ներէ տկար ու ստախօս Էակին եւ կ'անկեացնէ գայն:
Մեր ռաբերուն ասկէ միշտ կը սողայ ոսկեգոծ օձը՝
Կի՛նը, ախտաւոր երեխայ, եւ պիտի՛ տասնեկու անգամ:

Տարիներ հաջ սակայն, նոյն բանաստեղծը կնոջ կ'ուզէր թերեւս ամբողջ ազդերու բանաստեղծութեան զեղեցկագոյն տողերը:

Բայց գիտես, ո՞վ կիմ, ինչո՞ւ Աստուած քեզ դրաւ մարդուն ճով,
Փափուկ բնկերուտի, Եւա՛, գիտե՞ս ինչու...
Որպէսզի ան ինքզինք տեսնէ հոգիիդ հայելիին մէջ
Եւ լսէ այն երգը, որ քեզմէ միայն կրնայ բխիլ:
... Եւա՛, պիտի սիրեմ ստեղծագարծութիւնը ամբողջ,
Եւ աշխարհը պիտի դիտեմ երագկոս աչքերուդ մէջ,
Որո՞նք ամէն կողմ կը պիտեն գորով ու հոանդ...

Նախաբրիտանեկական մտրդկութիւնը կնոջ մէջ կը տեսնէ էգը, հեշտանքի առարկայ, զեղեցիկ, նենգ ու քմայքստ, եւ մայրը՝ կեանքի բաշխիչ, ուստի՝ նուիրական եւ օգտակար էակ մը, յարգանքի արժանի:

Քրիստանէութեան համար մօր վրայ կ'աւելնայ կոյսը, սրուն միակ ու անկրկնելի տիպարը Աստուածամայրն է: Այնպէս որ՝ նոյնիսկ մեղանշոց կիներ արժանի է գութի եւ սրտապանութեան:

«Ո՛հ, երբեք մի դատաւարտէ մեղանշոց կիներ» կը հրահանդէ Վիքթոր Հիւիօ, սրուն գրիչին կը պարտինք կնոջական այնքան տիպարներ:

Չկայ գրագէտ մը, որ ամբողջ հատորներ կամ էջեր նուիրած չըլլայ մօր, անոր մէջ տեսնելով ամէն տեսակի սասուելութիւններ եւ ստաքիներութիւններ: Սակայն բարի մօր տիպարի կողքին է չար մօր տիպարը: Շատ մը դրագէտներ կողմնակի թերադրութիւններ բրած են այդ մասին, ստեղծելով անձնասէր եւ կողմնակալ մօր տիպարներ, ինչպէս Պալլասը: Երբեմն ոմանք սեւոյ ճերմակի վրայ արձանագրած են իրենց զայրույթը, ինչպէս ԺԹ: Վարու աննշան Շամփայէրը, սրուն կասագանքը սակայն արուեստական շեշտ մը ունի.

«Եթէ մայրս ձեռքիս տակ բլլար, մայրս, որ կեանք տուաւ ինձի, կը պատուէի անոր վարը: Գարշելի բան մըն է մայրը»:

Բայց աւելի համոզիչ կը թուի ժամանակակից վերջապահ Հերվէ Պազէնի հեղինական մարտչքը իր մօր մասին : Իր «Խժը բառնցքիս մէջ» վէպին էջերէն վերարտադրենք հետեւեալ տողերը .

«Տղան բնդհանրապէս կ'ունենայ մօր նախասիրութիւնները եւ կը պահէ անոր հաւատքը : Բայց մենք այնքան կ'ատէիմք մեր մայրը, որ անհաւատներ դարձած էինք : Այն բաները, գարս մեր մայրը կը գովէր ու կը սիրէր, մեզի համար դարձած էին գգուելի եւ ատելի :

«Դուն տաւոյ մէջ գտալս հակամայր մը, որուն ոտիներէն արջասպ կը հոսէր : Դուն երբեք չեմնչցար գարգուրանքի այն մակարագը, որ կաթը մածունի կը վերածէ մանուկին ստամոքսին մէջ : Կեանքիդ ամբողջ տեւողութեան պիտի փոխես մանկութիւնդ :

«Լո՛ւէ՛, մայր, ես պիտի բլլամ կենդանի պատիժդ : Եթէ գիտնայիր որքան կ'ատնեմ քեզ . . . Շնորհակալ եմ, մա՛յր . ասկէ ետք կեանքիս մէջ պիտի քաշեմ իժի մը վիզը սեղմելով բռունցքիս մէջ եւ այդ իժը դա՛ն ես» :

Հերվէ Պազէնի այս ամբասանութիւններուն հակառակ՝ մայրը ունի այնքան զօրաւոր պաշտպաններ, որ մարդ կը շուարի, թէ անոնցմէ ո՞ր մէկուն պիտի գիժէ՝ աղնի . վկայութիւններու համար : Առանց անտեսելու միւս մեծամեծները, պիտի գիժենք Վիքթոր Հիւկոյին, որուն հետեւեալ հաստատումը կը բաւէ արդէն . «Մայրս զիս ծնաւ երկու անգամ . . .» :

Եթէ այս հաստատումը չի բաւեր՝ բանանք անոր «Կնոջ օծումը» բանաստեղծութիւնը, որ կը գտնուի «Դարերու առասպելը» գործին սկիզբը : Բանաստեղծը մեզի կը նկարագրէ ժամանակներու արշալոյսը : Եղեմի ծառայողներուն տակ՝ ահա՛ Ալբամը, իր հասակով, վեհութեամբ եւ գորութեամբ : Անպին խորտեալ, շնորհալի եւ փարիկառուն Եւան, այրն ու կիներ :

Ցարդ Ագամն էր բնորեալը արարչութեան,
Ան փեսան էր խաղաղ ու կորովի : Շուքն ու լսյսը,
Այգն ու ատոյթը անհամար կը հետեւէին իրեն . . .
Ու ամբողջ բնութիւնը կը մեծարէր Աստուծոյ անդրամիկը . . .

Եւ սակայն, եգեմի մէջ պատահեցաւ խորհրդաւոր բան մը .

Եւ այդ օր, կիներ երեւցաւ աւելի վստմ, քան այրը :
Աստղերն ու գետերը, լիներն ու մամուռները
Անպատմելի գուրգուրանքով մը կը պարուրէին Եւան :
Տիեզերքը կը արքաւար անոր շուրջը եւ անդունդներէն
կը բարձրանային սիրոյ անհատում մառազայթներ . . .

Ի՞նչ է ուրեմն այն խորհրդաւոր բանը, որ յեզաշքէց կնոջ եւ այր մարդուն դիրքը արարչագործութեան մէջ : Պատասխանը կը գտնուի բանաստեղծութեան վերջին տողին մէջ .

«Ու յանկարծ Եւս զգաց, որ բան մը կը խլրտէր արգանդիս մէջ» . . .
Մայր գառնալով՝ Եւս կը զբաւէր արարչագործութեան առաջին տեղը : Կիներ ներշնչման ու վիճակիս մըն է, որ միշտ սնունդ պիտի հայթայթէ գրազէտներու եւ արուեստագէտներու երեւակայութեան, որոնք նիւթակաշէն եւ անցողականն անդին կը ջանան ստեղծել յաւիտենականը եւ իտէալը, որովհետեւ, ինչպէս կ'ըսէ Եոհան Վոլֆկանկ Կէօթէ .

«Կիներ այն միակ անօթն է, որուն մէջ կրնանք պահել մեր խտէպապաշտութիւնը» :

Խ. Ա. Ս. Ո. Յ. Ե. Ա. Ն

ՄԱՂՐԵՊԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՒՆՎՈՅԹԸ

Քաֆքայի, Փրսևտաի, Ճոյսի գործերով հարուստացող արևմտեան գրականութեան փոխարէն, արարական Արեւելքը քաղաքական, գաղափարական դիտանկիւնէ մեկնելով կ'որդեգրէր սղագային մշակայթի ազդին ու կը փորձէր վերականգնել արարական մշակայթը:

Նոյն ժամանակաշրջանին, արարական Մաղրէոյ, իր կարգին, կը տուայտէր ձեւի եւ լեզուի սրանումներու մէջ: Աւելի քան քառասոյց դար սէտք եղաւ, մինչեւ Համաշխարհային երկրորդ պատերազմին աւարաւ, որպէսզի արարական Մաղրէոյ կարենար իր առաջին հասնձքը տայ, յատկապէս վէպի ընկալաւաին մէջ:

Անկարելի պիտի ըլլար մաղրէտեան վէպի մասին խօսիլ, աւանց որչ չափով անդրադառնալու երկրի ներքին կացութեան եւ լեզուական հարցերու մասին, որոնք գլխաւոր սղագաները պիտի հանդիսանան հրամցուող գրական փորձերուն, նուաճումներուն՝ սուր պայքարին:

Հաս եւս, ինչպէս բոլոր ժողովուրդներու պարագային, մտաւորականութիւնը կը գտնուէր ահաւոր կացութեան մը առջեւ: Գլխաւոր երկու հասանքներու բաժնուած՝ իւրաքանչիւրը, իր կարգին, կը փորձէր յեղաշրջել կացութիւնը:

Առաջին հասանքը, շրջանաւարտ՝ արարական դպրոցներէ, լեզուի եւ մշակոյթի պահպանումով կը փորձէր վտու պահել սղագային սղին, հետու մնալ գաղութարարներու մշակութային թափանցումէն:

Երկրորդ հասանքը, սահմանափակ դասնելով արարելէի ընձեռած կարելուութիւնները ու զայն արդէք մը նկատելով համաշխարհային գրականութեան բացուելու իր ձգտումին, փորձեց իրացնել գաղութարարին լեզուն, անոր միջոցաւ թափանցելու համաշխարհային գրականութենէն ներս եւ, օգտուելով անոր

փորձառութիւններէն՝ նուաճելու գրական համարձէք երկեր:

Սակայն, անկառկած, ճշմարտութիւններ պարունակող այս մտայնումը դիւրութեամբ իրագործելի միջոց մը չէր, անոնք շատ լաւ դիտէին, թէ նախ սէտք էր հմտանային ֆրանսերէն լեզուի ուսման մէջ, ապա երկնել Փրանսացիներու գործերուն առնուաղն համարձէք երկեր, եւ ինչ որ ըլլար պարագան, անոնք ընթերցողներ պիտի չունենային հայերէնքին մէջ: Բայց հոս չէր վերջանար գողցութեան, կար տակաւին ամենաէականը, արարելէն լեզուի եւ մշակոյթի պահպանման ջատագով սղագային հասանքը, որ պիտի չներէր օղտաբորձումը սղագային-ընկերային թեմաներուն, անոնց քաղաքներումով սղագային դատի դաւաճանած ըլլալու յանցանքով ամբողջանելով վերենք: Եւ որքան տարիները ընթացան, նոյնքան խորացաւ իրամը երկու հասանքներուն միջեւ, մինչեւ 1963, Ալճերիոյ յեղափախութեան յաղթանակը, երբ անոնք գէժ յանդիման պիտի գանրելէն լեզուի եւ մշակոյթի ահաւոր երեւոյթի մը:

Համաշխարհային երկու պատերազմներու միջեւ երկարող ժամանակաշրջանը կը յատկանշուի արարական դատական գործերու երկնումով եւ արարելէն լեզուի եւ մշակոյթի պահպանմամբ: Շարունակելով գտաական բանաստեղծութիւնը, հազուադէպօրէն դուրս եկան վերոյիշեալ միջոցառման, երկնելու սւշացած ուսմանթիցմով բարախան գործեր կամ վէպի նախափորձեր:

Այս շրջանի գլխաւոր գերակատարները կը հանդիսանան «Ալ-Շահապ» հանդէսի խմբագրատէս Պրն Պատիս եւ երկնձարան Ռիւսա Հու. Հու, Ալճերիայէն, թատերաղբ Սի Քատուր Պրն Ղադրիթ եւ բանաստեղծ Մուհամէսա սլ

Յասի, Մարտիկն: Թուճուզ կ'ապրէր ա-
 լիքի բարխաւոր շրջան մը, Մահմանա-
 դրական կուսակցութիւնը, քաղաքական
 դժբաւարագոյն ուժը, 1930ին կ'իւրացնէր
 ազդային մշակութի սրգեղման եւ բիւ-
 բեղացման հարցը, ուր կը հանդիպինք
 հանրածանօթ բանաստեղծ Ապու Քասէմ
 ալ Շապիի եւ վիդուսան Ալի ալ Տոււաճի:

Մակոյն այս շրջանը կը յատկանշուի
 նաեւ Փրանսացի մասուրականութեան
 Ալճերիոյ հանդէպ ցուցարեւած հետա-
 քրքրութեամբ: Անոնք, յատկապէս Ռանո-
 սո, տեղացի մասուրականութիւնը մղե-
 ցին Փրանսերէնով գրելու, սրուն իբրեւ
 արդիւնք 1926ին Այ Հաճ Հաճօ Ապու ալ
 Քասէր պիտի հրատարակէր Փրանսերէ-
 նով գրուած իր առաջին գործը. «Ածխա-
 հանքի բանուարի կնկան ծագիկ»ը:

Աս այդ՝ կը նկատենք մագրէպեան
 վէպը ծնունդ սկսաւ առնել Ալճերիոյն
 յատկապէս եւ Փրանսերէնով ընդհանրա-
 պէս, իսկ բանաստեղծութիւնը, իբրեւ
 արտայայտչական միջոց, մնաց վերա-
 պահուած արարեղէնով գրող մասուրա-
 կանութեան:

Պատերազմի աւարտէն անմիջապէս
 ետք, Ա. շրջանին, 1945-1953, մագրէպե-
 ան մասուրականութեան առաջին սե-
 բունդը ինքզինք դէմ յանդիման պիտի
 դանէր գանձարն հարցերու, յատկապէս
 Փրանսերէնով գրող հեղինակները. անոնք
 օգտուելով վէպի ընձեռած կարելիու-
 թիւններէն, սկսան լուսարձակի սակ առ-
 նել առօրեայի գանձարն հարցեր, ան-
 հատ, ընտանիք, ընկերութիւն: Ծրանա-
 կան ձախը մեկնելով քաղաքական, դա-
 դափարական դիտանկիւնէ եղաւ առաջին
 քաջակերողը սոյն դրականութեան: Սոյն
 կեցուածքը երկասյրի սուր մը եղաւ Փր-
 անսերէնով գրող մագրէպեան մասուր-
 ականութեան համար: Մահմանուզ այն
 դորձերը, սրոնք պնասատանրի կարծա-
 նանային Փրանսացիներու կողմէ, կը
 շնորհաբաւուէին ազդայնական շարժու-
 մէն, անոնց մէջ գանձարով երկրի կական
 հարցերէն — յեղափոխութիւն, սոյսքար
 — փախուստ սուղ մասուրականու-
 թիւնը, սր ստօրեայ մանրուքներով գրա-
 դելով կ'այլանդակէր հայրենիքի դիմա-

դիծը, կը վնասէր անոր դատին. այս մօ-
 տեցումի առաջին դահերէն եղաւ Մուսա-
 մարի, 1952ին հրատարակած «Մոնոցուսձ
 բլուր»ը հատարին պատճառաւ:

Գառչ Մահճուզ հատարի հրատարա-
 կութեան ստիժով կը հատարէ հետեւեալ
 ամբաստանութիւնը. «որովհետեւ դա-
 դութարարի մամուլը դրական ձեւով
 անդրադարձաւ «Մոնոցուսձ բլուր»ի մա-
 սին, այդ կը նշանակէ, թէ ան, դարձը
 գէշ է, բնագրաւուած երկրին համար»,
 իսկ Մուսթաֆա Աշրաւ կ'ընէ հետեւեալ
 յայտարարութիւնը. «Մուսմարի՝ փո-
 խանակ ներկայացնելու Ալճերիոյ իրա-
 կան դիմադիծը, կը ներկայացնէ փակ-
 ւած, անլամարլոյձ ընկերութիւն մը,
 բղկուած ներքին հարցերով: Ան,
 Մուսմարի, այս ձեւով կ'ազարակ Ալ-
 ճերիոյ եւ անոր արդար դատին վիճա-
 գիծը»:

Եզրակացնելու համար կարելի է բ-
 սել, թէ այս շրջանի դարձերը կը մնան
 առօրեայի Փուլքուրիկ նկարագրութեան
 եւ անմիջական պղծեցութիւններու սահ-
 մաններուն մէջ, զիրքսրոշումներէ եւ
 խորացումներէ հետու:

Երկրորդ շրջանը, 1954-1958, սե-
 բունդի մը փոփոխութեան շրջան ըլլալէ
 աւելի՝ եղաւ դարպացումի, բիւրեղաց-
 ման երկու մշակութիւններու — Փրանսա-
 կան եւ արաբական — եւ անոնց միջեւ
 դարպացող բախումներու եւ նոր դիրքօ-
 բաշումներու շրջան:

Օրինակ, Մուսմարի շարունակելով
 հանդերձ Փրանսերէնով գրել, 1956ին կը
 հրատարակէ իր երկրորդ վէպը, «Արգա-
 բիմ շփուր»ը, ուր հեղինակը բացայայտ-
 օրէն կը վերքորուի Ծրանայի կիրար-
 կած բանակարութեան դէմ, մինչ նոյն
 շրջանի հեղինակներէն Շարայիպի պիտի
 բռնէր. «Գողութարար մը չէմ, բայց նաեւ
 դէմ չեմ դողութարարութեան, այլապէս
 համոզուած եմ, սր գողութարարութիւ-
 նը պահանջ մըն էր եւ փրկիչ մը իսլա-
 մական աշխարհին, մինչեւ իսկ դաշու-
 թարարի ծայրայեղութիւնները, տաւել
 եւ բոսնայի արժէքները եղան թիթմորը
 ընկերային վերածնունդին, սրուն գոր-
 թծնքը կ'ապրինք այսօր»: Շարայիպի,

բուսն ջննդագրություն էնթարկուել է
 ետք, փորձեց ոչոքարացնել ինքզինք,
 համառոտահային արժեքափէ մեկնող իր
 մասհագութիւնները պարզելով, սակայն
 հակասակ իր արժէքին, խրամը չզոցուե-
 ցաւ ընտւ. և հեղինակը կամային դիմեց
 ինքնամեկուսացման եւ աքսորի:

Այսպէս Միմի, այս սերունդին երրորդ
 դիմաւոր գէճքը, — հրէական ծագումով
 — երկրորդ սերունդի ամենատեսեան ու
 զարգացման, Շարաշիպիի հետ կը նկատ-
 ւի իր սերունդի յառկանշական գէճքե-
 րէն. անոնք դուրս գալով սոսորեայ մաս-
 հագութիւններէ, քողպերձեցին և քըն-
 նագատեցին քողաքական եւ մշակութա-
 յին քողին սակ մզուոյ պոյրարը, Միմի
 «Աղէ արձանք» իր առաջին հատորով կը
 ներկայացնէ իր իսկ ձախող մանկութիւ-
 նը: «Պագր»-ը երկրորդ հատորով Միմի
 կ'անդրադատնայ խոսն ամուսնութեան
 եւ անոր շարիքներուն, ոչբերդութեան,
 մանուսանդ, երբ անոնք չեն հիմնուիր
 սէրէն աւելի հեռու փոխադարձ յարգան-
 քի եւ հասկացողութեան վրայ:

Շարաշիպիի «Պարզ անցեալ»-ը հա-
 տորը — հրատարակուած Այճերիոյ յե-
 զափսխութեան օրերուն — սումբի մը
 աղբեցութիւնը գործեց, իսլամութեան և
 իսլամական բարքերու գէճ իր ըմբոստա-
 ցումով: Ան ընտանիքը ներկայացուց իբ-
 բեւ նիսած բիրեղացումը դասական բմ-
 բրանումներուն, յատկապէս հայր-որդի
 փոխադարձ յարաբերութիւնը: Երկրորդ
 հատորը՝ «Իլաւ», գործեալ ըմբոստա-
 ցումի ազդակ մը, բայց այս պարագա-
 յին պայտթարարին գէճ ուղղուած:

Մարտի և թունուզի անկախութե-
 նէն ետք, 1956, մաղբէպեան վէպը սկսու
 ընթանալ երկու տարբեր ուղղութիւննե-
 րով: Անկախութեան արագած երկիրնե-
 րը, իրբեւ պետութիւն, դարկ սկսան տալ
 արարերէն լեզուին եւ արարերէնով հրա-
 տարակոսող դիրքերու, ինչպէս նաեւ գր-
 բական եւ մշակութային հանգէսներու,
 ջանալով միշտ միացնել օգտակարը — ա-
 բեմատեան զրահանութեան — ու հարկու-
 ւորը — դարկ տալով արարերէնին, ու-
 ղուն իբբեւ արգիւնք կը հանդիպինք ա-
 սելի հուստարակչուած — մշակութա-

պէս — սերունդի մը. սակայն նոյնը չե-
 ցաւ պարագան Այճերիոյ: 1958ին բանկող
 յեղափոխութիւնը դրեթէ բարբառի յե-
 գաշիւց կացութիւնը: Երկրորդ սե-
 րունդի սպասուածութեամբ ընթացող սե-
 րունդը, արեւոյ կացութեան ըլլաին սակ,
 միացաւ յեղափոխութեան ու գործաւ ու-
 նոր ջատագովք: 1958-1962 երկարող ժա-
 մանակամիջոցին քիչ չէր թիւը այն մը-
 տաւորականներուն, գրողներուն, սրտնք
 պարտականութեան ճամբուն վրայ, գէն-
 քին ու գրիչը միացուցած՝ նահատակ-
 ւեցան, ըլլալ բանակրու. մութ խուցե-
 րուն, լեռներու ձերպերուն կամ նոյնիսկ
 մարտական դարձողութիւններու ընթաց-
 քին, նոյնանալով յեղափոխութեան հետ:

Ասիա ճտպարի համար, յեղափո-
 խութեան գործին լաւագոյնս ստատրելը,
 անոր շանչէն մեկնած, դրական գործե-
 րու երկնամը պիտի ըլլար: Մայէք Հա-
 տատ փորձեց յեղափոխութեան երգիչը
 դաննալ, սակայն չկրցաւ յարատեւել:

Հանրի Գրայիա, իր տագանդին շը-
 նորհիւ, աւելի բոխատուր գուրս եկաւ,
 սակայն Գրայիա եւ չկրցաւ իր վրայ
 գրուած յոյսերը արդարացնել եւ ալճե-
 բիացիք պիտի սպասէին մինչեւ երեւումը
 Մուհամէտ Տիպի և Քաթէպ Ետաինի հա-
 տորներուն, սրտնք կրցան արժէքի բարձր
 չափանիշներու հասցնել իրենց գործերը,
 ինչպէս Մուհամէտ Տիպի «Ո՞վ կը յիշէ
 ծովը» և «Ափրիկեան սուր» գործերը,
 իսկ Քաթէպ Ետաին, որ հանրածանօթ
 հեղինակ գործած էր արդէն 1956էն ի
 վեր «Նեմե» գործով, «Վրէժի կեցում»-ը
 և «Աստղերով զայդարուած գլխարկ»-ը
 գոյր հատորներով ո՛չ միայն յեղափո-
 խութեան երգիչը եղաւ, այլև եկաւ
 հաստատելու իր՝ յեղափոխական գրողի
 կինքը, որ կրցաւ յեղաշրջել նախորդ սե-
 րունդի կիրարկած գրերածեւը, դուրս
 գալ սոսորեայի փոխանցած զգացական
 մթնոլորտի թակարդէն և սպրուած իրա-
 պաշտութեամբ, իտրացումներով, երա-
 մըլչտականութեամբ, վայրի մանրամաս-
 նութիւններով, արարականութեամբ և
 խոհականութեամբ օժտեց իր գործերը.
 Քրանսական ձախը, սրտն չէր պատկա-
 ներ Ետաինի յայանարկութեւր, չկրցաւ

մերժել անոր տաղանդը: Ազգայնական մտաւորականութիւնը — ընդհանրապէս արարելէնով դրող — անոր մէջ գտաւ, ինչպէս բինք, յեզափոխութեան երդիչը: Իսկ Քրտ Բոս Ետտինի երկրորդ զբքի հրատարակութեան առիթով չփրանեցաւ բանը: «Ան՝ արիւնատ Թշուաւոսի-եան Ռեմպոն է» եւ «եթէ հաննար մակդիրը կայ, խնատ ունի տակաւին, պիտի ըսէի, Քարէպ Եասին ունի այդ հաննարը, բայց մեր օրերուն ամէն ինչ հաննարեղ ըլլալով, ուրեմն սակիտիեմ՝ ըսելով Եասին մեծ բանատեղծ մըն է»:

Զարթօնքը, որ եղաւ մադրէպեան (Մանուանդ ալճերիական) վէպինը, Համաշխարհային Երկրորդ պատերազմէն ետք ծնունդ առած, բիրեցացումի հասած երկրորդ եւ երրորդ շրջաններու ընթացքին, յեզափոխութեան յոգեմտակէն ետք (1962) յանկարծ կանգ առաւ, իւրաքանչիւր հեղինակ, մտաւորական անկէի առջեւ սկսած էր դռնէլ ինքզինք, անորոշութիւն կը տիրէր ամէն տեղ:

Ֆրանտայիներու կողմէ բաջալերւած մէկ որոշ տակոսը սկսաւ ամօթ զլալ օտար լեզուով գրած, օտարին զործիք եղած ըլլալուն համար ու շփոթահար անորոշութիւնը փարատելու համար շտաբը կատրեցին իրենց դրժները՝ անլամ մը եւս չվերապահուալու դրական տաղարէզ, ուրիշներ հարցը լուծուած կարծեցին՝ Յրանտա, յաակապէս Փարիզ հաստատուելով, այլաեղ անկախաբար շարունակելու իրենց գրականութիւնը: Միմի, Տիպ, Գրոյիտ, Շրոյիպի: Այլ հեղինակներ, որոնք միտցած էին յեզափոխութեան, իրենք եւս ստացան իրենց բախի լուծինը, շտաբը գնահատուեցան կասաւորական բարձր պաշտօններ ստանալով, որոնց մեծ մասը մտցաւ գրականութիւնն ու կոչումը: Մուհամէտ Մառէտի եւ Պէնճալան: Ուրիշներ իրենց առօրեայ աշխատանքին հետ պարբերաբար, սոսկ իրրեւ անուշ, Երեւան գրական հանդէսներու մէջ: Մուամարի, Ատիա Ճապար: Այլ խումբ մը, յուսախար ստացուած արդիւնքէն՝ հեռացաւ երկրէն: Մրտա Պորպան:

1962էն ետք գրական մթնոլորտի բա-

ցակայութիւնը տկնայտ էր Ալճերիայ մէջ. սակցծուած նոր իրավիճակին վրայ կու գային աւելիալ նաև «արարականացման» — լեզուի եւ մշակոյթի — պետութեան որոշումը, ինչպէս նաև կուտակցական օրգանի սրգեցրած մարքսիստ ուղեղիծը, որոնք իրենց անդրադարձը ունեցան յաւելիալ չափով անդամալուծելու ո՛չ միայն գրականութեան մշակութիւնը, այլեւ՝ գրական-մշակութային առօրեան:

Մինչև 1962 երկնոց հեղինակներու անազգակի լուծարքը, ինչպէս տեսանք, իր դէշ անդրադարձը ունեցաւ մաղքէպեան գրականութեան վրայ, ընդհանրապէս վէպին, որուն իրրեւ արդիւնք 1965էն ետք հրամցումը գործերը (որոնցմէ կարելի է յիշել «Ներուալի անճրեւերքը՝ Ալտա ալ Բահման Մրրինիի», «Վալը երկիրը կը վախուի»՝ Յարթա ալ Բուուիի, «Կեանքի հեղքը՝ Լոյսքրի Ահմէտ ալ Մուպրիի եւ «Կեանքն է»՝ Մուհամէտ Պուրանի գործերը) ո՛չ միայն Ֆրանսերէնով երկնուած գործերուն խորքն ու յաջողութիւնը շունին, այլև բաւական հետու կը մնան տակուին արարական աշխարհի իսկ վէպէն՝ Նաճիպ Մահմուդի գործերէն: Նահանջը, որուն պատճառները կու գային հինէն, կը բարդանար աւելի նոր տղակներու կուտակումով:

Հինէն գոյութիւն ունեցող լեզուական (մշակութային) հարցը, պետութիւնը միանգամընդմիջա կարծեց լուծած ըլլալ, արարելէնը պետական լեզու հրահանգելով եւ դիմելով արարականացման բարբարոսութեան. երեւութապէս ճիշդ էր մօտեցումը, սակայն իրականութիւնը բարբարոսին այլ էր:

Ֆրանսերէնով երկնուած գրականութիւնը տղային հարստութեան անբաժանելի մէկ մասն էր այլևս, իսկ անոր եւ արարելէնով երկնուելին — վէպ — միջև գոյութիւն ունեցող տարբերութիւնը ահասար. մէկը սկսած էր ընթանալ համաշխարհային գրականութեան շարունակներով եւ տղահոված որոշ վարկ, միւսը աւելի քան նախնական. եւ կարելի է ուրանալ այս մէկը: Մրագրուած կերպով ամոզ զպրոցներու ցանցը անմիջա-

կան լուծում չկրցաւ բերել ու հարցը մնաց հարց՝ խոր եւ արժատական :

Այդ ուղղութեամբ մտաւորականութեան միջեւ ծագած վէճերը սկսան գանազան լուծումներ առաջադրել :

Ա.— Արարականացնել ամէն ինչ, հիմնուել թարգմանական գրականութեան եւ զիտութեան վրայ, նոր հիմքերու վրայ հաստատելու պետութիւնը :

Բ.— Մշակութային հաշտեցում. պահել արարելէն իրրեւ պետական լեզու, բայց երկրորդական եւ բարձրագոյն — համալսարան — ուսման պարագային վերադառնալ Ֆրանսերէնին :

Գ.— Դասական արարելէնը վտարելնել առօրեայ արարելէնով, սրովհետեւ միակ հասկնալի լեզուն էր մեծ քանդուածին :

Ասիկ դուրս կար նաեւ իւրաքանչիւր երկրի ղեկավարութեան ուղեգիծը, իւրաքանչիւր պետութիւն առանձնաբար առած, տեսական եւ գաղափարական պատանկիւնէ մեկնելով՝ ունէր իր մասնագութիւններն ու հեռանկարները :

Թունուզի աջ թեքող քաղաքականութիւնը մեծ վերիփայտումներ շարձանագրեց երկրէն ներս, անկախութենէն ետք շարունակելով հանդերձ արարականացման շափաւոր քաղաքականութիւնը :

Մարտը՝ աւելի աւատապետական եւ պահպանողական հիմքերու վրայ գտտուարելով իր աշխատանքները, դրեթէ ոչինչ բրաւ այդ ուղղութեամբ, մանաւանդ՝ որ երկու մշակոյթներու հարցը այդքան ալ արժատացած չէր երկրի մր մէջ, ուր ժողովուրդը դրեթէ անուս, հաղիւ տեղեակ Ղուրանի արարելէնին, ուր մնաց օտար լեզուներու :

Սակայն բոլորովին տարբեր էր Ալեքսերիոյ պարտզան, զօրաւոր կերպով ենթակայ եղած, զպրօցներու լայն ցանցերով, մշակութային թափանցումի, մտաւորականութեան Ֆրանսականացումով երկրիեղևուած. արարելէնը, հակառակ սահմանափակուած ըլլալուն, տեղական բարբառի կողքին կրցած էր ազգային ազատագրական շարժումի հովանաւորութիւնը վայելել ու մեծ վարկ ապահովել անկախութենէն ետք, ղեկավարութիւնը

արարականացման քաղաքականութեան կողքին չվարանկցաւ նաեւ իր մարքսիստ ուղեգիծը պարատղրել, մտաւորականութեան միջոցաւ գրականութեան, ժողովուրդին :

Բայց սրբազաններուն, մինչեւ այսօր, արարական Մարքէսի կ'ապրի որոնումներու մէջ, սակայն պատասխանատուներ եւ լուստես մտաւորականութիւնը չեն վարանիր յայտարարելու, որ այս կացութիւնը սերունդի մը հարցը կրնայ ըլլալ միայն, որմէ ետք, երբ ուսուցման տակօր մեծ յաւելում արձանագրէ, պիտի վերնան այս մասնագութիւնները, արարելէնը պիտի արժատանայ ո՛չ միայն իրրեւ լեզու, այլեւ՝ հոգիներուն մէջ իրրեւ ազգային միասնակամութեան եւ ամբողջականութեան զօդիչ կապ եւ, օգտուելով յետ յեղափոխութեան սերունդի խարխափումներէն՝ պիտի կարելի ըլլայ վերականգնել, լուծարքի ենթարկելով օտար մշակութային թափանցման վերջին հիմքեր. եւ առ այդ՝ անոնք, մտաւորականութիւն եւ ղեկավար դաս, չեն ժրխտեր ներկայ գրական առօրեայի ամբողջութիւնը, հրամցում զօրձերուն ե՛ւ թիւր, ե՛ւ սրակը, ա՛յնքան՝ որ քննադատներ պատրաստ են ողջունելու լոյս տեսող սրեւէ զօրձ, պարզապէս ապահովելու քանակը, որմէ ետք, կը խորհին անոնք, թէ ինքնարեւոյթար կու գայ նաեւ սրակը :

Տեսակէտ մը, որ սրքան թէական ըլլալ, գրական է նաեւ, որովհետեւ իրեն հետ կը բերէ բոլոր իրաւազրկուած ժողովուրդներուն հատառքը հանգէպ իրենց ժողովուրդին, լեզուին, գրականութեան, մշակոյթին. բոլոր տեսակի գաղաթատիրութեանց, քաղաքական, մշակութային թէ գաղափարական գետններու վրայ, որովհետեւ ժողովուրդ մը չի կրնար ինք ինք ըլլալ, եթէ հայրենիք չէ, եթէ հող չէ, եթէ լեզու չէ, եթէ մշակութիւն չէ զինք կատարն ու զօրպր, որքան ալ նախնական ըլլայ ան : Որքան ալ հետո համաշխարհային չափանիշներէ, կր բաւէ, որ ինք ինք ըլլայ եւ ոչ կախեալ ուրիշներէ :

ՆՈՍՐՈՎ, ԱՍՈՅԵԱՆ



ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍԸ

(ԲԱՐԳԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ)

Քառերկան արուեստը ունի իր առանձնա-
յատուկ պայմանները, որոնց իրականացումով
ի յայտ հազ րայ անուանյալ երկին արժէքը: Արժե-
ւորման հարցը սառեկարար կը պայմանաւորուի
նեխին թատերականացումով, առանց որուն կա-
րելի չէ ըմբռնել թատերագրական աշխատանքի
մը սրահը՝ թէ՛ իրրեւ յղացք եւ թէ՛ իրրեւ հա-
զարդական գգայնութիւն:

Թէ ի՞նչ է թատերագրութեան արուեստը եւ
զոյն բազմազան շարակից տուեալները՝ կը կազ-
մեն առանցքը Բարզէն Փափազեանի «Թատերա-
գրութեան արուեստը» հատորին, որ լայն տեսա-
անցեալ տարւան զխնամին (1977): Թատրոնի
Վերաբերեալ վիճելի տեսակէտներու եւ հակա-
զէր բմբռնումներու համադրումը ըլլալով հան-
դերձ, թատերագրական ծանօթ իրազորմանե-
րու լայն տակ, թատերախաղի կառույցը՝ տա-
րագոյ աշխատանք մըն է անիկա՝ յատուկ մեկնա-
բանութեամբ բանաձեւուած:

Անկախ լեզուական շարհներէն, որոնք յա-
ւելեալ նպատակով մը կ'արժեւորեն հատորը, Բ.
Փափազեանի «Թատերագրութեան արուեստը»
թատերագրութեան մասին գրուած լայն ուսում-
նասիրութիւն մըն է՝ դիտական ճշգրտութեամբ
հիմնաւորուած: Մեր ծանօթութեան սահմաննե-
րուն մէջ, երբեքիցէ չենք հանդիպած նման այլ
աշխատանքի մը, որ անդրադարձած ըլլայ թա-
տերագրութեան արուեստին սյուրան հանգամա-
նորէն եւ նիւթի մատուցման տեսակէտով ջուշա-
բերէ նոյնքան խզճաճա աշխատանք, բծախնդ-
րութիւն եւ արամբարանական մօտեցում:

Հատորի նախամուտքին, հեղինակը կը փորձէ
քննարկել թատրոնի կոչումը, որ գարեքէ ի վեր
ստացած է ճրատաց րնայթ: Ըստ իրեն, դոյսու-
թիւն ունի ընդհանրական ըմբռնում մը, որուն
համաձայն՝ թատրոնի կոչումը կը սահմանուի
հանդիսատեսը գուարձացնելու եւ զոյն տօրեա-
լէն այլ աշխարհ մը փոխադրելու ցանկութեամբ:
Ան դէմ յանդիման կը բերէ տարբեր ժամանակ-
ներու եւ տարբեր պայմաններու տակ ապրած
թատերադիրներու հակամեայ տեսակէտները, որ-
ոնց բարձու յաճախ կը յանդի բարբարոս ար-
գիւնքի մը՝ վերանորոգելով թատերական կեան-
քը նոր իմաստ մը կամ նոր առաջադրանքի մը
ներմուծումով:

Բ. Փափազեան հետամուտ է այն համոզու-
մին, թէ որեւէ կոչում պէտք չէ վերագրել թա-
տրոնին: Այդ պարտականութիւնը կը վիճակուի
թատերադիրին: Թէ՛ ջնարկութեամբ յանցապար-

տութեան րեսը ի՞ր ուսերուն գգալով՝ րտտերա-
գիրը պարտաւոր է մարդկութեան անգորութեան
կամ պատապարտութեան գգայնութիւնը յայտնա-
բերել, բաւարար ջերմութեամբ փոխանցել հան-
դիսատեսներուն, փարակել զանոնք նա՛յն գգալ-
նութիւններով: Բարսյական պարտաւորութեան
այս ճամբուն՝ թատերագիրը միակ իրարեկ ոչքն
է, որ պարտի հետեւի կեանքի հարկութիւն հեռ
ծնունդ անուց քնկերային, անտեսական, քաղա-
քական յեղաշրջումներու, ինչպէս նաեւ նոր ի-
րադարձութեանց զծով յայնապարծուած ընկե-
րային անարգարութեանց, անբարեգութ արարք-
ներու, մարդ անհատի հողեւոր թէ իմացական
կաշկանդումներուն:

Ըստ հեղինակին, թատերագիրը ժամանակա-
կից զարու յարսյական սկզբունքներուն ջատա-
գովն է, անհատի իրաւունքներուն վերմ պաշտ-
պանը եւ մտմ գաղափարներու քարոզիչը: Սա-
կայն, անարգարութեանց զէմ ծուսանալով ան չի
զանապ պարզ յօգուածայի մը կամ ճառագոս
մը, այլ դիտէ «մարդկային ճշմարտութեան» վե-
րածել կեանքին փոխանցում ամէն մէկ երե-
ւոյթ: Այսպէս, իր զգացած ստուապանքը ան կըր-
նայ հազարգել հանդիսատեսին անձնաւորութեանց
ընդմէջէն՝ նպատակով քնկերային կեանքի բա-
րելուման:

Թատերագիրներ որքան ալ տարակարծիք
զանունին թատրոնի կոչումին նկատմամբ եւ որ-
քան ալ փորձեն իմաստասիրական սրտն ըմբռ-
նումով սահմանել զայն՝ «քաւրամէն սպասուա-
ծը աւօրեայի մտացումն է, փախուտը սեփա-
կան կեանքէն», կ'ընդգծէ Բ. Փափազեան: Այդ
«մտացումը» կրնայ իրազորմուի «Հանկէթի մը
երկրեսպանիւն, Օթիլլի մը անձնակամ տառա-
պանքին ներկայ գտնուելով»: Ի յատմազունէ
թատրոնը ըլլալով «պահանջի մը արդիւնքը»՝ ա-
նոր կոչումը պայմանաւորուած է հանդիսատե-
սին ներկայութեամբ: Հետեւաբար, անհրաժեշտ
է, որ հանգիստակը զայ թատրոն, գուարձանայ
եւ սկանատես ըլլայ մարդկային կեանքի լուսա-
ւոր թէ ստուերսա երեւութներուն եւ մնայ մին-
չեւ աւարտը ներկայացման: Այս ձեւով, թա-
տրոնը հաստատիւ կը մնայ իր զայնպատճառին՝
հանդիսատեսին ինքնամտացման պահ մը ընձա-
յելու այլապէս էական ստաւազրութեան:

«Թատրոնը մարդկային էութիւնը հետախո-
րոյ, հանգիստակներու ներքին փնտաւումները
յայտնաբերող, մտքերն ու հոգիները յեղափոխող
եւ ազնուացնող աշխարհ մըն է», կը յարէ հեղին-

նաիր: նման հաստատում մը հոգեվերլուծական աստճանումն է մարդ-անհատին, որուն անձին մէջ կ'ապրին կարգ մը յարազոյակից անձնաւորութիւններ: Անշուշտ, տարբեր խառնուածքի, հոգեվիճակի եւ մտայնութեան տեղ տնձեր կը մըտնեն թատերասրահ, ուր, հոգեմտչ ասօրեայէն ձերբացած՝ անոնք կը գրան դրսեւորումը իրենց ներաշխարհին մէջ թաքնուած յատկանիչներու, աչիեւայ պայմաններու բերումով գտնուած ներքին մղումներու: Չիշոյ հան, հոգեբանական բարւած միջնորդութի մը մէջ, ուր երազը հնարագոյն բարեբարութեամբ մը կը ներկայանայ՝ տնտք կ'ապրին անզուպ կարօքը կերպարանափոխման, նոյնանուով տուեալ հերոսի մը սիրագործական մէկ արարքին հետ: Իրենց անձին մէջ ապրող անտեսանելի այլ անձնաւորութեան մը կերպարն է, որ պահ մը կը վերածուի գործոն ներկայութեան: «Սկսի փոխակերպման պահակը բնածին պահակը մըն է», կը բնութագրէ Բ. Փափաղեան: Վերանալ ինքնամոռացման ճամբով, զլեւասուորուիլ նախատրամ կերպարով այլ անձնաւորութեան, յայտայտել զաղափարներ, սրտք իրը չեն, դատուլ հերթաթիւներու հրեղէն ձին, վերապրիլ անցեալը եւ աշտէտ, կերպարանափոխման այլ ցանկութիւններ բնական պահանջը կը հանգիստանան մարդ-անհատին: Պահանջ մը, որուն սատարող միջազգայնը թատրոնն է անկասկած՝ ստուերտտ ամէն կրեւոյթ զարգացածեալ ապրումի մը վերածելու հրաշագոր յատկութեամբ:

Թատերական արուեստը այնքան հին է եւ խոր, որքան մարդ անհատը ժամանակի հարգոյթին հետ հարստացած իր զգացական թէ իմացական ստորգիւղիներով: Ամէն գարաշըջն ու գալի շափով մը կըրած է անոր ազգեցութիւնը իր բնկերային կրտսյցներուն, կրծմա-բարոյական մտորումներուն, անհատական թէ հասարակական ձգտումներուն վրայ:

Թատերական ապրումը դարերէ ի վեր դարձած է անբաժան մասը հանապազօրեայ կեանքին: Դերակատար եւ հանդիսատես զոյգ երեւոյթներու ծագումը ունի նախապատմական օնցեալ, որ զարաշըջանէ զարաշըջան անցնելով՝ հասած է փորձառութեամբ բեղուն ներկայ հանգրուանին: «Ամէն մարդ, ամէն օր որոշ չափով դեր կը յաւալայ, դերասանութիւն կ'ընէ ու կը ներկայանայ տարբեր անձնաւորութեան մը շինարարով», կը հաստատէ Բ. Փափաղեան: Նման գերակատարութեան մէկ վկայութիւնը կը բերէ այն վաճառականը, որ յաճախորդին զովելու համար իր ապրանքին սրակը՝ կը կեղծէ ախպրիս՝ դարձուածքներ եւ շարժուածքեր, սրտք խոտոր կը համեմատին իր իսկական անձին հետ: Մենք քիչ մը ամէն անգ ակնատես կ'ըլլանք զանազան ձեւի ներկայացումներու: Ներկայացումներ են, — կը յարէ հեղինակը, — դատաւարութիւնները, դիմարարական տղայները, անհատաւորութիւնները, հարանիքները, թագումները, եւ այլն: Մարդիկ վերակատարութիւն կ'ընեն իրենց երազներուն մէջ,

վերապահելով իրենց անձին թատերադրի եւ զբոսանի աշտէտի՝ յատկութիւններ, սրտք իրագործումը անհոտը պիտի թուէր իրական կեանքի մէջ: Մարդիկ յաճախ զխաղաղարար կը գլմեն գերասանական շարժումներու, իրենց համագումին մտնուար չեւտ մը տայու դիտարութեամբ, երբ կը զգան, թէ բաւերը անգոր են աչո համարումը բուարար ուժգնութեամբ մը գրտեւորելու համար:

Հեղինակը կ'անդրադարձնուի նախնական շրջաններուն, ուր ներկայացումները կ'գտն են երգուած բանաստեղծութիւններ, սրտք կը յորինուէին գոյգործելու տեսուածները: Հետագային յզգացուցաւ ստուածները մարմնաւորելու եւ անոնց հետ գրուցելու գաղափարը, աշտէտ, ծնունդ տայով թատրոնին, անշուշտ իր նեղ իմաստով, երկրորդ եւ երրորդ անձնաւորութեանց գործոն մասնակցութեամբ:

Այն ժամանակաշրջանի թատերադրութեան նիւթերը հիմնականին մէջ կ'ընդգրկէին մարդ-անհատի տաղտալները, ընդվրումը, ցանկութիւնները, սրտք անմիջական ծնունդն էին տասուածներու եւ մարդու միջեւ վերադարձն կապով յատկանշուած յարաբերութեան: Այդ յարաբերութիւնը կը թաւայէր հակասական գոյգ մտափոխաններու տանցքին շուրջ: Մերթ այնքան խիզախ, սր անկեա կը փորձէր յաճախ մարմնաւորել տասուածները, զրուցել անոնց հետ, հակադրելով իր ապաս կամքը անոնց բացարձակ կամքին, մինչեւ իսկ յանձն անելով չղթայուիլ Կովկասի լեռներուն մէջ: Եւ մերթ, տասուածային անհոգստրելի իմացումի՞ն եւ ընտելեան աներեւոյթ դորութեանց զիմաց՝ անկեա կը մնար անգոր, մտանելով կրտուարական համակերպութեամբ բնորոշ գոյգիմանի մը: Նման պոյգմաններու տակ կարելի էլ, անշուշտ, շատ բան անկեալել թատրոնէն, սրովհետեւ թատերական արուեստը կը զարգանայ ստուերարար անհատներու փոխարարութեանց զծով: Չուս բնագոյնական բմբնումները, վերապայտաւ ապրումները եւ մարդուն ներքին մղումները մաս չեն կազմեր կեանքին: «Երբնց մեկնակերպ ու բնութեան հետ յարաբերութեանը է, որ մարդոց կեանքը տեսանելի կը դառնայ», կը սահմանէ Փափաղեան: Եթէ մարդիկ չեն կրնար ազգել տասուածներու վրայ, անուայն կրնան ազգել իրենց նմաններուն: Կեանքը հուարական ապրում մըն է՝ իսկ կեանքի յատկութիւնները ի յայտ կու դայ կամքերու եւ ցանկութիւններու միջեւ: գոյգած բոխումով: Չորեք անհատականութեամբ չեւտուած արուեստագետներն են միայն, որ իրենց իրապատուի գոյգութեանը եւ տեսանելի վճիտ գիտակցութեամբ կրնան լծորդել կեանքը յատկութիւնութեան մշտնջենական հուարայթին:

Հեղինակը կը հաստատայ, թէ արուեստագետը հինի հանցեւոյ ցուցարարած բնագործով եւ նոր տուեալներու յայտն տակ կը բարեփոխէ կեանքը: Անոր յայտնարարած նորութիւնները սրտք վերգրուարարութեանը հոգ կ'իւրացուին, սակայն, ընկերութեան կազմէ իրքեւ ընկալելու սովորութիւն: Աշտէտ է, որ կը յատկաբնէ կեանքը՝ հինի եւ

նորի բարեխառն ներգործութեամբ: Կեանքը փոխակերպելու իր առաջադրանքին մէջ արուեստագէտը չի դիմեր հուսարակուն միջոցներու: Արտհետեւ հարգարտիան առաջնորդ մը չէ ան, ո՛չ խի օրէնդպիր մը, այլ՝ յուզումներ առաջացնող մը:

Հեղինակը կը հաստատայ սակարկին, թէ արուեստը որեւէ նպատակ չի հետապնդեր: Կարելի չէ վերագրել անոր որեւէ տեսակարար յանձնարարութիւն: Արուեստի միակ յանձնարարութիւնը յուզումներ կրթնելու մէջ կը կայանայ՝ մարդկային, ճշմարտի եւ զեղեցիկի երբեակ իմացումներով յայտնաբերում: «Անխառն յուզական տրիտրիին մէջ իր ստաշպուցած արձագանգներով է, — կը շեշտէ Փափազեան, — որ արուեստագետ գրագետը կը դառնայ մարդկային կողմից արձանագրուող մը, ընկերային պայմանները բարելաւող, մարդկայնացնող գործուն մը»:

Այս առաջադրանքին իրադրծումը վերադասում է թատերադրական արուեստին՝ հանդիսատեսին դիւրահասարակ բլլալու իրողութեամբ: Հանդիսատեսով նաեւ զփութարարունը դրական սեւերուն՝ զփութար է եւ արտակարգօրէն փշտա արուեստագէտ-թատերադրին ստեղծարարական ճանտարբը: Այս պատճառով, հարուստէջ երեւոյթ մը կը պարզէ մեծարժէք թատերադրներու պարզան:

Բ. Փափազեան կը համոռոտարդէ թատերախաղը բարձրագոյ ասարբերը, շեշտելով, թէ դործի մը բնմականացման մէջ առաջնահերթ տեղը կը գրուէ թատերախաղը: Բեմագրիչն ու բեմական ասարբարունները չեն կրնար ազանայել առուեստը յան յաջողութիւն, երբ թատերախաղը դուրի է դայն ամրողայնող հիմնական ասարբերէն:

Թատերախաղը իր արտայայտութեան լրի իմաստը կ'ունենայ, երբ ընթերցելի վիճակէն կ'անցնի տեսանելի եւ ունեկողրելի վիճակի մը: Նման իրողործումի մը միտի եւ հնարար մտայրը թատրունն է անկասկած:

Թատերախաղի դանարան մասերը համահաստասար արժէք կը ներկայացնեն, որոնք նիթին արամարանական դարդացումով եւ անձնարութեանց հակադրութիւններով կը վերածուն ամրողական դիտակցութեան:

Թատերախաղը թ'նչ առաջադրանքով ալ դըրումը բլլալ, իմացական երեւոյթ մը յայտնարերելու թէ հանդիսատեսը դուարճացնելու պարզ ցանկութեամբ՝ անդայման որ տեսակէտ մը կամ նըպատակ մը կը հետապնդէ:

Թատերախաղը կը կատարուի զէպրի մը շուրջ, որ չի պատմուի թատերադրին կողմէ, այլ կը փոխանցուի հանդիսատեսին՝ անձնարութեանց միջոցաւ: Թատերական իրատկցութեամբ է, որ հանդիսատեսը կը թափանցէ թատերախաղի յայացքին եւ անձնարութեանց ներաշխարհին: Դերակատարներ ո՛չ միայն կը խօսին, այլև կը շարժին եւ կը տեղափոխուին բեմին վրայ: Անոնց շարժումները ըստ կամս չեն կատարուիլ, այլ կը պարզին պատկերացումը որոշ մտավիճակի մը: Կարթիւնը անպամ մաս կը կողմէ թատերական իրատկցութեան: Թատերադրի հայեցողութեան կը

մնայ լուսութիւնը հնարար իմաստով մը օգտագործելու եղանակը:

Ըստ հեղինակին, թատերախաղը ո՛չ միայն կը փոխանցէ մտածում մը հանդիսատեսին, այլև կը յատաշացնէ բանաստեղծական արարում մը եւ անձնութիւնը զեղեցիութեան մը զգայնութիւնը: Այս պատճառաւ, թատերախաղը կրնայ անկեալ բարդ կառույց: Աւելի՛ն, իր ընդգրկած նիթին, բացառաբար յայտն տեսլականին համաձայն, թատերախաղի ասարբերէն մէկը կրնայ ընդգրկել վերակշիւ արժէք, առանց երբեք ստուեր նեւեւու միւս ասարբերու: Բազմացոյցէ յատկութիւններուն վրայ: Այդ ուշադրաւ ասարբը կը կոչուի թատերական գործողութիւն:

Սոյն գործողութիւնը սահմանելու գծով, Բ. Փափազեան կը խորհրդածէ զպացում եւ արտայայտութիւն գոյլ ստեղծելու շուրջ, որոնց ներգործուն զայակցութեամբ կը հաստատուի արուեստի ստեղծարարական տրիտրուները: Ըստ իրեն, զպացումը հիմնական ո՛վն ասարբն է, որ առուեստը կամ նուայ ասարգութեամբ հասարակայ երեւոյթ մը կը պարզէ շնչուր կակներու մաս: Ստիպան սմէն անհաս միեւնոյն զպացութեամբ չի հակողքեր արտաբին թէ ներքին վիճակներէ փոխանցումը գրգիռներու: Ծատերու մօտ զպացական ասարբը շնցնիլը զփոխարարար իրենց ներանձնական աշխարհէն անդին: Արնչու ուրիշներ ո՛չ միայն կը զան, այլև իրենց զպացումը կրնուն վերափոխել հարգարական ասարբի: Զպարու եւ արասայտակալ բացառիկ կարողութիւնը արուեստագէտներուն մեծաշարժն է անկասկած: Արուեստի բլլալ սեւերը հիմնում են յեշտալ գոյլ իրողութեանց վրայ: Եթէ զպացումը կը կողմէ կնթասոյր, բլլալ արուեստներուն, անոնց հարգարականութեան միջոցները, ստիպան, կը յատկանշուին ստանձնայտուել դրսեւորումներով: Այսպէս, զեղեցիկ արձանէ մը առաջացած զգայնութիւնը կը փոխանցուի դիտակին՝ անսարգութեան ճամբով, երամ շուրջութիւնը՝ լսողութեան, իսկ գրտակնութիւնը՝ ընթերցումի ճամբով: Թատերադրութեան պարաղային, այդ զգայնութիւնը կը փոխանցուի գործողութիւնով միայն, որ անձնարութեան մը փոխարկուտ ներաշխարհին, ներքին ալեկոծումներուն արտայայտութիւնն է՝ անսանելի զէպրով մը պատկերացում: Այսպէս, «Լինել թէ չլինել» մեւնարտութեամբ հանդիսատեսը հարգարակից կը դառնայ Համէլթի դիմագծային շարժումներէն, ճայական շեշտէն եւ արտայայտական այլ ստարգլիններէն անդին, անոր ներքին աշխարհին մէջ կատարուող ստեղծագոյն: «Ներքին այդ գործողութիւնն է, — կը սահմանէ Փափազեան, — որ խորունկ իմաստ տուած է Համէլթի իտիքին եւ զայն դարձուցած հոգիներուն ու մտքներուն մէջ արձագանգող տալ»:

Ներքին գործողութեան մը ասարբը մէկ երեւոյթի կը յատկանշէ Իրակնի «Պուայրիկներու բնակարանը» թատերախաղին մէջըրտում հողերանական ո՛վն բարումը, որ տեղի կ'ունենայ Նորայի եւ իր ամուսնուն՝ Հեմէլթի միջև: Ներքին գործողութիւնը մը կրնայ անտեսանելի բլլալ հանդի-

ստակահին, կ'ըսէ հեղինակը, թայց այդ իրողութեամբ իսկ չի դազերիբ զսոյութեան իմաստէն: Նորայի պարադային, անոր հոգւոյն մէջ արարուող ունեւանեւի տաղնապին, անյայտ ուղեկոծումներուն արատայատութիւնը կ'ըմբռնենք այն միակ տեսանելի դէպքով, երբ Նորայ ուժգնորէն փակելով դուռը իր հոսին՝ կը հեռանայ սուռնէն: Եւ որպէսզի ներքին ազգանայ մը դառնայ տեսանելի՝ հարկ է, որ սրտը փոփոխութիւն մը առաջնայ Նորայի ներաշխարհին մէջ: Այդ փոփոխութեամբ է, որ կ'իրագործուի գործողութիւնը, որ, «արտայայտութիւնն է ուժի մը, որ բոլոր մը դուրս կը քերէ իր կայուն վիճակէն»:

Բ. Փոփոխեան կը կատարէ անհրաժեշտ մատնանում մը դէպքերու յաջորդականութեան եւ թատերական գործողութեան տարբերութեանց շարք, զորս պէտք չէ շփոթել իրարու հետ: Ըստ իրեն, թատերականացումն նիւթ մը կը զարգանայ դէպքերով, որոնց ներգաշնակ միաձուլումով կը կազմուի թատերախաղի պատմութիւնը, որ անփոփոխ կը մնայ ինչ ձևով ալ զբուրի թատերախաղը: Տարբեր է էկրէի կէտարարն, որ կը կառուցուի թատերադրիին կողմէ կատարուած դէպքերու յաջորդականութեամբ: Էնթրիկը կը փոխուի, երբ թատերախաղի պատմութիւնը յայտնագործուի դէպքերու ա՛յլ շարահիւսութեամբ, ա՛յլ մտայնացումով:

Իսկ ինչ կը վերաբերի ընդհանուր կառոյցին՝ թատերախաղ մը սկիզբէն մինչև վախճանը կ'ընդգրկէ մէկ գործողութիւն միայն, սրուն հոլովոյթը երևան կու գայ յարակից այլ գործողութիւններու օժանդակութեամբ: Այդ գործողութիւնը կը սկսի սիզգնական հաւասարակշռութեամբ, որ հետագայում զարգանալով կը հասնի դադարեանակէտ ստորձան մը, որուն խախտումով կը յոտաշանայ նոր հասարակչութիւն մը: «Գործողութիւնը երկու հաւասարակշռութեանց միջեւ տեղի ունեցող հոլովոյթն է»: Թատերախաղին համար հիմնականը գործողութիւնն է, իսկ անձնաւորութիւնները, անոնց բարեքը, շարժումները, յարարելութիւնները եւ, մասնաւորա՛ւ կ'ընթրիկը զայն բացայայտով միջոցներ են պարզապէս: Էնթրիկը որքան ալ հետաքրքրաշարժ թուի հանդիսատեսին, զայն պոյժանաւորող յատկանիշները անձնաւորութեանց ներքին մղումներն են, անոնց ներաշխարհէն մէջ կատարուող ներքին գործողութիւնը: Թատերախաղի մասնաւորներուն եւ զգացումներուն հոլովոյթին է թատերական գործողութիւնը, որ կը նպաստաւորուի այլեւայլ պոստիերացումով եւ մանրամասնութեամբ: Յիշեալ բոլոր առեւտրներուն համադրուած ներգաշնակումով կը կազմուի թատերախաղը՝ իբրև միաձուլ ամբողջութիւն:

Անբարդառանալով այն հարցին, թէ ո՞ր նիւթերն են, որոնք կը ներկայացնեն թատերական արժէք, Փոփոխեան կը հաստատէ, թէ հիմնականին մէջ չկայ ոչ մէկ բացարձակ արբերութիւն նիւթերու միջև: Որովհետեւ, նիւթի մը թատերական արժէքը առաւելարար կախեալ է թատերագիրին իմացական հարստութենէն, տաղանդին շեշտուած գործութենէն եւ մարդկային կեան-

քը ըմբռնելու անոր բացառիկ կարողութենէն: Այոպէս՝

Մտայնակ մը թատերական ապրումի կը վերածուի Շէյքսպիրով:

Ընկերային կացութեան մը իրազեկ կ'ըլլանք Պերնար Շոշով եւ Պրելսթով:

Կէօթէ եւ Սարթր կը փոխանցեն իմաստաբարական մտածում մը:

Եթէ Ձեխով կը մատնանչէ ընկերային փոխարարելութեանց հողերանական բնոյթը, Շանթով կը դիտակցինք հողեմիջակի մը ուղեկոծումներուն:

Եթէ Իոնեսքոյով կ'ըմբռնենք անհաստատութիւնը հաղորդակցութեան գծուարութիւնը, Պեքէթով կը զգանք մարդուն անձկագին սպասումը՝ անորոշ հեռանկարի մը գիմաց:

Թատերական տեսանկիւնէն դիտած՝ նիւթի մը սեփական բնոյթը չէ, որ կ'ընծայէ անոր համարտասխան արժէք, այլ այդ նիւթին արծարծած հարցադիմանքով հանդիսատեսին ուշադրութիւնը գրաւելու իրողութիւնը: Հարկ է, հետեւորար, որ հանդիսատեսը ուշադրութեամբ հետեւի բեմին վրայ թաւալող գործողութեանց, անձնաւորութեանց տաղնապին, ինչպէս նաեւ դէպքերու ուրողական հարկոյթին: Հանդիսատեսին մօտ յարուած ուշադրութիւն մը կայացնելու անհրաժեշտ պայմանը, ըստ հեղինակին, կ'ենթադրէ յարափոփոխ շարժումի մը իրագործումը բեմին վրայ: «Թատերախաղ մը փոփոխող կացութեանց համարաբար մըն է», կ'ըսէ ան, թէ՛ կայուն վիճակներ թատերական ըլլալու ոչ մէկ տուեալ ունին, այլ՝ առաւելադրելով, հակադրութիւն մը ստաշանելու օգտագործելի միջոցներ են պարզապէս:

Նիւթ մը կրնայ թատերականանալ այն պարագային միայն, երբ ամէն հնարաւորութիւն ի շարժ կը զբուրի ընթացք տալու գործողութեանց, որոնք զարգացման հանդերձանային շարժումներով կը հասնին բարձրագոյն կէտի մը՝ գաւառով թատերական շարժում:

Թատերական շարժումը կը հետադիմէ նպատակ մը անպայման: Ո՛չ մարմնական եւ ոչ ալ անբարդարժ շարժումները կրնան ունենալ թատերական արժէք, եթէ անոնք չյայտնակերպեն ներքին իմաստ մը: «Մարդոց ներքեւ տեղի ունեցող փոփոխութիւնները, մղումները եւ անոնց արդիւնք շարժումներն են, որ կը կազմեն քատերական թուաւորը», կը պարզէ հեղինակը: Այդ շարժումները սքզիւնքն են դիտակցութիւն կատարուած գործողութիւններու, որոնք ս'չ միայն կրնան մարմնական ըլլալ՝ այլեւ՝ մտային:

Թատերական շարժումները իբրև փոփոխութեան մղիչ ուժ ներկայացնելու դժով՝ հեղինակը կարելուր մէջբերումներ կը կատարէ նախ Լ. Շանթի «Ինկամ բերդի իշխանութիւն» թատերախաղին, որ կը բացայայտէ յուսահատ մօր մը հողեմիջակութեան, որ կ'ենթադրուի բացարձակ հողեմիջակութեան՝ նոր մտածումի մը բարբարա աղբիւնութեան տակ:

Ապա, Համլէթի «Լիմել քէ շիմել» մենախօսութեան մէջբերումով՝ կը վարձէ ցոյց տալ թատերական գործողութեան մը մտային կամ հողե-

կան ըլլալու հարցը, ուր մարմնական շարժումները կը պարզեն նուազագոյն անհրաժեշտութիւն: Մոյն մենախօսութեամբ հանդիսատեսը ո՛չ միայն կը հետեւի Համէթի խորհրդածութեան ընդմէջէն անոր ներքին աշխտածումներուն, այլեւ՝ անձնապատկան մտածումով պարտուած անոր հոգեվիճակին, որ կ'ենթարկուի ակներեւ փոփոխութեան՝ Օֆելիայի յիշակարճ երեւումով: Այսպէս, նոր հոգեվիճակի մը յայտնութիւնը յայտարար նշանը կը հանդիսանայ այն ներքին շարժումին, որ կը կազմէ էական տարբը թատերական դործողութեան: Այդ տարբը էր բացորոշ ազդեցութեամբ կը բերէ յառաջընթաց ներգործութիւն մը թատերախաղին:

Թատերական դործողութեանց առնչութեամբ, Փափաղեան կը շեշտէ, թէ թատերախաղի մը գէղարար պէտք է ընթանան բնական յաջորդականութեամբ: Թէ՛ տուեալ դործողութիւն մը երբ մուտք գործէ թատերախաղէն ներս արուեստական ներմուծումով, կ'արժեզրկուի անոր թատերական արժանիքը: Հիմնականը անձնաբնութեանց ներքին շարժումն է, անոնց հոգեվիճակին մէջ առաջացող փոփոխութիւնները, որոնք տեսանելի կը դառնան արտաքին շարժումներով՝ բնական հունով մը զբնեւորուած:

Թատերադերին համար էական մտահոգութիւնը ներքին դործողութեան մը մարմնական համապատասխան շարժում մը դանելու հարցն է: Իսկ մարմնական շարժումին համար անհրաժեշտ տրուելու անոր իմաստն է կամ նպատակը: Ամենաանշարժ տեսարանն անգամ կրնայ իմաստ մը բովանդակել:

Աւելի՛ն. թատերական որեւէ դործողութիւն, ըլլայ պարզ կամ բարդ, պէտք է ունենայ գոյութեան սեփական իրաւունք: Թատերախաղը համագրութիւնն է նման դործողութիւններու, որոնք հիմնականին մէջ փոքր թատերախաղեր են, իրենց սեփական յղացքով եւ գործողութեամբ:

Նիւթի թատերականացման կապակցութեամբ էր բացատրութիւններն ու սահմանումները եղբորփակելով՝ Փափաղեան կը յայտնէ, թէ վերոյիշեալ հարցը վիճելի ըլլալուն՝ ամէն զարաշրջան մտահոգմ է անոր ըմբռնողութեան յատուկ տարազով մը: Առաւել հանդամանօրէն ըմբռնելու մըտահոգութեամբ՝ հարկ է քննարկել զայն՝ բոլոր զարաշրջաններու մտածողութեանց հոլովոյթին ընդմէջէն:

Համառոտադրելով թատերական մտածումի հոլովոյթը՝ հեղինակը կը հաստատէ, թէ հինէն ի վեր թատերին հասարակաց թեման եղած է մարդը՝ իր տաղնապներով, հարցականներով եւ նկարագրային զարտուղի վիճակներով, յունական դասական շրջանէն մինչեւ վերածնունդի շրջանը, վիպապատկերներէն մինչեւ 19րդ դարու խորհրդապատկերներ եւ, վերջապէս, գերիբազալութեանէն մինչեւ գոյապաշտութիւն: Թէ՛ թատերական մտածումի հոլովոյթը կարելի չէ ըմբռնել տանոց երեք հաղորդ ըլլալու 19րդ դարու փրկութեան ժամանակ մտածողութեան հոլովոյթին: Եթէ մարդը հանդիսացած է թատերադրութեան միեւնոյն

թեման, «Մարդու եւ իր յարաբերութեանց ըմբռնումներն են, որ փոփոխութեանց ենթարկուած են», կ'ըսէ հեղինակը: Այդ փոփոխութիւնները անմիջական արդիւնքն են անցեալ դարուն ծնունդ առած իմաստասիրական կարգ մը հասանքներու, որոնց հարկադրարար պիտի հետեւէր նաեւ թատերադրութիւնը՝ զրական այլ սեռերու կողմէն: Եւ որովհետեւ արուեստաշէտը ո՛չ միայն տեսանողն է դեղեցիկ բաներու, այլեւ վերանորոգող տրուտի համաձայն սկզբունքներու՝ թատերը կը սպասէր իր հերթին «վերանորոգիչ» թատերադերի մը յայտնութեան, որ պիտի դար յեղաշրջելու դասական ամէն գրեթէ, ենթարկելով զայն նոր օրէնքի մը տիրապետութեան:

Արգարեւ, նորվեկիացի թատերադեր Հենրիկ Իրսէն դարձու «վերանորոգիչ» առաջնաը արդի թատերադրութեան: «Ան քառերակամ գրականութիւնը կ'արժեքաւորէր ո՛չ միայն իր բնած կարգը, այլեւ աշխարհայեցողութեամբ եւ ընդհանրականութեամբ, — կը նշէ Փափաղեան, — այլեւ՝ քառերակամ գրականութեան մէջ իր բերած թեքիքի նորութիւններով ու քառերակամ գործողութեան վերաբերուածութեամբ»:

Իրսէնի բերած նորութիւնը կը կայանար այն իրազութեան մէջ, թէ արուեստը պայմանադրող բոլոր կապակցութիւններն ու երեւոյթները, ըլլան անոնք սեռային դրոշմութեամբ յատկանշուած պահել, թէ տրամաբան հանդիսութիւններ՝ ժամանակավիճակ էին այլեւս: Իրսէն կը մերժէր կեղծիքն ու բարոյական ըմբռնումներու կեղծ պահանջները արուեստին մէջ: Իրմով ի յայտ կու դարարժեքներու թատերը: Թէ՛ թատերը հանդիսատեսը զուարճացնելու պարզ միջոց չէր այլեւս, ոչ ալ արուեստականօրէն հասարակութիւն արթնացնելու ձգտում:

Իրսէնի թատերախաղերը, ըստ Բ. Փափաղեանի, ներքին գործողութեանց ճամբով ցայտուն կը զարմեն տիպարներու հոգեբանական կառուցը: Իմով թատերախաղը կը հասնի վախճանական հանդրառանին՝ դազակարներու բախումով:

Աւելի՛ն. Իրսէն ո՛չ միայն երեւան կը հանէր նիւթի արժեւորումը, Նարցադրելով իրական կեանքէն ջաղուած վիճակներ, այլեւ կը բերէր զնահատակի աշխատանք մը թատերական թեքիքի վերանորոգման դժով: Այսպէս, իր թատերախաղերը կը սկսին տաղնապի մը կէսին եւ որոնք զէպրերու յետադարձ պատկերացումով կը յանգին ուղ տաղնապին ամբողջական իմաստին: Բեմին վրայ տեղի կ'ունենայ հարցերու քննարկում մը եւ հանդիսատեսը կը հետեւի անձնաբնութեանց միջեւ կատարուող հոգեբանական բախումին, ուր աստիճանաբար ի յայտ կու դան տարբեր հոգեվիճակներու դրոշմապատճառները:

Իր թատերական գրականութեամբ Իրսէն անհատի ազատութիւնը ջատագուցող եւ անհատական կաշխատումներու դժմ ծառայող բողոք մըն է, «կոչ մը մարդուն՝ ինկվինիթ իրականացնելու»: Արուեստի եւ ինքնադիտակցութեան թա մը պատումը, սակայն, անհատի եւ ընկերութեան ամբողջական առաջ պիտի բերէ անխուսափելի բախում մը,

սրուն իբր հետեւանք պիտի երկան դուն նոր ասպնասաներ :

Ասորեայի հարցերը քննարկող և. զանանք կենդանի գոյնեւով պատկերացնող թատերագիր մըն է Իրան : Իրմով վերանորոգում թատերագրութիւնը մինչև. Փիլանտելլո եղան է «գիտակից կառնեբու քախուճով արտայայտուող գործողութեանց կամագրութիւն մը», կ'ըսէ հեղինակը ո. կ'ուսկցնէ :

Թէ՛ Իրանի բարեկերպ նպատակով կը սկսի թատերական ճշմարիտ ուղին : Թէ՛ թատերագրութիւնը, հակառակ «արդիական» կոչուած թատերակաղերու զոյւթեան՝ — Իոնեսթօ, Պեքէթ — պիտի դառնայ անշուքման իր հիմնական ստաշագրանքին՝ ասորեան խտցումը արդումով վերարտադրելու. ճշտումին : Թէ՛ թատերագիրները յարանում հետաքրքրութեամբ պիտի անդրադառնան դարերէ ի վեր մարդը յուզող այն բոլոր հարցականներուն, սրանց քննարկումը ստաշի իսր գիտակցութեամբ պիտի պայծառացնէ որսը նպատակով մը ըմբռնուած մարդկային կամքը :

Բ. Փափաղան կարեւորութեամբ կը նշէ այն պարագան, թէ թատերական իրականութիւնը յուսով կու գայ յարաբերութեանց դժով միայն : Թէ՛ ստանց մարդուն կամ մարդկային ստորոգիլիներու կարելի չէ նրթ մը թատերականացնել :

Նկարչական պատաստ մը սրբան ալ դեղեցիկ գոյնեւով համարում տեսարան մը պարզէ, ներկայացնելով որսը անձնուստութեան մը զիմանկարը, չի կրնար ստաշացնել թատերական զգայութիւն մը մեր մէջ : Գիմանկարին զոյնընէ և. համաշափ գիծերէն քաղում մեր սպասարութիւնները, ըստ հեղինակին, չեն բացայայտեր հոգեբանական ըրումը միծակ մը՝ սպասումի և անձկութեան պահերով շէշտում : Նկարչի պատկերացումը անձնուստութեան նկատմամբ հարցականներ չեն ծնիր մեր մէջ : Թատերականը կը ծնի մեր և. այդ անձնուստութեան միջև իրարարձում յարաբերութեամբ :

Մինչդեռ, «Հիմն աստուածներ» թատերախաղի վանահայրը, որ մտախոհ և. անթարթ հայեացքով կը գիտէ կիսատար եկեղեցին, կը պարզէ այլ երեսոյթ մը : Այս պարագային, իրրև հանգիստես կը շահագրգռուինք վանահօր մարդկային յատկանիշերով աւելի, քան տեսարանին պարզած գրաւ շարթեամբ : Ի տես հերոսին՝ կը ծնին հարցականներ մեր մէջ, սրանք շատով կը վերածուին սպասումի մտտանջ վարկեաններու : Կրտսդնաղինք նոր իրադարձութեան մը հաշտցն, որ կ'ուշանայ : Եւ այսպէս, բեմ և. հանգիստես յարաբերութեամբ կ'աղբիւր վայելքը թատերական զգայութեան :

Ո՛չ ջրհեղեղը, ո՛չ հոգմերը և. ոչ խի տարերքը իրենց հղերազօր ճշմարտութեամբ կրնան

թատերական հետաքրքրութիւն մը տալ ընդէ, էթէ սրհոթ անոնց անհրաժեշտ սուտար՝ մարդկային տարրը :

Այլ՝ մարդու ներդարծօն ներկայութեամբ է, որ կը պայծառարուի թատերական իրականութիւնը : Պատկերաւոր օրինակով մը հեղինակը կը բացատրէ, թէ քանին մէջ հեղեղէն բանում երգարտաւ մարդու մը պատմութիւնը յտական նշանն աչինչ կը պարզէ : Հարցը կը փոխուի կ'ըսէ ան, երբ խմանք, թէ այդ մարդը կը մաքաւի հեղեղին դէմ : Ա՛յ կրտարական ներկայութիւն մը չէ ան և. իր մղած կենաց և. մահու պայքարը կը մտանէ մեզ սպասողական վիճակի մը, թէ ի՞նչ պիտի ըլլայ իր ճակատադիրը ճրգնաժամային այդ պահուն : Մեր հետաքրքրութիւնը, սակայն, սուտել և.ս կը դորանայ, երբ ըզգանք, թէ պինք ղէպի հեղեղը հրող անձնը կան իր շարք : Թէ՛ այդ մարդը ոչ թէ բնութեան, այլ մարդոց դէմ է, որ կը պայքարի. թէ՛ «քախուճ մը կայ մարդկային կառնեբու միջն» :

Արդարև, այդ յարումը ո՛չ միայն կը կատարուի մարմնական զործողութիւններով (հըրմըշտութեամբ, սուտերմարտ, և.սայն), այլև՝ մարդկային գիտակցութեան մէջ : Թէ՛ թատերականը սրբի զան չէ, էթէ ոչ «գիտակից կառնեբու քախուճ մը», երբ մարդիկ գիտակցօրէն կը պայքարին շրջապատի մարդոց դէմ : Գիտակից կամքը իր ներդարծան՝ սուտաներով կը վաստէ գոյութիւնը անգիտակից կամքին, այսինքն՝ կամայ թէ՛ ակամայ դործումը արարքներու :

Բ. Փափաղան կը հաստատէ, թէ գիտակից մղումները էթէ ունին ժառանգական բնոյթ, ենթագիտակից արարքները ծնունդն են սուտերարար միջավայրէն ստացումը կրթութեան :

Գիտակից թէ՛ անգիտակից կամքերու միջև սարբերութեան փնտտուքը պէտք է կրտարել կամքի ազատ թէ՛ կաշկանդում ըլլալու իրողութեան, միջավայրի ազդեցութեան և. վերջուպէս, հոգիի և. մարմնի փոխադարձ յարաբերութեանց մէջ : Այս գծով, հեղինակը մէջբերելէ ետք Քանթի, Հեկէլէի, Շոփենհաուրի, Միլարթ Միլի, Մարքսի, Նիցշէի և. Բերքեկարտի տեսութիւնները կամքի մասին, կ'եղբակացնէ, թէ մարդ ի՛նչ պայծաններու տակ ալ սարբի կամ գործէ, գիտակցական թէ՛ ենթագիտակցական աշխարհի մը տիրապետութեան տակ, ունի հնարաւորութիւնը ազատ կամքի մը արտայայտութեան : Թէ՛ ի՛նչ մտածողութեամբ ալ փորձէք քննարկել և. ըմբռնել կամքը, կայ բացայայտ ճշմարտութիւն մը, կ'ընդգծէ Փափաղան, որ մենք «մեր անձնակալ կիսմէք մեր ազատ կամքի գործածութեամբ է, որ կ'իւստուարենք կամ կ'իւստապրկենք» :


(Մնացեալը յաջորդով)

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

«ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ»

1977



ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

«Նրկրարդ հնարարութիւն»ը *անուն յօդուածէն(1) մինչև* «Անգրապարտումներ» բունաստեղծութիւններու հասարբ, ճգաւաժի մը եւ իրականացման յստակ գիծ մը կայ, որ կը կազմէ Հ. Էդոյեանի ստեղծագործական համբան, իրագործումը բանաստեղծական ծրագրերին:

Նրբ այս տանտմեակի սկիզբը Հայաստանի արդի բանաստեղծութեան շուրջ կը բանկէր բանավէճը եւ իւրաքանչիւր երկտասարդ իր տեսարանական յօդուածներով կամ ստեղծագործութիւններով կը փորձէր պաշտպանել նոր շարժումը, հոն անմիջապէս աւաղբութիւն կը դրաւէր երկտասարդ մը, որ կընտր գրել հետեւեալ տողերը.

Այս տերեւները քաշումներ են,
նայում են բաց աչքերով օդի մէջ,
նօճուում են գիւղերի հետ եւ քամուն չեմ լսում,
եւ եթէ ձեռք տաս նրանցից մէկն ու մէկին
նա չի բողբոխ, այլ միայն կը մայի իր փակ կայնացքով նման՝ լնի մէջ սուգուղ մաւակի:

Նման թարմ պայտութիւններու որոնումը, զուգահեռաբար դարպասոց բացմանդ մանի մտքի մը ներկայութիւնը եւ, վերջապէս, պատկերներու ընկալման իր իւրայատկութիւնը չէին կրնար աւաղբութիւն չզբաւել: Հարկաւ այդ ժամանակաշրջանի ստեղծագործութիւններուն մէջ յուզական եւ քնարական գիծ մը կայ, որ մեծ մասամբ չբացած է այսօր (որուն համար մինչև իսկ երբեմն կ'ափսոսանք), սակայն տալիստեղծութիւններու եւ արձագանգներու թելադրականութիւնը, իր ներաշխարհային սուգումները եւ ստեղծագործական դործողութեան միջոցին վրասկզբութիւնը գրողական արարքին՝ այլ որակ մը աւած են իր գործին:

Վերադառնալով «Նրկրարդ հնարարութիւն»ը յօդուածին, հոն կը հանդիպինք որսւ կէտերու, սրտք ո՛չ միայն Էդոյեանի դեպարտեստական առաջագրանքները կը բանաձեւեն, այլեւ՝ խորհրդահայ գրականութեան մէջ հազուադէպօրէն պատահող, ընդհանրացումներէ եւ ընկալեալ արժեքափերէ անդին, ինքն իր մէջ ամբողջական եւ յստակ ո՛յլ սահմանում մը կը

(1) «Մովեսական գրականութիւն», 1971, քիւ 2, էջ 109-111:

փորձեն սույ բանաստեղծական արտագրութեան: Նախ՝ յաստիօրէն կ'ընդգծուի մակարդակ-
ներու տարբերութիւնը, այսինքն՝ արուեստը իրբն կեանքին նայող շուտանկարային հայեցի
չի գիտարեւ, եւ կրճ՝ իրբն լիցուական համազօրը ստորեային, որուն կարագառ կամ իրա-
պաշտ ներկայացումը կը սպասուի յաճախ այնքան միամտօրէն, զեղարուեստական այլ մա-
կարդակի մը կարեկիւսութիւնը կը հաստատուի, տարբեր եւ աւելի բարդ ճշմարտութիւն մը
գրեւորելու: Կ'ընդգծուի արուեստի այն որոշ պայմանականութիւնը կամ համաձայնութեան
կորը, որ յաճախ կ'անաւտուի կամ սխալ ձեւով կ'ընկալուի:

«Կեանքում մարդիկ միմեանց հետ չեն խօսում երգելով: Բայց օրհնաբանը երգում են:
Գաւ արուեստի պարզ պայմանականութիւնն է: Այլ պայմանականութիւնն պարզապէս ստում
է. այն՝ ինչ կնարարը չէ կեանքում, կնարարը է արուեստում: Արուեստը իրականութեան
երկրորդ կնարարութիւնն է... Բայց մի՞թէ ամենապայմանական արուեստներէց մէկը,
պոետական խօսքը պէտք է բնկայել իր ուղղակի իմաստով, ինչպէս անում են մեզ մօտ շա-
տերը: Այս պէպում մի բերել շարժումով կարելի է ոչնչացնել ողջ պոեզիան, եզրիպական
պաշարաններից միմչեւ մեր մասնակաները»(2):

Այսպէս, բանաստեղծութիւնը չի ցրացնէր ստորեայի մակերեսային իրականութիւ-
նը, այլ կու տայ անոր թաղմամակարդակ՝ հոգեբանական, լիցուական, պատկերային եւ այլ
կարեւոր: Իսկ երկրորդ կէտը, որ նոյնքան հիմնական է էզոթեանի սահմանումներուն մէջ,
մ'յն է, որ բանաստեղծական պատկերը չի նկատուի իրբն զարդ կամ զեղեցիկ խօսք, այլ
կու գայ ներկայացնելու զգայնութիւնը ինքնին կամ միաձուլելու փորձառութեան զանազան
տարբերը իր մէջ: Հոս անմիջապէս կրնանք տեսնել, թէ յղացքային կամ մտնկումի որքան
պարզացում արձանագրուած է, ինչ որ կրնար ընդունելի եւ հասկնալի կամ մտնկումի որքան
ստեղծագործող բանաստեղծներուն մեծ մասին կ'ըմէ: Կրնայ ըլլալ, որ էզոթեանի բանաս-
տեղծութիւնը իր առաջագրութիւններու բարձրութեան վրայ չէր գտնուէր այն տեսն, երբ
վերադիտուած ստեղծողը կը գրուէին, սակայն որոշապէս կար անձ մը, որ գիտէր, թէ ուր կ'եր-
թայ եւ ինչ ուղղութեամբ պէտք է ստնի իր աշխատանքը:

Սոյն ճշգրտութեան հարցն է, որ կրնանք անցնել Հ. Էզոթեանի «Անդրապարձում-
ներ»ուն եւ թանաստեղծական ծրարքին քննարկման:

Գիրքին խորագիրը թելադրական է արդէն եւ կը մտնէ իր ստեղծագործութեան ի-
մացական բնույթը: «Անդրապարձումներ»ը կը վկայեն ոչ թէ փորձառութեան ծնած անմի-
ջական ժայթքումներու մասին, այլ վերադարձի մը՝ գէպի փորձառութեան եւ գրական փոր-
ձին, անոր տարբազարութեան եւ տարբեր կարեւորն վերամիացման: Էզոթեանի աւուած օրի-
նակով, այլեւս փորձառութեան մէջէն եկած ծնած է, որ բանաստեղծական պաշարայն զար-
ձած է եւ հարստացած երեւակայութեան տարբերով կամ ներքին առնչութիւններով, զառ-
նալով նշան, զգայնութիւն եւ կամ աւելի խոր իրականութիւն:

Գործը կը սկսի «Սանտաների պակասով, այսինքն՝ գասական յղացքով արտագրուած
շարքով մը, ուր իւրաքանչիւր տող սակերիչի մը բժանդարութեամբ աշխատացած է, եւ կ'ա-
ւարտի այլ շարքով մը՝ «Յերեկային խօսքեր»ով, ուր ո'չ միայն արձակի ու բերթողութեան
տրտաքին բաժանումները կ'իյնան, այլեւ՝ նախապատկիւնները կը կազմարուծուին ու բա-
ւերը կը վերածուին անջառ գոյութիւններու, դասնարով՝

«Կղզիներ — ջրերից — բարձրացող»:

Յղացքային այս երկու բեւեռներուն մէջ կը տարածուին էզոթեանի ստեղծագործու-
թեան բազմազան գրեւորութեան, գոյցէ աւելի եւս շեշտելով մ'յն ճշմարտութիւնը, թէ
զեղարուեստական երկի մը գոյութեան վայրը, այսինքն՝ անոր իրականութիւնը գրութեան
մէջ կը կայանայ:

Սակայն երբ էզոթեան հնչեակ կը գրէ, գայն գուրս կը հանէ իր աւանդական պարու-
նակէն, քանի բանաստեղծութեան էստորբերը տարբեր արժէքներ ունին իրեն համար: Առ-
նենք, օրինակ, «Սանտաների պակաս»ի չորրորդ կտորը.

Քո անունը եւ քո քաղը առաջին
խտամում են իմ օրերի անտառում,
ամառաբկայ ստուերներ են քափառում
եւ համբշտում են գիւսակցութեան կտուրքին:

Ծառերն արագ բարձրանում են դէպի վեր,
Բայցայնիսով սիրտը մարդու եւ հողի,

(2) Նայն տեղը, էջ 110:

իսկ այժերը որոնում եմ այլ ուզի
ևւ իրենց մէջ յայտնարհրում նոր իրեր:

*Արտագործն մեր բարձրացող ժառերը, օրերու անասող եւ նժան գերբերուպաշտ կամ
արտասովոր պատկերներ ու կայսութիւններ աւանդական հնչեակներու մէջ չէ, որ կը յայտ-
նուին կամ կրնան յայտնուիլ, բայց շատ բնականօրէն կը յայտնուին էդոյցանի աւելի ազատ
ձեւերով գրուած բանաստեղծութիւններուն մէջ, ինչպէս՝*

Մեզ վայրկեանները տանում են իրենց մէջ
եւ գլխատում այնտեղ. մեր այժերը լի են
տիպիմով ու մտնուածով, լուսնի սառը շէմբը
մեզ վրայ է յառած բարդ անկիւններէց,
ծաւերի վրայ մեր մարմինն է ծոզկում,
օդը տանում է մեզ մի վայրից միւսը,
ծանօթ շէմբն արդէն անծանօթ է դառնում
մամի կարուածից...

(«Գիտարդ քամու հետ», էջ 63)

*Փոխարեութիւններու ու սեղ-տեղ գերբերուպաշտ պատկերներու գործածութիւնը եւ
բանաստեղծութեան բնկայման եղանակը, ինչպէս կը տեսնենք, ամբողջովին տարբեր տարածու-
թիւն մը բացած են բանաստեղծին գիմաց, սր ոչլեւ յարաբերարար անիմաստ գործած է
ձեւը, սրովհետեւ բանաստեղծութեան իր մտակցումը հիմնականօրէն փոխուած է...*

*Համեմատութիւնը բացառութեան երկու կարեւուն տարբերութիւնը բացայայտ կը
դարձնէ, փորձատութեան մէկ երեսին եւ նմանութեան միւս կարին միջև. ծանօթ յատկանի-
չէր փորձելով գտնել, ընդգծելու եւ աւելի պարզելու համար աւելով վիճակը, ինչ որ պատ-
կերը կը վերածէ գործիքի կամ գարգի մը: Միւս կողմէ՝ փոխարեութիւնը կը ջնջէ նմա-
նութեան կարեւուն միջև. կրած տարբերութիւնները, կը միաձուլէ զանոնք, անոր անհամար
կարելիութիւններէն նոր գուպորզումներ ստեղծելով: Կատարուածը գիւտ մը չէ, քանի որ
փոխարեութիւններու կը հանդիպինք առասպելներէն ու համերական երգերէն սկսելու Պար-
գապէս անոնց արուած կշիռն ու դերը փոխուած են:*

Այս է էդոյցանի սրգեզրած տարբերութիւններէն մէկը:

*
**

*Քաղաքի հենցապէն ու անօրեայէն բխած փորձատութիւններու ամբողջ հասանք մը
կայ, որ կու գայ լիզուին մէջ ու, նոր առնչութիւններով տարբեր գոյն ու գոյութիւն տա-
նալով՝ կը ձգտի յուերթութեան, որ այս սրբապային անշարժութիւն պիտի նշանակէր: Սա-
կայն միշտ վերադարձ մը կայ անօրեային եւ անխոստփելի անցքը ժամանակի, որ յարտեւ
արժամի մը մէջ կը պահէ կենսական, մտկրնթացութեան եւ սեղատուութեան չըջողիծի մը
մէջ, որոնք օգտիներ ու հանգրուաններ են պարզապէս, զրոյի մարգկային կենսադրութիւնը
կողմու: Անցեալը վերջ է վերջոյ իր անհատականութիւնը կը կազմէ, իսկ անգիտակիցէն
եկած մղումներու հասանք մը կայ, եւ լիզուէն եկող, մշակութային ժառանգութեան, ներ-
քին թախչեմերէն, կայմութեան մէջ դանուող նոր տիպերը մը, որ նոյն պատճառներով միշտ
պիտի ըլլայ ու տարազնութի, սպին մէջ քայքայուող թռչունին նման:*

*Վերսիւնիստ ասոցերը, սրանք նկատի ունին «Անկետների պատկ»ը, կը բնորոշեն էդոյ-
եանի գործը ընդհանրապէս:*

*Ժամանակի անցքը կարեւոր է այստեղ եւ կը գրահարուի զոնազան ձեւերով, հիմ-
նական գիծերէն մէկը կողմերով իր ներքին հարցերուն: Փաստօրէն, մինչև փորձատութեան
եւ զրոգական արարքին միջև սեղի ունեցած անըրապարճ ժամանակ մը կայ, զոր կարելի
չէ անտեսել: Մինչ այդ, փորձատութեան շատ մը տարբեր իրենց մանրամասնութիւնները
կը կորսնցնեն, կը բիրեղանան եւ կը հարստանան ներքին տագնապներու, առնչութիւննե-
րու եւ լիզուական մշակութի ազդեցութիւններէն, իր բառերով՝ երթալով յուերթութեան:
Հակառակ անոր, որ գիւրու գործարարութիւնը այս բոլորը կը վերածէ միշտ ներկայի: Սա-*

կայն այս բոլորով հանդերձ, յունական մշակույթին եկած խորհրդանիշներու հետ՝ կարծէք ժամանակի հարց մը կայ, որ հեղինակին համար կը վերածուի անձնական անդրահանգիստի:

Բայց մեզմն այլևս փրկագին չունի,
կեանքն աւարտում է իր շրջանն անա
քաղնելով հետեւին օրուայ փեսաւրի
իմ ու քո անշարժ ձեռքերի վրայ:

(էջ 33)

Այս մէկը այլևս ո՛չ անցնող չիչողութեան հին ժամն է եւ ոչ ալ ժամանակի մէջ
Թաղոյ ժամանակը («Ինֆուզորիս»), այլ՝ նայն հարցին լրացուցիչ երեսները կը հանդիսանան:

*
**

Որոչ գուզահաններ կան էդոյկանի բանաստեղծութեան եւ սրտակերպաչաներուն մի-
ջեւ. դիտարարար իր եւ կրթա Փատունա, Հիլաա Տուլիթըլ եւ Ալտինիթըն խմբակին միջեւ,
զորս պէտք է նկատել ոչ թէ տղպեցութիւն անոնց գրական ժառանգութեանն, այլ իբրեւ
եղանակ մը՝ փոխարկութիւններու ու սրտակերպերու հանդէպ: Այս գուզահանները կը դրսե-
ւարուն հիմնականօրէն երեք դիժերու մէջ:

Առաջին՝

Որոչ յարգանք մը յունական գրականութեան եւ մշակույթին հանդէպ, որոնք երե-
ւան կու դան յունական գրգարանութեան որոչ կերպարներուն տաթիւ կասարուած անկար-
կութիւններէն (Պաւն, Դեսալուս, Իքարիուս, Տիֆոն, Կայլն):

Երկրորդ՝

Աստիկայական կամ ան-անձնուորուած բանաստեղծութիւն մը կիրարկելու ձգտու-
մը: Վերոյիշեալ բանաստեղծները զայն կը կոչէին «կարծր» բանաստեղծութիւն, օրինակներ
բերելով յունական բանաստեղծութեանն:

Յատկանշականօրէն, Մլաւի Աիլոյեանի յետ մահու հրատարակուած շարքին մասին
խօսելով, էդոյկան իր սերնդակիցին բանաստեղծութիւնները կը նկատէ անանձնաւարուած
պանդիայի օրինակներ(3) (depersonalisation): Հոս, պարզապէս բանաստեղծական փոր-
ձին հանդէպ աստիկայական մօտեցում ունենալու գիտակցութիւն մը կը տեսնենք, որ Աի-
լոյեանէն աւելի իր կողմէ կը բաժնուի: Հարցը ոչ-յուզական բանաստեղծութեան (վերոյիշե-
ալ «կարծր» բանաստեղծութեան) գաղափարին հարկոյթն է, որ իր պարագային իմացա-
կան ու փրկարկայական տարրերով լիցքաւորուած է:

Երրորդ՝

Փոխարկութիւններու ու սրտակերպին արտայայտմիջոցներու լայն կիրարկումը,
որ իր պարագային եւս իբրեւ արտաքին (plastic) երեւոյթ չի դիտուիր, այլ՝ հոգեբանա-
կան ժայթքումներէ կը ծնի: Հարկաւ, այս գծով կայ ամբողջ մշակույթ մը, որ կ'անցնի դե-
բերպաչաներէն՝ հասնելու համար մինչեւ մեր օրերը:

Պատկերները քանի մը ձեւերով տեղ կը գտնեն էդոյկանի բանաստեղծութեան մէջ:
Նախ՝ կան Ֆրիդրիխիան սրտակերպերը, որոնց իմա ներկայութիւնը վերացական մթնոլորտ
մը կը ստեղծէ:

Երկաթի տակ հանգչում են մոգութակաճեր,
գլխատուած ձիեր խրիմչոււմ են օդում,
գերիներ կաշած կեանքի եզերքներից,
զլուխներ՝ կարճ կտրած մոգերով — սեւ, սպիտակ, կարմիր
ձեռքեր մագերի մէջ:

(«Պիլոս», էջ 39)

Այլուր, ամբողջովին գերբերպաչա սրտակերպերու ու մթնոլորտի մը կը հանդիպինք:

Պահարանի մէջ հանգիստ նիքոււմ են
տօնակամ զգեստները,

(3) «Գարուն», 1976, քիւ 11, էջ 80-81:

մտանքի արանձնում սիգարետների կեսմէք
 մարում է կրակի մէջ:
 Ես նրանց մոխիրը նմանեցնում եմ կովերի աչքերին.
 այդ մոխիրները ես լուռ հաւատում եմ
 հողերի վրայ ցանելու համար:

(«Պատկալիս», էջ 29)

*Իսկ «Յիլաւիմգօ» կտորին մէջ կը հանգրգայինք նոյն պատկերի կերպարանափոխու-
 մին, որ իւրաքանչիւր առանի մէջ կը վերաշարժուի, զգայնութիւնը խորացնելով.*

Անպերի միջից ելնում է նա դուրս,
 երկու քեւեր է օդում նկարում,
 նայում է մի պահ, յետոյ չեմնում
 ինչպէս թի մէջ յայտնուող մի լոյս:

Թափառաշրջիկ երկնային, բայց կոյս,
 մի ծաղիկ՝ բացուած էտնու սահմանում,
 նա իր գոյութեան քոնիչքն է պահում
 ծնւած օրային աշխարհի ոգուց:

Ներքեւ է իջնում երկեքից անխօս,
 լնի վրայով ընթանում, ինչպէս
 ջրերի վրայ էայլով Քրիստոս:

Շուրջը մի երգ է ծնւում մահուան պէս,
 նա լուռ բաշում է խորում քեւերի,
 ասլւում հմայքին մեղեդիների:

*Աւելի վերը մէջերում ձերմակ սողերուն տեղ ահուտակ կը գտնենք Հնչեակ մը,
 որուն անակնկալ պատկերները, հողերանական լծակները, երեւակայութեան ազատ ճախ-
 րումը նոյն սղբերէն կու գան՝ հոս միտմուրեկով հիմնական պատկերի մը կամ փոխա-
 բերութեան մը մէջ: Պահուած են պատկերի ֆիզիքական կամ բնական յատկանիշները, սո-
 կայն ներքին տաղանպներու ու հողերանական մղումներու արդեպութեան տակ ստացած են
 տարբեր թելադրականութիւն: Իսկ յանտուեղծութիւնը մնացած է անսնձնուորում, յու-
 դական խաղերէ հեռու, առարկայական, սակայն խօսուին:*

*Յաճախ խօսուած ըլլալով Հենրիի կողմէնի կամ Արտեմ Յարութիւնեանի մեքափո-
 րիք բանաստեղծութեան մասին, կ'անցնինք նման «մանրամասնութիւններու» վրայէն, որոնք
 խորքին մէջ իւրաքանչիւրին առանձնաշարժութիւնները կը կազմեն:*

*Բնականաբար, «Անգլոսաքարձումներ»ուն բոլոր էջերը կրողործումի նոյն բարձրու-
 թեան վրայ չեն դնուիր եւ յաճախ անսնձնականի տեղ կ'ունենանք շորը: Մտկայն տարբեր
 յղացքներու մէջ արտադրելու յանգրգայնութիւնը, աշխարհութիւններու տարբեր գուգորդուծ-
 ներուն ստեղծած անակնկալները եւ բացած զգայնութիւնները անսահմանօրէն կը խանդա-
 վառեն մեզ:*

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հ. ԷՊՈՅԵԱՆ

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԽՕՍՔԵՐ

1

Հինա, ժամերը ետ վերցրու (օ — սառը — տերեւ — քամի),
 քող շարժումները դէպի ետ ընթանան, մարմինը
 վերադառնայ իր նախկին վիճակին, քող մեռները (ինչպէս —
 անապատում — կակտուս) գտնեն առարկան, ցանկութիւնը;

կամքը մտեանն իրենց սկիզբին եւ բասերը (կզգիներ — ջրերից — բարձրացող) մերկանան եւ թող

Քուղդայի չորս ձեռքերը դասնան երկու, դէմքը (լառուս — ջրի վրայ — բացուած) ազատուի մամուռներից, արձանը ցած իջնի պատուանդանից, սէրը (բարոյական — ոգին — սուրբեկանիվ — անունի — մէջ) թող գուրս գայ մտքերի

կազապարից, արեւի հատազայքները ծովի անդունդներից դուրս հանեն բոյսերը, հայերը (յոյս — անյայտ — օդի — վրայ) վերադարձեն ձկներին, հագուստներն իջնեն ներքեւ, եւ վերցրու —

վայրկեան — ըստէ — ժամ — օր — ամիս — տարի — դար — հազարամեակ —

Զկան պոեաներ, բժիշկներ այն աշխարհում (կամ — ստորերկրեայ — կամ — վերերկրեայ) եւ ոչ գլխացաւ, ինժարկտ, ռեւմատիզմ, ինֆուսպանուրիւն, ծնունդ, վերածնունդ, եռանկիւնի, քաղմանկիւնի եւ յետոյ

(եւ — յետոյ — եւ — յետոյ — եւ — յետոյ — եւ — յետոյ — եւ յետոյ — յետոյ — յետոյ):

2

Անա, դու տեսնում ես քէ ինչպէս են գլխատում օրերն ու ամիսները, ինչպէս են փակում պատուհանները մտքի մէջ, ինչպէս է շարժում հոգին փայտէ յենակների վրայ եւ հագում կանաչ տերեւների միջեւ եւ ինչպէս են

անձրեւներն իջնում ներքեւ քեմ տանիքներին գուգանեւ, ինչպէս են բացում վարագոյրները-յիշողութեան դեղնած պատերը մերկացնելով, օ, դու տեսնում ես

տղամարդու աչքերը փողոցով անցնող վառվռուն մի կնոջ գլխով, խանութների բացուող ու անվերջ փակուող դռները, ցուցանակները, ցանկապատերը եւ բակում խաղացող երեխաներին (որոնց խոստանում են նոր խաղալիքներ, համբոյրներ, չարչարանիքներ տարրեր սեռակներին) եւ այդ ամէնը դու համարում ես

չափազանց կատարեալ (քանի դեռ միտքը չի գտել իր ստուերը) այնքան կատարեալ, որ լուրջիւնը հրաժարում է իրեն յատկացուած մի քանի բառերը արտասանելուց, եւ հոգու յենակներն աւելի ծանր են դառնում, եւ երանի քեզ,

որ չես նանաչում այն կամուրջը, որի վրայից ներքեւ են իջնում ու չեն վերադառնում, եւ փարթամ ու հոխ ծաղկեպսակները (դա վաճառում են փողոցի անկիւնում), եւ այն կենդանիներին, որոնց հակառակօրէր որոշուած է արդէն իրենց մօր արգանդում,

եւ նրանց, որոնց դու գիտես անձամբ եւ որոնք կախում են երկնքի մէջտեղում, նրա չորս կողմերի խաչմերուկների վրայ ընդդէմ քամիների, որ մօտենում են լքելով հեռում հորիզոնի գիծը — գիծը միացման, բաժանման կամ մահուամբ (դու տեսնում ես դա, բայց նորից բնում ես ու արթնանում, կամ չես բնում եւ չես արթնանում, եւ կամ արթնանում ես ու չես բնում) — այդպէս:

3

Եւ այս պահերին, երբ արեւի էլիպսը իր մէջ է առնում երկրային գծերը հարթեցնելով նրանց եւ ուզիլ կախելով օդի մէջ, դու եւ արձաններն եւ կերտում եւ շէնքերի վրայ նոր ստուերներ են ընկնում եւ թեթեւ քամին շարժում է պատուհանների փեղկերը, եւ երկաթուղիները սպասում են անցնող գնացքներին հողի վրայ գամուած,

եւ նրանք, հակառակօրէր դէմքին, ինչպէս սարդաստայն, սպասում են խոտուցուած աշխարհներին, առարկաներին, պատկերներին եւ այլ ցանկութիւններին, որ մի օր պիտի քացուեն ժամանակների գծից այն կողմ, երբ արդէն

այս քափառող տերեւները կը մնան անպատասխան եւ ծաղիկները երկաթուղիների վրայ կը կիսուեն ինչպէս օրուայ ցօղունը գիշերուայ դանակով —

Վերցրու այս ժապաւէնների արտապատկերները մահուամբ հայելու մէջ, որ իբրեւ երկինք կախուած է բոլոր անշարժ ու շարժուող իրերի վրայ՝ հաշուելով նրանց շնչառութեան ռիթմը եւ փայլերը,

եւ ցոյց տուր այն աշխարհները, որոնց կողերը փուռ են մեր սուր անկիւններին եւ արիւննուում (կամ ընդհակառակը), եւ կանգնեցրու հոսքը մետամորֆոզների, ուր հոգին քափառում է իրերի շուրջը, գիշերների եւ ցերեկների սահմանագծին, դիմակների անշարժ մակերեսների տակ, ցանկութիւնների դանակների մէջ, անձրեւների փշրուող ուռերի վրայ:

4

Եւ անա դանգազ հոտում եմ գգացումները, մաքերը,
տեսիլքները եւ մտնում փողոց, ձգտում իրերին՝ վախենալով
նրանց ձեւերի խստութիւնից, եւ կամքը, որ հսկում է այստեղ,
բացում է իր բոլոր պատուհանները եւ ներս եմ ստեղծում
յոյսի եւ այրմութեան մատագայքները (փարթամ —
ցողունները — ցանկապատից — այն կողմ — սնազ —
արեւածաղիկներին), եւ բարկացած դէմքը մի

անցորդի, որին ձգտում է մուրացկանի ձեւը (խնդրում —
եմ — տասը — կոպեկ), եւ կէսօրը կրկնում է նրանց
շարժումների տարօրինակ սիթմը, եւ այս ամէնի վրայ
դու ձգտում ես իշխել եռ բառերի ուժով, որոնց

մակերեսը դառնում է քա սեփական սելէֆն ու ձեւը.
դու հաւատում ես, որ եռ աչքերը լսում են քաղաքի
շէնքերին քառելով՝ ինչպէս երկնային ստուերներ, բախցնելով
մահն ու ողբերգութիւնը անհոգ ժպիտների՝ կանաչ
տերեւներով (խնդրում — եմ — տասը — կոպեկ) :

Կէսօրը ես է քաշում բացելով նահանջող իրերի
նախապարիք, եւ դու, որ նուաճում ես տարածութիւնները
խարխլուած ժամերի, մեզ բաժանում ես եռ սպիտակ
զգեստները, որոնք չեն համբնկնում մեր մարմնի չափերին,
եւ ուղարկում ես եռ աղանձիներին մեր մէջ բնակուելու,
եւ հասունացնում խնձորը ծառի վրայ —

Ֆանի որ այն ամէնն ինչ ասում է — միշտ է միայն
այնտեղ, ուր ասում է եւ այն ամէնը, ինչ արում է —
միշտ է միայն այնտեղ, ուր արում է, եւ ինչ կատարուի —
միշտ կը լինի միայն այնտեղ, ուր դա կը կատարուի,
որովհետեւ այն, ինչ աւել է, կործանում է մեզ,
որովհետեւ, այն, ինչ պակաս է, կործանում է մեզ,
որովհետեւ մե՛նք ընդունում ենք այնքանը, որքան կարող ենք
եւ տալիս ենք այնքանը, որքան կարող ենք,
եւ թող թեւերը թափահարուեն այնքան, որքան կարող են,
եւ թող աչքերը նկատեն միայն այն, ինչը կարող են,

որովհետեւ այն, ինչ աւել է, կը կործանի մեզ,
որովհետեւ այն, ինչ պակաս է, կը կործանի մեզ,
Ֆանի որ մենք չունենք պատկերն անվերջութեան
եւ մենք չենք կարող ապրել առանց ձեւի,
որի գծերը կառուցում են մեզ իրենց ցանկութեամբ
հսկայ աշխարհներում,
ուր տալիս ենք այնքանը, որքան կարող ենք,
եւ ընդունում այնքանը, որքան կարող ենք :

5

Իմ կեանքի ուղին սպրում չէ իրերի մէջ
 յայտնի ձեւերով: Ժամանակի պատից
 կախում է իմ դէմքն՝ ինչպէս մի նկար
 մանկական ձեռքով արարում:
 Իմ ձեռքերն արտասում են՝ ինչպէս ծաղիկ:
 Իմ անձրեւներն իջնում են
 Բաղաճի անձանօք՝ սկուարեղի վրայ:

Մովերից եւ Լուրից ելնում են աստուածներ
 եւ ապրում աստղերի աշխարհում:
 Քայլն ինձանից է կեր խնդրում
 լափելով իմ մարմինն իր մէջ:
 Ես նրան համարում եմ անչափ գեղեցիկ,
 չափազանց բարի, նաեւ իմաստուն:
 Երկնից նայում են Երեխայի աչքեր,
 որոնք փնտում են դէմքերը Հօր եւ Մօր
 ներքեւում ապրող — եւ նրանց միջից
 նոր աստղեր են ընկնում եւ այնտեղ մի նոր
 աստուած է բնակում
 եւ ադամանդէ համաստեղութիւններն
 իրենց շրջանների պտոյտն են կատարում:

Երկար է նախապարիւր սենեակից պատշգամբ,
 պատշգամբից սենեակ — այնտեղ կիսում են
 համաստեղութիւններ, աշխարհներ, Բաղաճներ,
 շէմքեր ու գերեզմաններ,
 աւազէ տներ
 եւ նրանց միջով անցնող Բամբներ:
 Քայլերն արում են, Լուրից եւ Պատնում,
 գնում ու գալիս, կրկնում ինչպէս
 կարուսէլն աստղային:

Եւ երկնից նայող աչքերը Երեխայի
 տեսնում են օդի մէջ բարձրացող ու իջնող
 հօր ու ողբերգական թաթը առիւծի:
 Ով դրեց նրանց երկնի կամարի տակ,
 ով անշարժացրեց օդում բարձրացող
 թաթը առիւծի — նրա նիչը դէպի
 երկինք ուղարկելով: Եւ գայլը Լուրից
 հոսում է Բաղաճ գետի վրայով
 ասանց թիերի, գնում դառնալու
 մի նոր երկնային համաստեղութիւն
 իր աշխարհներում յարեժ թափառող:

6

Ես կը նստեմ ամենացածր մի ստոխնանի վրայ,
 կը հաշուեմ երկնքի բացուածքները կապոյտ,
 կը դիտեմ արեւի շրջանակը կարմիր —
 պատկերը Հօր եւ Որդու,
 կը կանգնեմ կենտրոնում անվերջ փոքրացող
 եւ բնդարձակուող գալակտիկաների — երկու ձեռքերս
 սարածելով նրանց սկզբին ու վերջին:

Այս խօսքերը դեռ երկար կը հնչեն օդի մէջ,
 մինչեւ կը կտրուի բէլը նրանց խորքում,
 այն, որ անցնում է վերջապէս
 օդի անտեսանելի շերտերի միջով,
 դառնում ծածկագիր երկնքում,
 կարկաստում պատուած շրթերը մի մարմնի:

Բայց դու կը լսես ինձ — եթէ ապրում ես բառերի մէջ,
 բայց դու կը լսես ինձ — եթէ ապրում ես բառերի մէջ:

7

Երկինքը սգոգում է աստերի եւ լուսնի կասկածներով,
 քաղաքը դատարկում է գիշերուայ արեաներից,
 սիրոյ արձաններն են թաղում մշուշներում
 եւ աստուածները յանկարծ շտապով
 իրենց հագուստներն են փնտռում օդի մէջ,
 ծառերի սզիկները արագացնում են ծնունդը տերիւների,
 փողոցը վազում է քնի միջանցքներով
 ձեռքերին պահած մի քանի դեղաբոյս,
 մեքենան կիսում է նրան եւ գնում դէպի անկում:
 Սա տեղափոխութիւնն է իրերի, կեանքի եւ անունների,
 շարժումն է — անկախ ժամանակից,
 գիշերուայ մօտեցումը դէմքին,
 իտասում — արգանդում պահուած,
 անցնում — մահից այն կողմ:

Մենք գալիս ենք վերադարձի քանդուած կամուրջների վրայով,
 հիւսնդուքիւնների, քայքայումների, լոյսի եւ խաւարի
 նառագայքները մեր վրայ քաշած,
 դաժան եւ սառը խօսքերի ցանցերի միջով,
 խախտելով պատուիրանները հին,

շօշափելով մարմնի տարածութիւններն անտես,
ամէն բան — ծնունդ է եւ մահ,
ամէն բան — յայտնութիւնն է գինդաւրի,
ամէն բան — բազում ուկիւսնու:

Ռեստորանների փայլուն ու գոյնգոյն ապակիներից այն կողմ
մատուցողները նման են դաշտային ծաղիկների
ճամուց շարժուող դեղին բերքիկներով —
ով է ապրում այս ոգորկ ապակիների մէջ,
ով է աստուածներից ներքեւ ուղարկում
այսօրն ինքնօրիւն — բոցավառելով
մեր կեանքի խարոյկը մեր մասնի միջեւ,
իբրեւ մի մատանի, որ տանում է մեզ
դէպի հարսանիք — բախտի օղակներով,
եւ մեր աչքերի սքանչելի վրայ
աստերներն են իջնում երեք աստուածների:

Աշխարհի ընդարձակ եւ փռուկուսի հարթավայրերում
կանգնում ենք ցեղեկների եւ գիշերների մէջ,
խառնելով դրանք իրար եւ նորից բաժանելով,
փնտռելով մի պատկեր, որ կախուած է մեր դէմ,
նաեւ մի անուն, որի առարկան
մեր մէջ է գտնում, մեր երակներում —

եւ գիշերուայ արժաններից գառարկուած ֆաղափում
ընկնում է մի երագ — բայց որի ոգին
արդէն չի կարելի նկարագրել:

ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԵԱՆ

Հղճարներ

ՅԱՆԳԱԲԱՆԱԿԱՆ ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Հենրիկ Էլզոյեանի «Անգրագարծումներ»ը կը բացուի «Սոնետների պատկ» անուն շարքով ու կը գոցուի «Յերեկային խօսքեր» անուն երկրորդ երկարաչափն է կտորով:

Օրին, «Քագին» (1975) մէջ կարճ նշմարով մը յանձնած էինք ստաջինք մեր ընթերցողներուն ուշադրութեան, իսկ կանխող էջերուն, երիտասարդ բանաստեղծին ստաջին հատորին նուիրուած գրախօսականին ասընթեր արտադրեցինք երկրորդը, որ ուշադրաւ է իր կարգին եւ կրնայ յաւելեալ դազափար մը ստալ բանաստեղծութեան սահմանները բնորոշակելու ճիշդին մտային, սրուն կուսեցեայներէն է Հենրիկ Էլզոյեան եւ կը դանուի ընարեալներու ցանկին գլուխը:

«Սոնետների պատկ»ը, որ իր խտացուցած խորհուրդով, մարդկային կացութեան յուզիչ երեսներուն զարնուերու տենդաճար էլեւէջներով, պատկերներուն թարմութեամբ ու լեզուին կարիճութեամբ վերջին տասնամեակին ձեռք բերուած բանաստեղծական մեր ստալոյ նուաճումներէն է եւ կը կարծուէր, թէ զրական յարջ խօսակցութիւններու ստիթ պիտի դասնայ, ընդհանրապէս բախեցաւ լուսութեան եւ երբեմն միայն արժանացաւ հարեւանցի յիշատակութեան, եւ այն ալ՝ քրթմնջելու համար:

Այդ քրթմնջումներուն ամենացայտուն օրինակը արուեցաւ Հայաստանի դրողներու 7րդ համագումարի պաշտօնական բեմէն, Վահագն Գուլիանի բերնով, իր պաշտօնական ճառին հետեւեալ հատուածին մէջ.

«Այս անցած տարիների ընթացքում մեր երիտասարդ բանաստեղծները համարեա՞ ոչինչ չարիմ նաեւ բանաստեղծական տեխնիկայի, այսպէս ասած, արտեստի արհեստին տիրապետելու ուղղութեամբ: Գրա ապացոյցներից մէկը Հենրիկ Էլզոյեանի «Սոնետների պատկ» շարքն է: Մի կողմ թողնելով անորի բանաստեղծութիւնը, Էլզոյեանը յանկարծ պոեզիայի ամենադասական ձեւերից մէկը բնութեց: Խրախուսելի բնորութիւն, գովելի ճրգտում... Ես չեմ խօսելու այդ շարքի էութեան մասին ընդհանրապէս, դա շատ ժամանակ կը խլի, կ'ասեմ միայն, որ այս շարքն ունի ե՛ւ իր յայտերը, ե՛ւ իր ստուերները, որոնք, ի դէպ, աստեղ շատ են եւ աստեղ խիտ: Ես կ'ուզեի մի երկու խօսք ասել այդ շարքի տեխնիկական կատարման մասին, որն, րոտ իս, շատ է թոյլ, անօգնական: Վերցնեմք թէկուզ տեխնիկայի հարցերից ամենամասնաւորներից մէկը՝ յանգաւորումը, որը թերեւս միակն է, որ տեխնիկական խոտանր սպացուցելու մաթեմատիկական ճշդութեան հնարաւորութիւն է տալիս: Էլզոյեանը մեծ մասամբ գրում է այսպիսի յանգերով. «շէնքերիմ-պատերիմ», «գգտում-մերկացում», «երկնքում-գծերում», «ժամեր-նշաններ», «կը բուայ-կ'երեւայ», «դաշտերի-ուշերի», «մէջ-մտակ», «ինչպէս-պէս»... Տերեանից ու Չարեցից յետոյ նման յանգերով գրելը անուագն անօք է...»:

Օրինակները եւ անոր հուստարիմ վարժապետները կ'ըսեն, որ մասունք բանիներէն ոչ մէկը կրնայ իր նմանին հետ յանդ կողմէլ եւ բանաստեղծները, մասնաւոր ճիշդերը յրջօրէն հետեւած են կանոնին:

Տէրեան ու Չարեցի եւս մեծ յարգ ընծայած են յանդի տուեալին,

բայց երբեք այնքան ուղղափառ չեն եղած, որ նորեքը ամենայն ունայտ է: Կարելի է նայնիսկ երկու բանաստեղծներէն մասնանշել այնպիսի օրինակներ, որոնց նմանակներուն համար խիստ կշտամբանքներու ենթարկուած է Հենրիկ Էդոյեան:

Վ. ՏԵՐԵԱՆԷՆ

- Շնչել-տանջել («Էստոնական երգ»)
- Մարում-վառում («Խնձ քաղէք»)
- Իջում-ննջում («Խնձ քաղէք»)
- Կր փոես-կը փոես («Երկվնսմամբ»)
- Փանեակ-ժամանակ («14 տող»)
- Կրծքիս-հոգիս («Խաղաղ գիշերով»)
- Թախտախ-բաղձախ («Աշուն»)
- Տանջանք-անըջանք («Կարուսել»)

Ե. ՉԱՐԵՆՅԷՆ

- Հրճուանքով-կեանքով («Ով կը կաճիկայի»)
- Լճեր-աչեր («Հայրեմիքում»)
- Կոռջ-քոռջ («Պահտ»)
- Լուկ-դրել («Հեռացող խօսքեր»)
- Սնծայրածիր-անծիր («Ամբոխները»)
- Գնաց-մնաց («Նորք»)
- Պէս-սյուպէս («Տարի-Կարան առասպել»)
- Կեանքի-աշխատանքի («Գովք խաղողի»)

Հենրիկ Էդոյեանի յանդարանական ութ մեղքերուն դիմաց Տէրեանէն ու Չարենյէն մենք թուեցինք նոյնօրինակ ութական... առաջինութիւններ միայն, եւ անշուշտ արագօրէն, որովհետեւ այդ չէ պաւր, այլ ա՛յն է պաւր, որ բանաստեղծ Վահագն Դաւթեան շատ մանրախնդիր դանուած է «Սոնետների պառկ»ին առջև, երբ կրնար, եւ սպասելէ էր իրմէ, եւ օրինական էր, որ ըլլար աւելի արդար երկու համապատասխաններուն միջեւ ինկած ժամանակին հայրենի երիտասարդներուն ստեղծած բանաստեղծական այդ ամէնէն աչքառու նուաճումին հանդէպ:

Մենք երբեք չենք արհամարհեր յանդր, չափը, աւանդական միւս կարգապահութիւնները, բայց նաեւ դժուար կ'ըմբռնենք մարդոց յանգարանական ու չափաբերական ծայրայեղ պահանջկոտութիւնները՝ յանդի ու չափի ստիպողութիւնը մոռցնել առողջ երեւոյթներու դիմաց, ինչպէս է բընոյթը Էդոյեանի «Սոնետների պառկ»ին, որ նոր մարդուն անձկայի, կարօտայի, հետեւարար եւ՝ կենսայի՛ ներաշխարհին բաբախուն ու փայլուն գըրսեւորումներէն մէկը կը հանդիսանայ:

Վահագն Դաւթեան յիշեալ ճառին մէջ խնդրոյ առարկայ դարձուցած է նաեւ Հենրիկ Էդոյեանի այն ահասթիւնը, որ կը պաշտպանէ մարդուն ենթադրատեսակցութեան վրայ սոցիալական ժամանակակից բանաստեղծին կոչումը: Արհամարհական թանով մը պարճեայ, ա՛յն աստիճան, որ չէ վիջանած անդամ տալ երիտասարդ բանաստեղծին անունը: Առայժմ կ'արձանագրենք վերաբերումին փոստը ու կ'անդինք:

Այս թերթին յաջորդ թիւերէն մէկուն մէջ ըստ պիտի տեսնէ զրականութեան էութեան ու կցորդ խնդիրներու մասին բնդարձակ փորձ մը, ուր ի միջի այլոց խօսք պիտի ըլլայ նաեւ Հենրիկ Էդոյեանի տեսութեան եւ անոր առաջացուցած հակապոետութիւններուն մասին:

Ո. ԴԱԻՈՅԵԱՆԻ «ՄԻԳԱՍԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ»...

Բանաստեղծ Վահագն Գալսեան համազումարեան իր նոյն ճառին մէջ անդրադարձած է նաեւ Ռազմիկ Գուռլեանի բանաստեղծական գերքին եւ առայդ արձանագրած արգար ու խոնգափառ պահապանութեանց աստիճանը՝ յայտնած է շարք մը դժգոհութիւններ, իր բառերով՝

«Ես բարձր եմ գնահատում այն, ինչ մինչեւ օրս ստեղծել է Դաւայեանը, շատ եմ ակնկալիքներս նրանից, բայց ունեմ նաեւ դժգոհութիւններ: Ինձ երբեմն նրա տողերը, առանձին պատկերները, նշանակալի ամբողջական բանաստեղծութիւններ լու չեքեւակայուած լուսանկարներ եմ յիշեցնում: Զգում եմ, որ նրանց մէջ կայ ինչ-որ գեղեցիկ, քախտալի ու ազնիւ բան, բայց ի՞նչ, չեմ կարողանում տեսնել ու պատկերացնել: Իսկ եթէ այլ ձեւով միտքս բացատրեմ, պիտի ասեմ, որ երբեմն նրա բանաստեղծութիւնները ինձ յիշեցնում են այն միգամածութիւնները, որոնք աստղ դառնալու փառապարհիմն են, բայց դեռ այնքան չեն խոստցել, որ տեսնեմ նրանց լոյսը»:

Վահագն Գալսեան, դժբախտաբար, Գուռլեանի միգամածութիւններէն նմոյշ մը չէ տուած, որտեղիկ նաեւ ընթերցողին խմանալի բլբլար, թէ երիտասարդ բանաստեղծը մ'եր անհատկնայի ձգտած է իր պատկերները եւ ի՞նչ է բանաստեղծ-բնագոյտին պատկերացնել չկրցածը:

Հասկնալիութիւնը արժանիքներէն մէկն է հարկաւ բանաստեղծութեան, բայց բացարձակ պայմանը չէ անոր: Արուեստը ի վերջոյ թուարանութիւն չէ եւ չենք կրնար անտարբեր մնալ տարտամ զգոյնութիւններ բրննած ու տարտամ խոսիքներ փոխանցելու ուժով կամ հմայողով օժտուած գործերուն գիմաց:

Իր «Խուարի տաղեր» շարքին իններորդին մէջ՝ Վահան Թէքէեան երայր մը մասին կը խօսի, եւ

Երազն անուշ, բայց անորոշ է այնքան,
Այնքան մաքուր ու գեղեցիկ ու փափուկ,
Որ կը վախճան դալի իրեն, եւ ծածուկ
Մէկ խորշին մէջ սրտիս պանել կ'ուզեմ գայն:

Նման կոպուլթիւններու գիմաց կարելի չէ բանաստեղծէն պահանջել, որ անպայման տայ իր երազին անուշը եւ «անորոշ» բռնեքու մասին չխօսի մեղի, քանի որ տուեալ բանաստեղծութեան մէջ անորոշութիւնը ի՛նքն է թեւաբանական աղբ:

Արուեստի դարձ մը նաեւ այս անկիւնէն գիտելու սկզբունքին ուժ տրուող փորձառութիւն մը արձանագրուած է նոյնպէս Մամուէլ Պեքէթի անուստ: Այն հարցումին, թէ իր հոշակաւոր թատերախաղին մէջ սր՞ու կ'աղնարկուի կամ ի՞նչ կը հասկցուի «Կոսո» բացատրութեամբ, Պեքէթ կը պատասխանէ.

— Եթէ պատասխանը գիտնայի, յայտնած պիտի ըլլայի գայն խաղին մէջ:

Կան այս բաները, անորոշ երայր, անանուն սպասումը, տարտամ խոսիքները՝ կա՛ն, ու անհատկնայիութեան թուարանական պատճառներով կարելի չէ մերժել անոնց գոյութեան իրաւունքը:

Մտնաւոր՝ որ արուեստին բացարձակ պայմանը հասկնալիութիւնը չէ, ձգողականութիւնն է: Թէքէեանի անորոշ երայր նորէն, Պեքէթի անուն չունեցող սպասումին թախանքը եւ Գուռլեանի միգամածութիւնները, որոնց մէջ «զգում եմ, որ կայ ինչ-որ գեղեցիկ, քախտալի ու ազնիւ բան»:

ՏՈՎՈՍԱՅԻՆ ՀԱՅԵՐ...

«Բագին»ի հանխոզ էջերուն մէջ ընթերցողին ներկայացուցինք Արթօ Տէր Յարութիւնեանի հետ ունեցած Վեհանայ Թեքեանի գրոյցը:

Ինչպէս ստաջին ակնարկով պիտի նկատուի, աւարկելի կէտերը շատ են հան: Երջանցելով սակայն արուեստի բնագաւառին մերտերոց տեսութիւններու մասին մեր մօտ ու մաքին մէջ եղած հիմնովին հակադիր հիմնաւորումները, «Բագին»ի ներկայ թիւը դոցելէ ստաջ, կ'ուզէինք քանի մը սոզ բան ըսել առնուազն սիրուածազը սահմանող սակոսային բնդհանրացումներու մասին, իրբև յրացուցիչ խօսք՝ գրուցալարին փորձած հակադրեցութեան. «Հայուրթիւն ունեցալք ինծի համար կատարակներու վերածուց բան մը չէ, որովհետեւ յստակ չարիանիշ մը չունիմ եւ չեմ կրնար հաւատալ, որ միայն Հայաստանի մէջ ապրող հայն է «հարիւր տոկոսանոցը»: Եւայլն:

Արթօ Տէր Յարութիւնեան պատմած է իր կենսագրականը, որ հայկականութեան առումով սնուցիչ չէ շատ ու փայլուն չէ բնաւ: Ատրկա հագարաւոր հայ երիտասարդներու ճակատագիրն է, որուն համար, այսինքն՝ ճշմարիտ սնուցիչներու պոկտսին համար, կարելի է մեղադրել վրեժը:

Նման կացութիւններէ անցած ու մէ'ջը պոնուոյ երիտասարդները, սակայն, նոյն պատճառով՝ իրուունք չունին սրիչներու հաշւոյն տակոսային բնդհանրացումներ ընել եւ մ'նգամ Վահան Թէքեանը տակոսային հայ համարոց ծայրայեղութիւններու ցանցիլ:

Զրուցողին մաքին նոր չէ տակոսային այս պերճանքին գիւտը: «Բագին»ի էջերուն տարգրուած գրոյցէն վեց տիւս առաջ, «Ձարքօմք» օրաթերթի 2 Մարտ թիւին մէջ, ան դրեթէ նոյնութեամբ կը կրկնէր հոս ըտուածը, բնդգծելով հայտատանցի հայերէ կողմուած սա «հակադրութիւն»ը, թէ՛

«Իսկական հայերը, անաւսիկ, մէկ-երկու-երեք նստեր են մեզի հետ»: Արթուն ցոյց կու տայ սոքք. փրոփ. Ծատուր Աղայեանը եւ իր բնկերակիցները, որոնք գեղեցիկ գուգալիպուրթեամբ մը Լոնտոն կը գտնուէին նոյն օրերուն»:

Հայրենարնակ մարդը անպայման հարիւր առ հարիւր հայ համարելու այս անվերապահ շալլութիւնը, ինչպէս նաեւ հայրենագուրի տոնջահարր պայմանականօրէն տակոսային դեղչի ենթարկելու միտումները առարկութեան չեն կրնար դիմանալ, թէեւ «Ձարքօմք»ի մէջ տարուած ըսողատութիւնը, իրարու հետ ըսողատուող անձերը նկատի առած՝ այնքան վրդովեցուցիչ չէ: Բիչ մը տարօրինակ է հոս եղածը, թէ՛ «Ամէն մարդ տակոսով հայ է, եւ միայն այդ տակոսին չարին է, որ աւելի հայկական կ'իյնէ: Եթէ Պարոյր Սեւակ հարիւր առ հարիւր հայուրթիւն կը գրէր, Վահան Թէքեան կը գրէր ուրքուն առ հարիւր հայուրթիւն»:

Բայց վերաւորական չէ՞ արդեօք տակոսային այս անտեսութիւնը թէ՛ մէկ եւ թէ՛ միւս բանատեղծին յիշատակին, որոնց հայկականութեան յատկանիշը ալլազմութիւնն է եւ ոչ թէ չարիանն առաւելութիւնը:

Կ'ըսուի տակաւին, թէ՛

«Իմ կարծիքով՝ այն հայը, որ Հայաստանէն դուրս կ'ապրի՝ արդէն հայ չէ, մեծ տառով հայ չէ»:

Ի դէմս Հայաստանի՝ յայտնապէս նկատի առնուած է մեր հայրենիքին արեւելեան կողմը եւ անոր այսօրուան պատկերը, եւ ընդունուած այդ

«Հայաստանէն» դուրս ապրող հայր՝ «արդէն հայ չէ», իբր այդ կիսկատար բան մըն է, ու աւելի՛ դարձանայի գիտութիւն, եղած է այդպէ՛ս հինէն ի վեր, թրքական ազդեցութիւններով խաթարուած հութիւն մը, միշտ դրուցողին համաձայն, անոր բռտերով՝

«Իսկ մեկէ, որ հազար տարի Հայաստանէն դուրս ապրած եկէ, քուր-
 քուր մէջ ապրած եկէ. Թրքահայաստան կ'ըսեմք, բայց Թուրքիա էր, իրա-
 կանութիւնը այդ է. մեր հայրերը թրքերէն կը խօսէին, կերպով մը քրիս-
 տոնեայ քուրքեր դարձեր էին»:


Շարունակութիւնը սարքերակային է, հետեւաբար կանդ ասնենք հոս:

Գոյութիւն ունի բառերը դուշօրէն, իրենց սրտամական ու հոգեբա-
 նական ճշմարտութիւններով դարձածելու սրուեստ մը, որ, գժրախտաբար,
 անսեսուած է վերի յայտարարութեան պարագային, լուսայարդ ու արնա-
 չազարն ժառանգութիւններու վրայ կայմուած հայ մարդուն արժանապատ-
 ւութիւնը վերաւորելու աստիճան:

Արքան դիտենք պատմութենէն, Շոպին-Գարահիսարը, Ալինը, Մովսայ
 Աշխարհը, Վանը, Սասունը, Մշոյ Դաշտը, Երզնկան ու Կարինը իր մէջ առ-
 նող տարածութեան կը տրուէր Թրքահայաստան պայմանական սնունդ, որ
 մանաւանդ մեր հայրերուն օրօք ու հայ մարդուն մտածումին մէջ երբեք
 թուրքիա չէ եղած, ու յիշատակուած այդ վայրերուն բնիկ տարրերը, հա-
 կառակ թրքական արիւնստ գուլամներուն՝ «քրիստոնեայ թուրքեր» չեն դար-
 ձած բնու: Եթէ Թրքահայաստանը «Թուրքիա» եղած ըլլար («Իրականու-
 քիւնը այդ է») եւ մեր հայրերը դարձած ըլլային «քրիստոնեայ թուրքեր»,
 աշխարհի այդ հոգումտար եւ հոն բնակող գոնգուածները կրնայի՞ն այն ու-
 տեն ճնաւիդ տալ Սրուանձեանիցներու, Խրիմեաններու, Հրանդներու, Թըլ-
 կատիցիցիներու, Զարգարեաններու, Մեծարեցիցիներու, Վարուժաններու ու
 Միամանթոններու, եւ կ'ունենայի՞նք միթէ մեր նորագոյն պատմութիւնը ա-
 րութեան դարձերով լեցնող միւս մեծագործները, — Սերոբ-Աղբերը, Հրայր
 Դժոխքը, Գէորգ Զառուչը, Սպարանայ Մակարը, Գալէն, Անդրանիկ փաշան,
 Մուրաաները, անուանի ու անանուն միւսները, հազար հազարներ, սրտնց
 ծննդափայլերը «Թուրքիա» համարելով՝ ամէնէն առաջ ճշմարտութեան դա-
 ւած կ'ըլլանք, ու ծնողները «քրիստոնեայ թուրքեր» կոչելով՝ անուուոյն կը
 վերաւորենք բնակարարութեան դժնդակ պայմաններուն մէջ իր ինքնութիւնը
 պահած մեր ժողովուրդին սրբազնասուրբ ողին:

Մենք չէ, որ վեց հարիւր տարի առաջ կատարուած թրքական ներխուժ-
 ման օրէն սկսեալ Թրքահայաստանը «Թուրքիա» պիտի համարէինք, երբ
 թուրքը, նոյնիսկ այսօր, զինու զորութեամբ մեզ կոտորակելէ ու տարտղնե-
 լէ վաթսուն տարի ետք, դեռ չէ հասած պատմական Հայաստանի այդ տա-
 րածութիւնը «Թուրքիա» դաւանելու հոգեբանական դատահութեան:

Ըլլար մէկը տակաւին, ու ասանց շօշափելի հայրենիքին անփոխարինե-
 լիութիւնը խնդրոյ առարկայ դարձնելու սրբապիղծ մտածումին՝ թուէր միւս
 փաստերը, հայրենիքին զրացողութեամբ շնչած մարդոց դարձերը, ըսէր՝ որ
 հայրենիքը բնաւ չտեսած մարդիկ լեզու մը կերտեցին, մշակոյթ մը ձեւա-
 կերպեցին, ա՛յդ մը ստեղծեցին, հայրենիքին համար հոգեպէս ճենճերեցան
 ու Ֆիլիբապէս ողջակիզուեցան հայրենագուրի հայրենափառներ, վարդա-
 պետներ, հերոսներ, բանաստեղծներ, գրողէտներ, յաւերժափառ մէկ-մէկ
 պարձանք յախտենական հայրենիքին, մեր դաւաճան պայմաններով ու գա-
 ւաճանութեամբ երբեք չմթալնող լուսաւորչեան աստղեր, ըսէր՝ բայց ա-
 տիկա պիտի նշանակէր լրջացնել հարց մը, որ դոյութեան իրաւունք չունի...



ՌԱՅԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆԻ ՄԱՀԸ

Երևանի «Գրական քերք»ի 11 Օգոստոս թվականից համարին մէջ սրտի խոր կոկիճով կորցացինք տաղանդաւոր գրողէա Ռոֆուէլ Արամեանի մահը:

Հայ մտրդուն ազգային ու մարդկային էութիւնը ցոյտեցնելու հետամուտ արձակագիր՝ Արամեան կեանքին կը հեռանայ իր տաղանդին լիութեանը մէջ, 57 տարեկան հասակին, հայ գրականութեան կրտսերով չորս հատոր եւ հաստորներէ զույս մնացած գրական եւ իմացական բազմաթիւ գրութիւններ, բոլորն ալ բարեխառն նաւրը զգայնութիւններով ու դիտողութիւններով:

Մնած էր 29 նոյեմբեր 1921ին, էջմիածին: Գեա համալսարանի ուսանող՝ 1941ին կը մտնէ գինուորական ծառայութեան մէջ եւ կը մասնակցի նացի Գերմանիոյ դէմ մղուած պատերազմին: Պատերազմէն ետք կը նուիրուի գրականութեան ու կը վարէ մշակութային այլեւայլ պաշտօններ, ազնիւ մարդու եւ նախանձախնովի մտաւորակունի իր բոլոր ուժերը արամադրելով հայրենիքին ու հայ գրականութեան վերելքին:

Յաջորդով՝ «Բագին»ի ընթերցողներուն պիտի ներկայացնենք իրմէ պատմուածք մը եւ անսական երկու կարճ գրութիւններ:



ՓԱՐԱՃԱՆՈՎ ՄԵՌՄԾ ՁԷ

Խորհրդային շարժապատկերի տրուեցողականներուն ամէնէն զարուակներէն Սերժ Փարաճանովի ազատ արձակման լուրը գեա կը շարունակէ նիւթ հայթայթել արեւմտեան մամուլին: Իբրեւ սրբանկարներու մաքրանկէղ եւ միտեւական՝ Ուրբանիոյ ճամբարներէն մէկուն մէջ թիւապարտութեան դատաւարտուած տրուեցողականին լըութիւնը հաշուի ստեղծով, ոմանք նոյնիսկ զայն մեռած կը համարէին: Անոր կապուած հին ու նոր անցուղարձերը նկատի առած՝ Փրանսական «Լը Փուան» շարաթաթիթը, իր Ապրիլ 23ի համարին մէջ հոս վերտապուած լուսանկարչական պատճէնին կողքին կը գրէր:

Այս նկարը, սր անցուղ ամիս անուեցաւ Մտեւալ բնակող բարեկամի մը կողմէ, կը հաստատուէ, սր Փարաճանով ողջ է, նոյնիսկ եթէ իր մօրուքը ձերմկած է ամբողջութեամբ: (Գլխուն

վերեւ կախուած պղտիկ լուսանկարը անուած է ձերտակարման դէպքէն առաջ, երբ գեա սեւ էր մօրուքը):

Թիֆլիսցի այս հայը — իրական անուեով Մարդիս Փարաճանեան — սր մինչեւ իր ձերտակալութիւնը Բիւր կը գտնուէր, այսօր 53 տարեկան է: Մեծ սիրտը մը թանկարժէք աւարկաներու ու հնութիւններու, եւ նոյն ատեն քարացած զրայթներու դէմ ըմբոստացող խառնուածք՝ ան երբեք չլախցաւ լուսանցքի վրայ տարելէ, սրբիներու պէս չխորհեցաւ գրողութիւններէ, ընդհակառակն, ստիթ առաւ, սր ցնցուին պիւրպիւրաաներն ու նախանձորդները, սրմնք յաջողցան լուծել իրենց վրէժը:

Յանկարծօրէն զինք մեծերու կարգին դասող իր երկու Փիլմերը կը կոչուին «Հրեղէմ ձիեր» եւ «Եսամ գայլը», որոնցմէ առաջինը իր օրին (1964) ճշմարիտ յայտնութիւն մը եղաւ ու Մտեւալային բերաւ միջազգային 16 մրցանակներ: Այս Փիլմը



10 Մայիսին կրկին սնույթ պիտի ցուցադրուի Փարիզի մէջ:

Սակայն ոչ ոք դիտէ, թէ ե՞րբ պիտի ցուցադրուի 1968ին պատրաստուած «Սալաթ-նովա կալ ևուալ գոյնը», առնուած՝ 18րդ դարու սուրճած հայ ժողովրդական բանաստեղծի մը գործերէն, ո՞րն բանաստեղծին, որ կը գրէր կովկասեան երեք լեզուներով — վրացերէն, հայերէն եւ սղերէջաներէն:

Թէև Եսթիֆիլիէի կողմէ սնուցման հաստատեցաւ ու վերակազմակերպու, այնուամենայնիւ, «Եսան գայնը»-ի ցուցադրութիւնը արգելուեցաւ Մոսկուայի մէջ, թերևս անո՛ր համար, որ արտակարգ զեղեցկութեամբ օժտուած բանաստեղծական այս սրմունհարին մէջ տեսան սղգայնակներով կան մը դայնը եւ տաին մարտի կան մը հտար:

Կարճ ժամանակ մը առաջ, Փարիզի մէջ զայն ներկայացնելու մտադրութեան կողակցարար՝ Ֆրանսական կառավարութիւնը պարզապէս ձախուցեցաւ և ընդգիծացաւ նայնիակ մասնակի ցուցադրութեան մը, տեղի տալով խորհրդային ճընչումներուն:

«Սալաթ-նովա»ն պիտի նկատուի՞ որեմն մասայութեան զիրկը կամ մարդիկ պիտի ձգեն, որ անիկա մնայ խորհրդային Ֆիլմի արխիւային դանձերս շարքին:

Փոստճանով ուրեմն սղ է:

Իսոյ խորհրդային Ֆիլմարուեստի միութիւնը առկային չէ հազարամ, թէ ե՞րբ աշխատանքի պիտի վերականգնուի...

ԻԿՆԱՅԻՑ ՍԻՆՈՆԻ ՄԱՆԸ

Բնիպցիկ ամսոյն 23ին, Ժընևի մէջ իր մահ-կանացան կերեց իտալացի հռչակաւոր դրոշ Իկ-նացի Սիլոն, որուն մարմինը փոխադրուեցաւ Համ:


Մնած էր 1 Մայիս 1900ին, զիւղացի ընտա-

նիլի մը յարկին տակ: Բնկերային հարցերու լայն բացուած կղերականի մը հաստատած գործընթացին մէջ առանելով՝ Սիլոն 37 տարեկանին կը մտնէ բնկերական կուսակցութեան շարքերը: 1921ին՝ կը խեղ կապերը բնկերական ճեղքի հետ եւ Քուլտիի հետ կը հիմնէ Բուսիոյ համայնակար կուսակցութիւնը: Նոր կուսակցութեան համար Մոսկուայի, Գերմանիայ, Սլովանիայ ու Գրանտայի մէջ լայնամիակ տարեկան թղթագրութեան լայն, 1925ին կը դառնայ զազանիպատի գիտած Իտալիոյ նայն կուսակցութեան օրատուականատու քարտուգար: 1927ին՝ Քուլտիի հետ կը մտնուի Մոսկուայի մէջ գումարուող Քամիներին ժողովներուն, որոնք գտաւարակով Տրոցկին եւ անոր զբոյժները, վերջնականապէս կը հաստատան ստալինականութիւնը: Իկնացի Սիլոն կը լայնաբէ լարոյական ճընչումներով առնուած աքորուումներուն զէմ եւ կ'իյնայ ամբաստանութեան տակ: Երկու տարի տեսող անդրադարձումներէ ետք, կը ստիպուի հետնալ Իտալիայէն ու զազիկ Չուիցերիա եւ, 1931ին, վերջնականապէս կը խեղ կապերը համայնակարութեան հետ, զոր կ'ամբաստանէ իրբեւ յեղափոխութիւնը բրուտակական ալլաներման Ենիպիկոլ երեսոյթ եւ կը մերժէ Իտալիոյ համայնակար կուսակցութեան վրայ իր կամքը պարտադրելու ձգտող Խորհրդային յուսակցութիւնը:

1931ը նայն տանը դրականութեան ճամբան բնարեւու տարի եղաւ Սիլոնի համար: Քանի մը բացասիկ պարագաներէ գտա, ան բոլորովին հեռացաւ քաղաքական ուղղակի պայքարէն ու գրականութեան միջոցով սկսաւ պրոպագանդայի իր



ՆԱՐԵԿԱՑԻՆ՝ ՌՈՒՍԵՐԷՆ



Շարունակելով Նարեկացին ուսու ընթերցողներուն ներկայացնելու 1969ին սկսած մեծ գործը, «Մովհտական գրուց» հրատարակչութիւնը անցեալ տարի ըստ բնծայեց միջնագորտու հանձարեղ բանաստեղծէն աւելի ստուար հատար մը, որ կ'ընդգրկէ «Մատեան»ի 95 գլուխներէն՝ քառասուներկուքը, էջերու հաշուով՝ ամբողջին երկու երրորդէն աւելին:

Ռուսերէն թարգմանութեան հանդիտակաց էջին վրայ ներկայացուած «Մատեան»ի գրաւոր բնագիրին իւրացի օգտադարձումը, ինչպէս նաեւ նկարիչ Ալբերտ Եարալեանի նկարազարգումներն ու հրատարակչներուն ի գործ դրած խնամքը Նարեկացիէն կատարուած ուսուերէն այս թարգմանութեան տուած են տղապահան շքեղ երեսոյթ մը:

Գիրքը կազմած, ծանօթագրած ու անոր յոտաջարանը դրած է Փրոֆ. Լեւոն Մկրտչեան, իսկ գրաւոր բնագիրը հրատարակութեան պատրաստած են բանասիրական զիտաթիւններու թեկնածուներ Ա. Ղազինեան եւ Պ. Խաչատրեան: Անոր վերջին էջերուն գեանդուած են նոյնպէս չարջ հազար տղապացի թարգմանութիւններ, Լեւոն Մկրտչեանի եւ Մ. Գարրինեանի ջանքերով:

Անձկութեամբ կը սպասենք Նարեկացիի այս գործին արձագանգներուն, որոնց յուրը պիտի հաղորդենք ընթերցողին:

Մեր կարգին, պարզ հետաքրքրութեան համար թարգմանուած բնագիրները բաղգասեցինք «Մատեան ողբերգութեան» հատարին երուսապէմի մէկ հրատարակութեան (1936) հետ ու գործանքով տեսանք, որ տղապահան ահապին տարրերութիւններ կան երկուքին միջեւ:

«Թագին»ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ պիտի ներկայացնենք նաեւ այդ տարրերութիւններէն ակնբախ նմոյշներ, հետադնդելու համար վերջին պատկերը «Մատեան»ին, որ սրբաասու գործ է եւ չի կրնար տարրերակներ ընդունիլ...

ԼԻՔԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈՒՄԸ
ՀԱՏԱՎՈՋԱԾ 5 Լ. ՈՍԿԻ

پاکین

مجله شریعی، ادبیة و فنیة علمیة
مدیر المسؤل
السید ارتین کارنیک قزاقچیان

•
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒՆԵՍԻ

•
ԽՐԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳՆԱՆ

Հեռագրային՝ 296898